

Հ. Յ. Գ.
ՄԱՍԼՈՅ ԴԻՐԱՆ

ԴՐՈՇԱԿ

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՁՆԱԿՅՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

1903

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇՆԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՄԱԿԵԳՕՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Չմեռը վրայ հասաւ, և մակեղօնական կռիւը պիտի դարձար առնի: Պիտի ընդհատուի այն դիւցաղնական շարժումը, որի նախաբանն եղաւ անցեալ աշնան գններու Յօնչեվի արշաւանքը Բուլղարիայից և որն այնուհետև ներկայ տարւայ ապրիլ ամսից սկսած՝ շարունակ յուզեց Ցաճկաստանն ու Բուլղարիան, եւրոպական հասարակական կարծիքն ու մեծ պետութիւնները:

Սքանչելի մենամարտ մի բուռն աղքատ ու հարստահարած ժողովրդի և կազմակերպւած, դարերով իշխող վայրագ կառավարութեան միջև: Ինչ կարելի էր զգալ այդ վետմ պատկերի առաջ, եթէ ոչ հիացմունք ու ոգեւորութիւն միայն: Եւ հայերս բոլոր ազգերից աւելի էինք յափշտակուած մակեղօնական պայքարի սուր ելեւէջներով: Հասկանալի է այդ բացի այն հմայքից, որ ներշնչուած է ամէն մի արդար դատի հերոսական պաշտպանութիւնը, ներկայ դէպքում դեր էր խաղում և այն հանգամանքը, որ հարւածները տեղում էին մեր թշնամու բիրտ պարանոցին և մակեղօնացիների յաղթութիւնները տաճիկ կառավարութեան պարտութիւններն էին, նրա ստորացումն ու ջլատումը:

Սակայն դրանով չէ սպառնում մակեղօնական շարժման նշանակութիւնը մեզ համար: Մենք երախտապարտ պիտի լինենք մակեղօնացիներին նաև նրանց միտք կուրծքի մի քանի խրատական կողմերի համար:

Դժար է գտնել մի հայ, որ ամէն-մի յարմար ու ան-յարմար պարագայում, մեր շարժման առաջին օրերից սկսած մինչև այսօր, դառնապէս չգանգատուէր եւրոպական պետութիւնների, ժամանակակից դիւանագիտութեան կամ քաղաքակիրթ ժողովուրդների անտարբերութեան վրայ՝ մեր օրհասական գրութեան նկատմամբ: Ոչ մի տեղից, ոչ մի իրական քայլ, ոչ մի վճռողական միջամտութիւն մեր ընդհարման ամենաստակալի ընդդէմը: Իսկ, — այդպէս է ներկայանում մեզ, ընդհանուր առմամբ, արտաքին աշխարհի վերաբերմունքը դէպի դժբախտ հայկական խնդիրը՝ չնայած մի շարք անցած-դարձած և երբեմն նպաստուոր երևոյթներին: Եւ մենք քարկոծում ու անիծում ենք Եւրոպային, որ իր չոր, նիւթական շահերին ծախւած՝ միշտ պարտազանց գտնեց դէպի մեզ: Արդ՝ եթէ մենք — հետևելով միևնոյն հայացակէտին, որով

պատճառաբանում ենք մեր դատաւճիւր — համեմատելով Եւրոպայի ու հայերի յարաբերութիւնները մի կողմից հայերի ու մակեղօնացիների փոխադարձ յարաբերութիւնները միւս կողմից, պետք է ընդունենք նաև, որ հայերս նոյն սառնասիրտ դիտող դերը խաղացինք մակեղօնական պայքարի միջոցին, ինչ որ դրսի աշխարհը հայկական խաչելութեան դիմաց:

Այսօր փաստ է, որ մակեղօնական շարժումը առաջ խաղաց հազարաւոր դժբարութիւնների միջոց՝ ինքն իրեն միայն ապաւինած: Հայերս, որ աւելի քան ուրիշ ազգ աշխարհի երեսին, խոր պիտի ըմբռնէինք մակեղօնական տառապանքը, մենք, որ գիտէինք՝ թէ ինչ է նշանակում կուրծքերից թոյլին օգնութեան հասնելը, մենք, որ միշտ շեշտել ենք մեր ամենաջերմ համակրութիւնը դէպի մակեղօնացիք և նրանց հետ հրապարակով համերաշխութեան ծանուցումներ ենք արել աշխարհի առջև, — մենք լուռ մնացինք ապստամբ Մակեղօնիայի դիմաց, մենք չնետեցինք կուրծք այն դաշտը, ուր ընդհանուր թշնամու առաջ շարքերով ընկնում էին հերոս մարտիկները, մենք ձեռք չմեկնեցինք մեր զինակիցներին, երբ նրանք ձգնում էին՝ չարչարուած, տանջուած մակեղօնական ժողովրդի բողբոջ իրենց հրացանների որոտով աշխարհին հասցնել: Մենք անշարժ, լուռ մնացինք նրանց արեան հանդէպ, ինչպէս անշարժ են օտարները հայի ծով արեան առջև, ինչպէս լուռ է մեր ցաւագար բուրժուազիան իր հարազատ ժողովրդի արեան դիմաց կամ բուրժուականացած մեր կոսմոպոլիտները նոյնիսկ ահաւոր պայքարների օրերում: Չմոռանանք և այն, որ բացի օգնութիւնից, բացի եղբայրական այն ծառայութիւնից, որ մենք բարոյապէս պարտաւոր էինք ցոյց տալ մակեղօնացիներին, մենք ունէինք և մեր սեփական շահը նրանց հետ միաժամանակ շարժելու համար: Ակնբռե է, որ ոչ ոք, ոչ մի պետութիւն հայերից աւելի չէ շահագրգռուած Ցաճկաստանի պարտութեամբ: Ամէն որ կը համաձայնի նաև, որ հրապարակ գալով մակեղօնացիների հետ միասին, մենք կը գտնէինք կուրծք անհամատ աւելի նպաստուոր պայմաններում, քան որ թշնամու ուժը մեծապէս կը ջլատէր: Ոչ ոք չի հերքի վերջապէս, որ մակեղօնական բողբոջ հետ, որը առաջ պիտի բերէր եւրոպական միջամտութիւն, մեր կռիւը նոյնպէս միակ միջոցն էր՝ մակեղօնական խնդրի հետ կապելու հայկականը: Եւ այնուամենայնիւ՝ հայերս չկարո-

37. ԲԻՐՈՒՅԻ
ԳՐԱԳԱՐԱՆ
A. F. BUREAU
LIBRARY

դացանք հետեւել ոչ միայն բարոյական, այլև սեփական շահերի, սեփական հաշիւներին թելագորութիւններին . . .

Իհարկէ, մեղ չէր պակասում ցանկութիւնը. — մեղ պակասեց կարելիութիւնը: Առէի դուրս գալը օրերի և ամիսների գործ չէ: Մակեդոնական դրօշի հետ միաժամանակ հայկականը պարզելու համար՝ մեզ հարկաւոր էր որոշուած և պատրաստութիւն, որը ժամանակին չներկայացաւ, — ահա մեր ձեռնպահութեան գաղտնիքը: Սակայն այդպէս կարող է արդարանալ յեղափոխական բանակը, բայց ոչ հայ հասարակութիւնը, որը — չնայելով իրեն ուղղած մշտական քարոզներին ու յորդորներին, չնայելով յեղափոխականների տարած հերոսական կռիւներին ու անսովոր ճիգերին թէ երկրում, թէ երկրից դուրս, թէ հայկական գաղութներում և թէ Աւրօպայում, չնայելով նոյնպէս պատմութեան և աշխարհիս բոլոր անկիւններից աչքի զարնող ժամանակակից կեանքի դասերին, — ստանեակ տարիների ընթացքում չգրկեց դժբախտ ժողովրդի ազատագրութեան դատը: Եւ այդպէս՝ շնորհիւ մեր անվերջ յապաղումներին, անտարբերութեան ու սարկամտութեան, մենք տուժել ենք շատ անգամ, պիտի տուժենք երևի դեռ էլի երկար: Ռուսական մի առած ասում է, որ ռուս գեղացին երեսը չի խաչակնքիլ (այսինքն Աստուծոյ չի մտաբերիլ) մինչև երկինքը չորոտայ: Հայերս դրանից էլ հետու ենք գնացել մէք այն ժամանակ էլ չենք խաչակնքում երեսներս, երբ երկինք ու երկիր միասին են որոտում: Շատ էլ չգարմաննք ուրեմն ոչ մեր թշուառ վիճակի, ոչ էլ ուրիշների անտարբերութեան վրայ երբ մենք ինքներս անտարբեր ենք դէպի մեղ, առնւազը՝ անյարմար է չափազանց պահանջուող լինել ուրիշների վերաբերմամբ: Մակեդոնացիք տարան իրենց կուրը առանց նոյնիսկ հայերի օգնութեան — տարան՝ յենւած իրենց անընկճելի, հերոսական տոկոնութեան վրայ, որով նրանք հիացրին աշխարհը և արտակարգ փայլ տւին իրենց նւիրական դատին: Իւրացնենք նրանց ընթացքը, հետեւենք նրանց օրինակին, որպէս զի գոնէ ապագայում կարողանանք մեղ ազատել այն դաւաճան դերից մեր սեփական շահերի ու զինակից եղբայրների վերաբերմամբ, որից աւելին ժամանակակից պատմութիւնը անարժան գտաւ տալու հայերիս:

Հին չէ մակեդոնական շարժումը: Նա զորագացաւ մեր աչքի առաջ և շատ աւելի կրտսեր է, քան հայկականը:

Առաջին մակեդոնական յեղափոխական կազմակերպութիւնը ծնունդ առաւ 1894 թւին բուն երկրում՝ գլուխ ունենալով մի «Անտրոնական կոմիտէ» Անցան սակայն մի քանի ամիսներ — և ահա դրսում, Բուլղարիայի մէջ գտնուող մակեդոնացի հայրենասէրները, անհնարին տեսնելով ներսում ղեկավարել գործը, նոյն 94 թւի վերջին հիմնեցին Սօֆիայում նոր կազմակերպութիւն «Մակեդոնական Գերագոյն կոմիտէի» վարչութեամբ: Ահաւեց մրցում «Ներքին» և «Արտաքին» կազմակերպութիւնների միջև, իր բոլոր ցաւալի հետեւանքներով: Միւսնոյն ժամանակ իշխան

Ֆերդինանդ՝ կամենալով սիրաշահել Ռուսաստանին և նրանից ևս իշխան ճանաչելը, խոստացաւ ցարի կառավարութեան՝ «Բալկանեան թերակղզում հնարաւոր բարգաւազութիւնների առաջն առնել» և սկսեց հարւածել մակեդոնական գործը Բուլղարիայում: Այդ կրկնակի արգելքների դիմաց՝ Սօֆիայում հաստատուած «Գերագոյն կոմիտէն» հազիւ կարողացաւ 1895 թւին մի քանի խմբեր երկիր մտցնել և այնուհետև տարիների ընթացքում մատնեց անգործութեան: Մինչ այդ վիճակի մէջ էր գործը Բուլղարիայում, «Ներքին կազմակերպութիւնը» անպատրաստ և անզէն ժողովրդի մէջ, հազար ու մի դժւարութիւններով ու զրկանքներով՝ առաջ էր տանում երկրի յեղափոխական պրօպագանդը: Այդպէս շարունակեց մինչև 1899 թիւը, երբ կառավարութեան ղեկը Բուլղարիայում անցաւ ռուսատեաց, ազատամիտ կուսակցութեան ձեռքը, որ համակիր էր մակեդոնական շարժման: «Գերագոյն կոմիտէն» նորից կեանք առաւ և իր նախագահ Սարաֆօվի հաշտարար ուղղութեան շնորհիւ՝ «Ներքին կազմակերպութեան» հետ համաձայնութեան յանգեց: Ըստ երևոյթի, դրանով պիտի վերանային մակեդոնական գործի շուրջը ծագած երկպառակութիւնները, բայց ահա 1900 թւին ընկնում է բուլղարական ազատամիտ մինիստրութիւնը՝ տեղ տալով պահպանողական ռուսօֆիլներին: Սարաֆօվ և իր ընկեր Գաւիգով 1901 թւի փարնանը բանտարկւում են՝ մեղադրելով ըուժանական մի լրտեսի սպանութեան մէջ, ուրիշները քչում են Բուլղարիայից կամ Սօֆիայից, և մակեդոնական գործիչների մէջ հանդէս են փալիս տարբեր ուղղութիւններ: Գրանցից ոմանք անհրաժեշտ են գտնում յարմարել իշխան Ֆերդինանդի քաղաքականութեան, ուրիշները՝ ոչ: Արկին պայքար, կրկին պառակտում, և այս անգամ՝ արգէն դրսի գործիչների մէջ: Յաղթութիւնը տանում են Սարաֆօվի հակառակորդները և «Գերագոյն կոմիտէում» մենք տեսնում ենք գրագէտ Միխայլօվսկուն ու գեներալ Յօնչեվին, իբրև կառավարութեան կողմնակիցների: Խրախուսուած այս աջողութիւնից՝ Յօնչեվի-Միխայլօվսկու կոմիտէն վճռում է հարւածել նաև ներքին կազմակերպութիւնը և ամբողջ գործը իր ձեռքում կենտրոնացնել: Այդ նպատակով գեներալ Յօնչեվի՝ իր մի խումբ կողմնակիցների գլուխ անցած՝ 1901 թւի աշնան մտնում է երկիր: Մրցման շարժանիթներից թելագրւած այս արշաւանքը, սակայն, ունեցաւ ոչ այն արդիւնքը, որ ակընկալում էր «Գերագոյն կոմիտէն» . . .

Յօնչեվի արշաւանքին հետեւեցին՝ 901 թւի դեկտեմբերին ռուսաց մինիստր Լամադօրֆի ճանապարհորդութիւնը դէպի Սօֆիա ու ձիւննաւ 903 թւի փետրւարին աւսարօռուսական դիմուճները թիւրքիային: Այդ միջամտութեամբ խնդիրը ստացաւ այնպիսի մի կենդանութիւն, որ «Գերագոյն կոմիտէի» նախագահ Միխայլօվսկին նոյնիսկ կարելի համարեց հեռանալ յեղափոխական ասպարէզից՝ յայտարարելով, որ այնուհետև գործը պէտք է լծողնել

գիւանագիտութեան: Բայց աւստրո-ուսական պահանջները՝ շեշտելով երկիրը խաղաղացնելու անհրաժեշտութեան վրայ, ձեռնարկելիք բարեկարգութիւնները թողնում էին իրեն Ցաճկաստանին՝ առանց երաշխաւորելու արտաքին որևէ հսկողութիւն: Պարզ էր, որ այդ միջոցը անկարող էր բուժել երկրի ցաւերը, և գործի բարձրութեան վրայ կանգնած գիտակից յեղափոխականները վճռեցին շարունակել կռիւր: «Ներքին կազմակերպութիւնը՝ որոշեց իր ամբողջ կազմով ոտի կանգնել: Մարտի 5-ին երկիր անցաւ Բօրիս Սարաֆօվի, որ մինչև այդ ժամանակ Եւրոպայում զբաղւած էր մի շարք ձեռնարկների նախապատրաստական հոգսերով: Աերջապէս գործին յարեցին նաև գեներալ Յօնչեվի երկրում թողած «խոտնանտները» իրենց խմբերով: Սկսեց կռիւր իր բոլոր փայլուն արտայայտութիւններով: Սալունիկ, Կաստորիս, Մօնաստիր, Կրուշէվօ, Պրիլէպ, Ռազլըդ, Ադրիանօպօլիս, — ահա այն տեղերն ու վիլայէթները, որոնց տարածութեան վրայ ընթացաւ կռիւր: Տպաւորութիւնը այնքան մեծ էր, որ Մակեդոնիան ճանաչեց ամբողջ աշխարհում իբր պատերազմող կողմ: Ռուսաստանը և Աւստրիան ստիպեցին վերստին միջամտել և անցեալ հոկտեմբերի 22-ին ներկայացրին Բարձր Գրան պահանջների մի աւելի խիստ յայտագիր, որի համաձայն երկու պետութիւնները իրենց կողմից պիտի ունենան բարենորոգումների վրայ անմիջապէս հսկող ներկայացուցիչներ և բացի դրանից՝ ոստիկանութեան ու ժանդարմերիայի վերակազմումը պիտի յանձնւի եւրոպացի մի գեներալի: Դա յեղափոխականների յաղթանակն էր:

Այս փոքրիկ պատմութիւնից մենք տեսնում ենք, որ մակեդոնական շարժումը իր զարգացման մէջ զերծ չէ եղել անհամաձայնութիւններից, ներքին խռովութիւններից և տարբեր ուղղութիւններից: «Ներքին» և «Արտաքին» կազմակերպութիւններ, Սարաֆօվի և Յօնչեվի կուսակցութիւններ, «Արտաքին կազմակերպութեան» մէջ՝ մինչև անցեալ տարի միշտ իրար հակառակ, իրարից բաժան — ահա այդ կարգի խռուր երևոյթները: Բայց դրա հետ միասին մենք տեսանք նաև, որ չնայելով եղած հակառակութիւններին ու պառակտումներին, ներկայ տարւայ ընթացքում բոլոր երեք բանակներն էլ պատում էին միակ խնդրի շուրջ և դրսի աշխարհի առաջն էին բերում ոչ թէ իրենց անհամաձայնութիւններն ու տարբեր ուղղութիւնները, այլ միմիայն իրենց գործերը՝ բոլորը նւիրւած մի ընդհանուր նպատակի:

Այդպէս է կեանքի, գործի, գաղափարի ամենակարող ուժը: Եթէ նա չէ աջողում այս կամ այն շարժման ընթացքում ի մի գումարել միևնոյն նպատակին ձգտող զանազան խմբերը, պատկերասրահական ընդհանրական ներանցից այն, ինչ կարող է տալ իւրաքանչիւրը: Հարկաւոր է միայն, որ դրանք մնան միշտ գործի հիմնական հողի վրայ: Այո՛, կուսակցական, խմբական ձգտումները

միշտ հալւում են կուրի հրեղէն բովի մէջ, եթէ դրանք չեն շեղւում իրենց էական կոչումից:

Բայց վայ այն ժողովուրդին, որի աչքերը այնքան կը մթազնեն, որ [անկարող կը լինի զանազանել իրական գործի սահմանները՝ ստոր կըքերի և փոքրոգի ինտրիգների իսաւար աշխարհից: Այն ժամանակ նա կ'արտագրի վատառողջ անձունի հոսանքներ միայն, որոնցից ինքը՝ հզօր կեանքն անգամ անկարող կը լինի ուէ բան պոկել: Ինչ կարելի է վերցնել այնտեղից, ուր դրական ոչինչ չկայ. . . Եթէ իրերի ընթացքը իր տարերային ուժով կարողացաւ վերջիվերջոյ մի դրական յայտարարի վերածել մակեդոնական կուսակցութիւնների իրար հակառակ ուժերը, դա տեղի ունեցաւ շնորհիւ այն միակ պայմանի, որ այդ կուսակցութիւնները ուրիշ միջոց ու ասպարէզ չ'որոնեցին իրենց մրցակցութեան համար, բայց եթէ միայն կուրի և ժողովուրդի կազմակերպութեան ասպարէզը բռնեց իր կրօնը: Այնտեղ վերաւորեց գեներալ Յօնչեվ իր ընտրութիւնից 1¹/₂ տարի չ'անցած: Այնտեղ էին կենտրոնացել «Գերագոյն Կոմիտէի» բոլոր տրամադրելի ուժերը: Այնտեղ կուրից 8 ամսայ ընթացքում՝ երկրի մէջ ցրւած իր համախոհների հազարն բանակով՝ Բօրիս Սարաֆօվի: Այնտեղ էին գործադրել Սարաֆօվի ձեռք բերած դրամական բոլոր միջոցները: Այնտեղ էր, վերջապէս, իր հիմնելու առաջին օրից «Ներքին կազմակերպութիւնը»:

Դառնալով մեր իրականութեան, պէտք է խոստովանենք, որ ճիշտ է, մեզ հայերիս, պակասում է, այո՛, շատ է պակասում բարոյական հոտառութիւն՝ կեղտը մաքուրից, պոռոտախօսութիւնը լուրջ աշխարհայեացքից, դերասանութիւնը անձնւիրութիւնից զանազանելու համար. ճշմարիտ է, երբեմն յուսահատութեան կարելի է հասնել, տեսնելով թէ ինչպէս մեր մէջ մինչև այժմ անորոշ առաձգական են ճշմարիտ յեղափոխական գաղափարի և դրական գործունէութեան հասկացողութիւնները. իրաւ է, չէ կարելի առանց խորին գարշաքի դիտել թէ ինչպէս զանազան կարգի խրտուիլակներ, կեղծ ու լպիրշ կարիքներստներ, յանուն գործի, շարունակ անբարոյականացնում են ժողովուրդը, — բայց մենք յոռետես չենք և կարծում ենք, որ այդ չէ կարող երկար տևել: Խեղճ, տանջւած, իր երկար պատմութեան ընթացքում երբէք պայծառ օր չտեսած, յուսատու ձայն ոչ մի տեղից չլսած, ամէն բանի կարօտ, ամէն բանի ծարաւ հայ ժողովուրդի հոգեբանութիւնն է այդ, որ այսօր առատօրէն հարստահարւում է իր ապօրինի զաւակների կողմից: Կը գայ սակայն օրը, երբ կը փոխուի ժողովուրդի հոգեբանութիւնը, երբ նա կը սովորի պահանջել ինքն ինքն: Այն ժամանակ այլևս դժուար կը լինի գոհացում տալ նրան կեղծ, անբովանդակ և ոչ մի բանի չպարտաւորեցնող խօսքերով: Այն ժամանակ այլևս անկարելի կը լինի նոյնիսկ ամենահամարձակ ճիղճիտների համար՝ ձուռմաբանել յանուն գործի, — ձուռմաբանել որպէս զի իրենց տրամադրելի ուժերից ու միջոցներից ¹/₁₀ մասն անգամ երկիր չմտնի, ժողովուրդի

կազմակերպութեան, նրան զինելուն կամ այս ու այն դրական ձեռնարկներին չյատկացել: Աշխատենք փութացնել այդ բաղձալի օրը և չկորցնենք մեր յոյսը, որ այսօր այնքան հիասթափութիւն ու զզւանք պատճառող այլևայլ խմբակները ժամանակի ընթացքում վերջապէս մի կողմ կը շարտուեն՝ թողնելով ասպարիզում իրենց հետևողների առողջ ու անվթար մասերը միայն, որոնցից անշուշտ կ'օգտուի գործը, որոնց ուժերը կը կլանի, կը յափշտակի կեանքի անդիմադրելի յորձանքը:

Տարակոյս չկայ, որ մակերօնական խնդիրը այսօր դեռ լուծուած չէ կարելի համարել: Աւստի-ուսական համաձայնութեան նոր պահանջները բաւարարութիւն չեն տալիս թէ երկրում և թէ դրսում: Հող գտած ոչ մի առողջ հոսանքի, և այդ պատճառով ամենաշատը՝ դրանք կարող են միայն մի առժամանակ ընդհատել գործը, մինչև որ ժողովուրդը նոր ուժ ստանալով՝ կրկին դաշոյնը ձեռք կ'առնի: Սակայն ինչ և լինի, ակներև է, որ շարժումը միանգամայն կանոնաւոր ճանապարհի վրայ է և մակերօնական հարցը այսօր միջալգային ամենատար խնդիրն է մերձաւոր Արևելքում:

Մեզ մնում է միայն նախանձել մակերօնացիներին, ինչպէս մի ժամանակ նրանք էին նախանձում հայերիս:

Չենք ուզում ուրանալ, որ մակերօնացիները ունեն որոշ առաւելութիւններ մեզ հետ-համեմատած: Մակերօնիան կալած է Բուլղարիային, ուր ընդհանուր առմամբ մակերօնական խնդիրը ազատ պրօպագանդի աւարկայ է: Բուլղար ժողովուրդը և զօրքը համարեա ամբողջովին համակրում են իրենց եղբայրների շարժման: Եղել են տարիներ, ինչպէս Ռադօւլաֆովի մինիստրութեան ժամանակ, երբ կառավարութիւնը նոյնիսկ աջակցել է յեղափոխական կազմակերպութիւններին: Աերջապէս, բուլղարներ և մակերօնացիք ունեն անսահման հաւատ դէպի իրենց շարժումը. Բուլղարիայի ազատութիւնը՝ կուով

ձեռք բերուած՝ և Արևելեան Ռուսիայի միացումը Բուլղարիային — դրանք փաստեր են, որ տեղի ունեցան մի սերնդի աչքի առաջ և այդ պատճառով համոզումը վերջնական յաղթանակի մասին ընդհանուր է մակերօնական ժողովուրդի մէջ: Բայց և այնպէս՝ ի նկատի ունենալով մակերօնական շարժման նորութիւնը, ժողովուրդի աղքատութիւնն ու տգիտութիւնը, յոյն և սերբ ազգաբնակութիւնների թշնամութիւնը դէպի բուլղար տարրը և տաճիկ կառավարութեան ուժն ու կրկնակի հսկողութիւնը եւրօպական վիլայէթներում, — կարծում ենք, որ սխալ կը լինէր վերագրել յեղափոխականների աջողութիւնը միմիայն վերոյիշեալ առաւելութիւններին:

Միևնոյն պայմաններում, մեզ թւում է, կարելի էր՝ հետևելով կուլի ուրիշ տաք տիկի, զրկել շարժումը իր տեղական բնաւորութիւնից, որ այնքան մեծ նշանակութիւն ունեցաւ խնդրի համար:

Երկրում, բուն ժողովուրդի մէջ, լայն, բազմակողմանի ծրագրով տարած կազմակերպութիւնը և գինասկարժութիւնը միացած ցուցական բնաւորութիւն կրող մի շարք ձեռնարկների հետ՝ անտարակոյս պայմանաւորեցին կուլի յարատեւութիւնը: Ահա որ ընդհարումներ մեծաքանակ զօրքերի և որոշ վայրերում կենտրոնացած յեղափոխական բանակների միջև զինուորական պահանջների և պահեստների, տաճիկական գիւղերի ու մզկիթների ոչնչացումն առանձին խմբերի ձեռքով ամբողջ քաղաքների, երկաթուղիների, նաւերի, կայարանների ու կամուրջների աւերումն էր — համակերօնական տաք տիկի արտայայտութիւնները, որ այնքան զօրաւոր կերպով անդրադարձան դրսի աշխարհի վրայ և տիեզերական հակամարտ շահերի ու անվերջ բարդութիւնների մէջ կարողացան քառօր դարի փոշուտակից լոյս աշխարհ հանել Բերլինի դաշնագրի 23-րդ յօդուածը և հոգի ու մարմին ներշնչել նրան:

Հրահանգիչ օրինակ:

Բ Ա Ս Ե Ն Ի Ը Ն Դ Հ Ա Ր Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

«Դրօշակի»-ի անցեալ համարում մենք տպել էինք Պարսկաստանից ստացւած մի հեռագիր՝ «Դաշնակցութեան» խմբի վերջին ընդհարման եւ կոխների մասին: Ներքեւ բերում ենք այդ դէպքին վերաբերեալ տեղեկութիւնները՝ ստացւած զանազան վայրերից:

Կարս, 23 սեպտեմբեր 1903

Սեպտեմբերի 17-ին խումբը անցնում է սահմանը ապահով կերպով, մօտ 90 հոգով: Մի քանի վերստ դէպի ներս՝ հովիւները նկատում են և մինչև անգամ կրակում, բայց տղերքը չեն պատասխանում և անյայտանում են: Նորից պատահում են հովիւների և նորից աղաւտում: Աերջապէս գիշերւայ ժամը 3-ին անցնում են Արաքսը: Այստեղ խմբապետը 19 մարդով բաժանւում և առաջ է գնում Իւզվերանի մէջ՝ տեղ պատրաստելու. մնացածները, Նիվրուզի առաջնորդութեամբ, կամաց-կամաց առաջ են շարժւում:

Հանապարհին 13 հոգի յոգնում են և Սլզութա ՍԵՐՈՒՄԻ հետ (հայր իր երկու որդիներով կուլի եկած) մնում են Արաքսի ափին: Դեռ լոյսը չբացւած՝ վերջիններս դէպքի են բռնուում և հերոսաբար կուռում են մինչև ցերեկայ ժամի 10-ը: Նիվրուզի առաջնորդութեամբ գնացող խումբը, նոյնպէս պատահում է մի թիւրքի որը անցնում է եղել նրանց մօտից. դրան կանչում են իրենց մօտ և տեղեկութիւններ հարցնում: Թիւրքը պատասխանում է, թէ ինքը լսելով, որ կուլի կայ իրենց աշխրթների մէջ, եկել է տեղեկութիւններ հաւաքելու: Տղերքը իսկոյն նրա ձեռները կապում են: Թիւրքը

աղաչում է բայց թողնել և չսպանել իրեն. մերոնք հասկացնում են, որ իրենք չար մարդիկ չեն, որ խաղաղ ժողովրդի հետ գործ չունեն և չեն, և պահանջում են, որ նա միայն ճանապարհ ցոյց տայ իրենց դէպի խնուս:

Թիւրքը առաջնորդում է դէպի դիրքեր և, զգուշացնելով զինւորներից ու քրդերից, ճանապարհ է ցոյց տալիս: Մտաւորապէս օրւայ ժամը 11-ին (մինչ այդ՝ դրանք նկատւած չեն լինում և չեն էլ կուտում) յանկարծ վրայ են հասնում վեց զինւած ձիաւոր քրդեր: Նեվրուզի մօտ եղած տղերքը կրակ են անում, քրդերից երեքը ընկնում են, իսկ երեքը փախչելով՝ հափար են կանչում: Արիւը սկսում է տարանալ: Խմբից 27 հոգի բաժանւում են՝ անելի բարձր դիրքերը բռնելու համար, բայց այնտեղ ջուր չլինելու պատճառով՝ կրկին իջնում են ներքև և լաւ դիրքերից զրկւում:

Ներքև իջնելու ժամանակ զարկւում են 7 տղայ, որոնց մէջն է Բագուից եկած Ֆէլզէր ԶԷԱՆԸ: Մնացածները իջնում են, դաշտի վրայ դիրք գրաւում և կուտում մինչև գիշերւայ ժամը 12-ը: Այստեղ ի միջի այլոց, զարկւում է դրօշակակիրը, և երբ մի ուրիշը գնում է դրօշակը փրկելու՝ նրան էլ են զարկում: Երկու ընկերները փաթաթւում են դրօշի տակ և այնպէս մնում...

Նեվրուզի և իր հետ եղած մարդկանց մասին լուր չկայ: ՍԵՐՈՒԲԸ 60 տարեկան մի ծերունի, զերկու լեռով իւր երկու տղաներից, վճռում է, ինչպէս և լինի, իր մօտ եղած Ֆէդայիներով առաջ երթալ... «Մենք տաճկահայերս — ասում է նա — ինչ գնով լինի, առաջ պիտի երթանք: Ռուսաստանցիք մեր երեսը չպիտի տեսնեն այլևս: բաւական է, որքան փախանք նրանց մօտ»:

Ղերկ ասացի, որ հետևակների խմբապետը 19 հոգով գնում է Խզվերան տեղ պատրաստելու: Հասնում են գիւղ, բայց գիւղացիք վախենալով կառավարութեան վրէժնեղբուրութիւնից, չեն ընդունում նրանց: Խուժքը ըստիպած է լինում անցնել Բոցիկի լեռները:

Անցնելով ձիաւորներին: Սրանք իրենց գծով ապահովաբար հասնում են Գոմաձոր և անցնում են դէպի Բոցիկ լեռները՝ դիրք գրաւելու: Հասնելով փոքրիկ Բոցիկ, հանդիպում են մեր տղաներին, նշաններով իմանում են, որ մերոնք են, միանում են և դիմում դէպի մեծ Բոցիկ: Բարձրանալու ժամանակ, դժբախտաբար, նրանք նկատւում են շրջակայ թիւրք և քիւրդ գիւղերից: Ախուր է թիւրքական վտանգալից հափարը... և ապա կատաղի կուր... Արւում են գիշերը և միւս օրը շարունակ, առանց զոհ տալու:

Երեք ամբողջ օր հանգիստ չառած, համարեա ուժասպառ, վճռում են ինչ գնով էլ լինի՝ մտնել մի հայկական գիւղ, մի քիչ հանգստանալ և ապա կամ առաջ երթալ կամ նոր ոյժերով կուտել... Առանց նոճ տալու վերադառնում են Գոմաձոր: Այստեղ, դժբախտաբար, շուտով իմացւում է խմբի ներկայութիւնը և սկսւում է նոր հափար. գալիս են ահագին քանակութեամբ զօրքեր ու քրդեր: Տեսնելով, որ հանգստանալ չէ յաղդւում, տղաները դիրք են գրաւում գիւղի որոշ տեղերում, դրօշակը պարզում են գիւղի մէջտեղ և «Մեր Հայրենիքով» բայց անում կուր... Թուրք կառավարութիւնը լարում է իր ամբողջ ուժը, զօրք է կանչում Երզրուցից, Գալի-Բաբայից, Ղաբա-քիլիսայից և այլն. նա չի մտնում և թնդանօթներ բերել տալ. տասնեակ անգամներ թնդանօթ են

արձակում, բայց ոչ մի հատը նպատակին չէ հասնում: Տղաները՝ ամբողջ ցերեկը կուտելով տալիս են միայն մէկ զոհ — Բագուից եկած ՆԻՍՈՒԸ: Թշնամու ջարդը մեծ է: Մերոնք խլում են թշնամու ձեռքից բազմաթիւ մաուզէր հրացաններ, բայց սեսնելով, որ փամփուշտների մի օրւայ պաշար է մնացել և առաջ գընալու հնարաւորութիւն չկայ, որոշում են վերադառնալ Ռուսաստան, կրկին նոր պաշարով դառնալու յուտով (ընդամենը 6 ժամւայ ճանապարհ պիտի գընային): Թշնամու ձեռքից խլում են 19 ձի, տալիս են հետևակ տղաներին և ապա 70 մարդով ուրախ ու զւարթ վերադառնալու պատրաստւում: Դժբախտաբար, սահմանից մօտ մի ժամ հեռաւորութեան վրայ կրկին բռնւում են կուր. մի մասը — 14 հոգի, Զալլա դի առաջն օր դուր թեւամ — ձողպրում ու հասնում են առևտայ սահմանին, բայց սահմանը անցնելուց յետոյ 10 հոգի Ստահան բռնւում են և բերւում Ղարաղուրուտ: Գրանց մօտ լինում է 8 հատ մաուզէր հրացան և 7 հատ քրդի ձիաներ: Խմբի մնացած մասերը ուղղւում են դէպի ուրիշ կողմեր:

Ռուսական սահմանապահ զօրքի հրամանատարին ուղարկել են թիւրքական Ղարա-քիլիսե տեղեկութիւն բերելու: Թիւրք հրամանատարը դժգոհութիւն է յայտնել, որ ռուսները սահմանը կանոնաւոր չեն պահում, որ 600 Ֆէդայիներ անցել են, ահագին կոտորած ու աւերած առաջ բերել: Իրենց ասելով՝ 400 մարդ խուժանից ու զինւորներից է ընկել. սպանել է մի հազարապետ, մի գայմազամ, 3 օֆիցեր, 5 դարաբաշի և սահմանապիտի յայտնի Ռաշիդ փաշայի մեծ որդին, որ քիւրդ կատաղի ցեղապետներից էր:

* * *

Երզրում, 21 հոկտեմբեր

Օրւայ խօսակցութիւնը այստեղ Բասենի կուրն է: Դէպքը կը պատահի Գոմաձորի և Խզվերանի մօտ: Տղայքը իրենց խոհեմ ընթացքով իրաւամբ հրաշքներ կը գործեն: Երբ կը տեսնեն զօրքին մօտենալը, շուտով իրենց համար դիրքեր կը բռնեն լեռներուն վրայ և կը սկսին նախ քիւրդերը — որոնք նախալարձակ գունդը կը կազմեն այդպիսի պարագաներուն — և յետոյ զօրքերը իրարու ետեւէ ջարդել: Երզրումէն նոր զօրքեր զրկւեցան, իրենց հետ ունենալով քանի մը հատ թնդանօթ: Զօրաց հրամանատար Թէֆիկ փաշան, երբ կը տեսնէ իր զօրքերուն կոտորածը և միւսնոյն ժամանակ խուժք մը մարդոց այդչափ զօրքով բան մը չկրցած ընել՝ կը ղայրանայ և առանց խորհելու գիւղերուն վրայ թնդանօթ արձակել կուտայ: 61 ռուժք կը նետուի առանց մէկ հատը պայթելու. միայն Գոմաձորի եկեղեցու մէկ կողմը կը փլի: Գոհ չի մնար ասով. հայ տղամարդիկը կիններէն զատել կուտայ, որ հրացանի բռնէ, բայց բարեբախտաբար իր օգնական ԱՏմէդ փաշան վրայ կը հասնի և կը ցուցնէ, թէ ինչ մեծ պատասխանատուութիւն պիտի ծանրանայ իր վրայ և թէ ինքը անգէն ժողովրդին հետ գործ չունի, մինչդեռ բուն թշնամին դիմացն է:

Տղայք դիւցազնաբար կուտելով յաղթական դուրս կուգան: Մերոնց կորուստը կը հասնի 36 հոգու, չհաշւած 9 հոգի, որ գերի կը բռնուին Ղերջիներիս մէջ են ղարաբաղի Մ Ե Լ Ի ք ք ք, ղարսեցի Նիկողայոսը և գանձակեցի Ա Լ Ե ք ս անը, որ հաւանականօրէն կը յանձնուին

ուուս կառավարութեան: Թշնամիէն զո՛հ են գնացած 200 քիւրդ, որոնց մէջն են նաև քանի մը քիւրդ ցեղապետներ և 150-էն աւելի զօրք, ինչպէս նաև հազարապետ մը և քանի մը հարիւրապետներ: Թշնամու կորուստի այդ թիւը, որ կը քաղենք քիւրդէ մը, շատ հաւանական կը թւի: Ֆէդայիներու խուճարը, չնայած իր թւի փոքրութեան, մեծ սարսափ թողուց տաճկաց վրայ թէ Բասեն և թէ Էրզրում: Քաղաքիս մէջ խիստ հսկողութիւն կայ: Ամբողջ զօրքը շարժման մէջ է. այստեղի զինւորները կը ղեկեն Մուշ կամ Բասեն և նորեր կը բերեն Երզնկայէն:

* * *

Բասեն, 25 հոկտեմբեր

Հայ յեղափոխական դրօշակը ծածանւեց Բասենի բարձունքների վրայ ևս:

Չիաւոր ու հետևակ հայդուկային խմբերը խրոխտ առաջ էին ընթացում՝ ամեն մի արգելք ոտքի տակ առած, երբ թշնամուց նկատելով՝ ստիպւեցին կուռի բռնելը:

Մեր կորուստը փոքր չէ, բայց տաճիկն ու զինւորը, քիւրդն ու համրիկէն, չէրբէզն ու մուհաջիր՝ տեսան հայ

յեղափոխականի կրակը... Այսօր Բասենում օր ու գիշեր վերաւոր զօրքերին սայլերով քաշքշում են Գալի-Բաւբայից Հասան-Ղալա ու Հասան-Ղալայից դէպի Կարին: Սպանել են բազմաթիւ զինւորներ և 150-ից աւելի քիւրդ, չէրբէզ և էն: Վերաւորակների թիւը նոյնպէս չափազանց մեծ է: Իսկ հայդուկներից զոհւել են 34 և ձերբակալուել են 11 հոգի: Զօրքերից մեր խմբերը կըլեն բազմաթիւ ձիաներ և բեռներով ուղարկուելը: Ձերբակալուած ընկերներից մի քանիսը գտնուում էին Հասան-Ղալայի բանտում, բայց այժմ փոխադրուել են Կարին: Լուր առանք, որ նրանցից մէկը՝ իր ստացած վէրքերից վախճանուել է և թաղուել Կարինում շուք ու հանդիսով: Ամէն տեղ մահացողների մէջ այժմ խօսում են այդ ընդհարման մասին և երբեմն մեծ երկիւղով: «Չինի՛ թէ էլի հավար լսւի՛ թէ Ֆէդային անցաւ», լսում ես մէկից. «Հեռու, հեռու թող լինի մեզանից այդ աւերիչ կրակը», ասում է թիւրք պաշտօնեան և աչքը փակում. «Թող կործանւի այսպիսի կառավարութիւն. ո՛չ հանգիստ ունենք, ո՛չ դադար», զայրացմամբ բացականչում է խաղաղ միւսիւրմանը...

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Յ Ո Յ Յ Ե Ր Կ Ո Վ Կ Ա Ս Ո Ւ Խ Մ

XIV. Շ Ո Ւ Շ Ի

Շուշում կալածների գրաւումը նշանակած էր սեպտեմբերի 10ին, երբ պիտի գար նաև նահանգապետը՝ անձամբ ղեկավարելու Յափշտակող Յանձնաժողովի անելիքները և ժողովուրդին ա՛հ ու սարսափ ներշնչելու համար: Բայց՝ մտածելով, որ քանի ուշանայ գործը՝ հայերը այնքան աւելի կը պատրաստեն դիմադրութեան, սեպտեմբերի 8-ին նահանգապետ արգէն Շուշի էր:

Լցնելով քաղաքը ահաբեկ զինւորական ուժով, նահանգապետ Լուցաու այդ օրը հրաւիրեց իր մօտ քաղաքի ակնաւոր հայերին և բացատրեց նրանց իր գալու նպատակը. «Յունիսի 12-ի կարգադրութիւնը իրագործելու համար պետական Յանձնաժողովը վաղը պիտի սկսէ իր գործը: Լսել եմ սակայն, որ հայերը ուզում են հակառակել կալածների գրաւման: Այդ առթիւ ահա յայտնում եմ, որ հրահանգ ունեմ բոլոր հայերին կոտորելու, եթէ անհնազանդութեան ունենան ցոյց տրել: Խորհուրդ եմ տալիս ձեզ՝ ունենալ դիմադրութեան առաջը նախօրոք առնել»:

Միւս օրը պ. Լուցաու Յափշտակող Յանձնաժողովի հետ շրջապատած բազմաթիւ սարաժնիկներով ու կողակներով ամենքն էլ դողդողալով յուզւած՝ դիմեցին դէպի հայոց կօնսիստորիան: Այստեղ, դեռ ներս չմտած, կովկասեան Կէսէր-Գալիցիին յետևեց՝ ու «հեռատես» կամակատարը պատուիրեց նախ փորել կօնսիստորիայի շինութեան շուրջը, որովհետև «տեղեկութիւն էր ստացել», իբր թէ հայերը այնտեղ ուժանակ են դրել և մտադիր են ամբողջ Յանձնաժողովը Լուցաուի հետ միասին՝ օդը ցնդեցնելը: Աշխատանքը սակայն իզուր անցաւ. ոչ մի տեղ ոչինչ չկար: Կեղծ, յիմար, վախկոտ ու բնականաբար կասկածոտ կառավարութիւնը միշտ այդպէս, միշտ «ստացւած տեղեկութիւնների» համաձայն է գործում: Պատերի

շուրջը փորեցին, որովհետև Լուցաու «տեղեկութիւն էր ստացել», որ հայերը... Եւ: Ներքին գործոց մինիստրութիւնը և յետոյ կայսրը յարեցին կալածների յափշտակման առաջարկին, որովհետև «կովկասեան գըլխաւոր վարչութեան հաւաքած տեղեկութիւններից երևաց որ... (տես բարձրագոյն հրաման):»

Վերջապէս, Յափշտակող Յանձնաժողովը մտնում է կօնսիստորիան և պահանջում է յանձնել քաղաքի եկեղեցիների ունեցած-չունեցած: Կօնսիստորիայի անդամները, յենւելով կաթողիկոսի կարգադրութեան վրայ, հրաժարուում են ունեւան կամովին յանձնել: Նահանգապետը բռնի ցուցակագրում է բոլորը, կողոպտում է գանձարանը և Յանձնաժողովի հետ՝ իրենք-իրենց արձանագրութիւն կազմելով՝ դուրս են գնում յաղթական հանդիսաւորութեամբ: Բայց «վսեմից մինչև ծիծաղելին մի քայլ է միայն»... Կօնսիստորիայից ոտը դուրս դնելուն պէս՝ Յանձնաժողովը յայտնուում է փողոցներում, պատուհաններում, կտուրների ու պատշգամբների վրայ հաւաքւած խուռն ու մոլեգնոտ բազմութեան դիմաց... Սուրբներ, աներկիւղ բողոքի բարձրաձայն բացականչութիւններ, նահանգապետին ուղղած ծաղր ու հայհոյանք, տեղում են ամէն կողմից: Անկարող առաջ քայլելու, նահանգապետը հրամայում է ստրաժնիկներին ու կողակներին՝ բռնաւարել և մարքել փողոցները: Սկսում է ընդհարումն: Կողակների հրացանաձգութեան պատասխանում է ժողովուրդը նոյն ձևով: Պատշգամբներից և փողոցներից տեղում է կողակների վրայ կրակ և մի բուպուում ընկնում են սպանւած՝ 4 կողակ, ըհալական դպրոցի 12 տարեկան մի հայ աշակերտ և բազմաթիւ վերաւորւածներ երկու կողմից: Օր-ցերեկով տեսնել մօնղոլների աւանդապահ աւազակապետութեան սխրագործութիւնը և լուել—չէ՛ որ ամօթաբեր պիտի լինէր հայկական անկախութեան վերջին մնացորդների որրան՝ Ղարաբաղի

Համար: Լսել շուշեցին զէնքով դիմադրեց Լուցաուի խրմբայետու թեամբ հայ եկեղեցու կալածները յափշտակող գողերին:

Ընդհարու միջ յետոյ՝ նահանգապետը սկսեց քաղաքում խուզարկութիւններ և ձերբակալութիւններ: Բանտարկւեցին նոյն գիշերը մօտ 120 մարդ, որոնց մէջն են քաղաքագլուխը, թատրոնատէր խանգամիրեանը, 7 աշակերտ րէալական դպրոցից և 30 աշակերտ թեմականից:

Ահա ամբողջ մի շաբաթ է, երեկոյեան ժամը 6-ից յետոյ փողոցը դուրս եկած ամէն-մի մարդ ձերբակալում են: Ո՛չ մի խանութ չէ բացուում, դատարան, քաղաքային ինքնավարութիւն չեն գործում. ինքը նահանգապետ Լուցաուն է ամէն բան կարգադրում: Կօզակների վոհ-մակները վխտում են քաղաքի իւրաքանչիւր անկիւնում և օր ու գիշեր զանազան վայրենութիւններով կարծես ուզում են իրենց բարբարոս նախահայրերից գերազանցել: Աերին աստիճանի ծանր, լարւած դրութիւն է...

XV Ն Ո Ր - Ն Ա Խ Ի Ջ Ե Ի Ա Ն

Եկեղեցական կալածքները Յափշտակող Յանձնաժողովը իմաց էր տւել հոգևորականութեան, թէ պիտի գայ սեպտեմբերի 20-ին: Ժողովուրդը՝ իմանալով այդ նշանակած օրը հաւաքուում է մայր եկեղեցին, խլում է երեցփոխից եկեղեցու բանալիները և բաժանելով մի քանի խմբերի՝ դիմում է միւս եկեղեցիները, որպէսզի նրանց բանալիներն էլ իր ձեռքը ձգէ և ստիպէ Յանձնաժողովին կողպուտի ճանապարհով միայն գործ տեսնել: շինգ եկեղեցիների բանալիները աջողութեամբ խլում են երեցփոխներից, իսկ մնացած երկու եկեղեցիների բանալիները արդէն անհաստատելով երեցփոխները իրենց կամքով յանձնած են եղել կոմիսսիային:

Այս հանդիսաւոր պտոյտը անելուց յետոյ մի քանի հազար հոգուց բաղկացած ամբողջ կրկին հաւաքուում է մայր եկեղեցու շուրջը: Յափշտակող Յանձնաժողովի և գաւառապետի երեւալուն պէս՝ ժողովուրդը դիմաւորում է նրանց աղմուկով ու սուլոցներով: Գաւառապետը սկսում է խօսել և հնազանդութեան ու համակերպութեան քարոզներ կարդալ՝ ճգնելով մինչև իսկ սպառնացանել, որ հայերը պիտի օգտուին նոր կարգադրութիւնից: Բայց արդար զայրոյթով լի ժողովուրդը մի քանի անգամ կարում է այդ վարձկանի խօսքը և ի վերջոյ սպառնալիքներ է արձակում նրա հասցէին: Գաւառապետը բերել է տալիս հրդեհաշէջներին՝ ջրով ամբոխին ցրելու համար, բայց դա էլ չի աջողում: Այն ժամանակ, ինչպէս միշտ, հանդէս են գալիս կօզակներ և մտրակներով ու ատրճանակներով մաքրում են հրապարակը: Շատերն են ծեծւել մի քանի օրիորդներ ուշաթափւել են և բաւական թւով երիտասարդներ են ձերբակալւել:

Չնայած ոստիկանութեան այդ յաղթանակին՝ խառնակութիւնը այնքան մեծ էր և եկեղեցիների բանալիները այնպիսի լաւ ձեռներում, որ Յանձնաժողովը չկարողացաւ այդ օրը ոչինչ անել և ձեռնուենայն հեռացաւ: Աերջաբանը սակայն ողբալի է:

Անցաւ մի շաբաթ, և ահա հոկտեմբերի 5-ին թէ 6-ին Յափշտակող Յանձնաժողովը եկաւ քաղաքային վարչութիւն և հրաւիրեց այնտեղ մեր երեցփոխներին: Աերջիններս, որոնք սիրում են միշտ ժողովրդի մէջքի

ետևը թագնւել դէմ առ դէմ կանգնելով չինովիկներին առաջ նրանց բոլոր հարցերին դաւաճանօրէն բացատրութիւն են տալիս և յայտնում են մեր 7 եկեղեցիների սեփականութեանց վերաբերեալ պահանջող տեղեկութիւնները: Այնուհետև բոլորն էլ ստորագրում են նաև կազմած արձանագրութիւնները, բացի ս. Գէորգ եկեղեցու երէցփոխ պ. Մ. Պօպովից, որ միակ պարտաճանաչ անձը հանդիսացաւ այս գործում:

Այս առթիւ լոյս է տեսել քաղաքում մի դատարանի պրօկլամատիօն, որը հրատարակւում է ժողովրդին պատժել «աղա-բեքեցիփոխներին»:

Միաժամանակ Յանձնաժողովը գնաց նաև թեմական դպրոցը: Թեմականի տեսուչ 2 արի խեանը բոլոր հարկաւոր տեղեկութիւնները սիրով յայտնել և թրջութեքը ստորագրել է:

Յանձնաժողովը գիւղերում աւելի քիչ աջողութիւն ունեցաւ: Գիւղերի արիստիտ երէցփոխները ոչինչ չեն տւել կամ յանձնել: Նրանք ամէնուրեք դիմաւորել են Յանձնաժողովին «չգիտենք», «չենք յիշում» և այլ այսպիսի խօսքերով:

XVI Է Ջ Մ Ի Ա Ս Ի Ն

Նախորդ նամակումս արդէն գրել էի, որ կալածները Յափշտակող Յանձնաժողովը, էջմիածնապատկան գիւղերը ապարդիւն պատելուց յետոյ, վերադարձել էր Երևան, թերևս փոքր ինչ դադար առնելու և նոր հրահանգներ ստանալու: Այժմ, հիմնւելով իրողութեան վրայ, կարող եմ հաղորդել, որ Յանձնաժողովը աջողութեամբ վերսկսեց իր աւազակային արշաւանքները:

Սեպտեմբերի 23-ին եկաւ Յանձնաժողովը դարձեալ Էջմիածին, պատշաճ թաղի-թուղաներով հանդերձ: Տեղ հասնելուն պէս—չգիտեմ արդէն այս քանիբրորդ անգամն է — կրկին դիմում են վեհափառ կաթողիկոսին ու պահանջում Էջմիածնի գանձարանի բանալին: Ահա հափառ, այս անգամ արդէն զայրացած, պատասխանում է. — «բանի՞ անգամ ձեզի արդէն ըսած եմ, որ ոչինչ տալիք չունիմ: Աերջին անգամ կ'ըսեմ, գնացէ՛ք ինչ կ'ուզէք՝ ինքներդ ըրէք»:

Ուժի վրայ հիմնւած «օրինաւոր աւազակները» դուրս են գալիս վեհարանից և ուղղւում դէպի Սինօզի գանձարանը:

Յանձնաժողովի նախագահ՝ Երևանի փոխ-նահանգապետ Նախաշիճէ քաղաքից իր հետ վերցրած փականագործին հրամայում է կոտորատել գանձարանի երկաթէ կասսան և բանալ գուռը: Հրամանը կատարւում է ի հարկէ: Օր-ցերեկայ պաշտօնական աւազակախումբը այդ ձևով Էջմիածնի գանձարանից վերցրել է կանխիկ դրամ 14 հազար բուբլի, կասկներով և նուէրներով Էջմիածնի վանքին թողած արժէքաւոր թղթեր՝ մօտաւորապէս 400 հազար բուբլու մի շարք վաւերաթղթեր, 6 ֆունտ հին արծաթ գրամներ, 1 ֆունտ տաճկական ոսկի լիբաններ և ուռսաց ոսկի դրամներ: Բացի այդ, ցուցակագրել է թանգարանի իրեղէնները և առհասարակ վանքի շարժական ու անշարժ կայքերն ու գոյքերը: Չմոռանամ աւելացնել, որ նախ քան այդ աւազակային արշաւանքը կատարելը, վանքի բոլոր դռները փակել են տւել զինուորներով լցրել են վանքի, վեհարանի, ձեմարանի և Ղա... օրի բակերը:

խկ վանքը չորս կողմից՝ ձեմարանն էլ հետը, շրջապատել են կողակներով և ձիաւոր պահսորդներով: Յանձնաժողովը Էջմիածին մտնելուն պէս՝ Հայրիկը թողնում է վեհարանը և առանձնանում՝ «Հոխիսիմէ» կոչւած վանքում, որը մէկ վերստ հեռու է Մայր-Տաճարից:

Այդպէս շարունակ երբեմնի «Թուլամորթ և փալաս» համարած ծերունի կաթողիկոսը գործի սկզբից մինչև այսօր, մի գովելի յամառութեամբ ու խորին հաստատակամութեամբ, պահպանում է իր բռնած դիրքը շարունակ պնդելով իր առաջի օրւայ ասածի վրայ — «Չեմ կրնար տալ կը բողոքեմ... Ծերունի հայրապետի այդ արժանաւոր դիրքը վերակենդանացնում է բոլորիս մէջ այն փառաւոր պատկերը, որ ստեղծել է հայ ժողովուրդը Խրիմեանի անւան շուրջը:

Երէկ, սեպտ. 26-ին, Յանձնաժողովը վերադարձաւ Էջմիածնից արտաքոյ կարգի հանդիսով — առջևից 25-30 ձիաւոր կողակներ, յետոյ սայլակների վրայ դրած Էջմիածնի դրամը և թղթերը, յետոյ ինքը Յանձնաժողովը կառքերով և յետոյ էլի ղինւորներ, էլի կողակներ և հաղար՝ տեսակ թաղի-թուլաներ...

XVII. Ե Ր Ե Ի Ա Ն

Սեպտեմբերի 23-ի երեկոյեան լուր հասաւ մեզ, իբր թէ հետեւեալ օրը Գիշատիչ Յանձնաժողովը դիմելու է կօնսիստօրիային և սկսելու է Երեւանի եկեղեցական կալաճանները խլելու գործը: Անմիջապէս կարգադրութիւն եղաւ Ինքնապաշտպանութեան կօմիտէի տեղական Մասնաճիւղի կողմից, որ սեպտ. 24-ին բոլոր խանութները, արհեստանոցները և այլ հայերին պատկանող հիմնարկութիւնները կողպեն ու սուգ պահեն: Երկրորդ անգամն է, որ Մասնաճիւղը ցոյցի այդ տեսակ մի կարգադրութիւն է անում:

Այդ օրը հրապարակ դուրս չեկան ոչ միայն խանութպաններն ու արհեստաւորները, այլ և ռաքի վրայ առևտուր անողները — կանչեղէն և այլ մթերքներ վաճառողները. ինքնաբերաբար գործի չէին դնացել նոյնիսկ հայ մշակները, որոնք, օրական 50 կօպէկով Փ ա հ լ ա յ ու թ իւ ն անելով, սուն, ընտանիք են պահում... Բայց այս անգամ էլ լուրը չը ճշդեց: Իբրև հակացոյց, այդ օրը, կառավարութեան հրամանով այգում ղինւորական երաժշտութիւն էր նւագւում:

Երկար խաբ տալուց յետոյ, վերջապէս, կալաճանները յափշտակող Յանձնաժողովը առանձին դրութեամբ իմաց տւեց Երեւանի թեմական դպրոցի հոգաբարձութեան, որ սա պատրաստ լինի կալաճանները յանձնելու հօկտ. 3-ին: Փակագծի մէջ ասեմ, որ այդպիսի գրութիւններ տեղի էին ունեցել էլի երկու-երեք անգամ, բայց չէին եկել և մինչև այժմ արդէն պարզած է համարուում, որ այդ ձևի կեղծ յայտարարութիւնները անւում էին կառավարութեան կողմից դիտմամբ հայերի դիմադրական պատրաստութիւնների չափը և բնաւորութիւնը հասկանալու համար:

Ստանալով յիշեալ յայտագիրը՝ Երեւանի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը, երևի կառավարութեան աչքում «բարեմիտ» հանդիսանալու նպատակով, սօսն ա կ ա ն զգեստով էր ներկայացել Յանձնաժողովին:

Յանձնաժողովը, մտնելով թեմական դպրանոց, հոգաբարձութիւնից պահանջում է նախ Ներսէս Թայրեանի

դպրանոցին կտակած 150 հալարի չափ գումարը: Հոգաբարձութիւնը առարկում է, որ փողերը բանկումն են, իսկ անդորրագիրը հոգաբարձութեան գանձապահի մօտ է, որը և ներկայ է այնտեղ: Յանձնաժողովը նոյն պահանջով դիմում է գանձապահին: Գանձապահը պատասխանում է, որ, ճիշտ է, անդորրագիրը և առհասարակ բոլոր թղթերը իր մօտն են, բայց առանց հոգաբարձութեան կարգադրութեան չի կարող տալ: Յանձնաժողովը այդ կամեղիային վերջ տալու համար՝ պահանջ է դնում —

«Կամ աւեցէք, կամ ասացէք՝ չենք տալիս»: Այդ իշխանական սպառնալքի տակ, հոգաբարձութիւնը խնդրում է Յանձնաժողովից ժամանակ տալ՝ մի քանի լուպէ առանձնանալու և խորհրդակցելու համար: Ժամանակ տրւում է:

Պէտք է ասել, որ դպրոցական բոլոր արժէքաւոր թղթերը, դրանց հետ նաև Թայրեանի կտակի անդորրագիրը, սովորաբար պահւում էին գանձապահի մօտ, բայց այդ օրը հոգաբարձութիւնը՝ նախապէս խորհրդակցելով, բոլոր դեղումենտները բերում է դպրանոց և դնում նրա պահարաններից մէկի մէջ, հէնց այն սենեակում, ուր պիտի ընդունէր Յանձնաժողովը: Իսկ այժմ առանձնանալու իրաւունք խնդրելով՝ հոգաբարձուները որոշում են պահարանի դուռը բաց պահել և ծառային տալով բանալիները՝ ուղարկում են նրան բանալ պահարանը:

Այսպէս, հոգաբարձութեան անդամները իրենց քարտուղարի հետ՝ մի զլելի կատակերգութիւն խաղալուց յետոյ, ներս են մտնում Յանձնաժողովի բազմած սենեակը և շարքով կանգնելով պահարանի դուռն առջև, պատմական Յուդայի դերն են կատարում: Գառնալով Յանձնաժողովին՝ բոլորը միաբերան և միաձայն ասում են՝ «Մենք չենք տալիս, բայց դեղումենտները ահա այդ պահարանի մէջն են — վերցրէք... Բոլորի մատները միաժամանակ ուղղւում են պահարանը: Ի միջի այլոց, այն ժամանակ, երբ Յանձնաժողովը հրամաններ էր արձակում թեմական դպրանոցի միջանցքում, հոգաբարձուներից մէկը «խոհեմութեան» համար պատելիւում է աշակերտներին հոգեւոր երգեր երգել, որպէս զի Յանձնաժողովը հասկանայ, որ դպրանոցը «հոգեւոր» է... Թըշւառականներ, մինչև երբ պիտի սողաք իշխանութեան ամէն մի սոււերի առջև:

Այդ օրւանից յ ա յ տ ն ի դարձած Երեւանի հոգաբարձուները սրանք են. — Գաբրիէլ Մ ն ա ց ա կ ա ն Ե ա ն — իրաւաբան, Կարոպետ Ք ե ա լ ե ա ն — իրաւաբան, Իւզբ ա շ ե ա ն — պետական պաշտօնեայ, Չ ա թ ա լ բ ա շ ե ա ն, — առևտրական բանկի գանձապահ, Գրիգոր Ա մ ի Ր ե ա ն — վաճառական և Մակար Տ է Ր Ս ա Ր դ ս ե ա ն — հոգաբարձութեան քարտուղար: Այդ գարշելիներից ոչ մէկը քաջութիւն չունեցաւ յետ կենալու կօմիկ-դաւաճանութիւնից:

Երեւանի «Ինքնապաշտպանութեան Մասնաճիւղը» չյապաղեց մի թուուցիկ հրատարակել ժողովուրդի դատաստանին յանձնելով հոգաբարձութեան սովորի վարժուները:

XVII. Ա. Է. Բ. Ս. Ա. Ն. Դ. Ր. Պ. Օ. Ի.

Երեւանի թեմական դպրանոցի դուռները խլելուց յետոյ, նոյն Յանձնաժողովը իր ամբողջ կազմով հոկտեմբերի 5-ին, եկաւ Ալէքսանդրօպօլ: Տեղական Ինքնապաշտպանութեան Մասնաճիւղը այդ առթիւ կարգա-

դրուածիւններ էր արել խ ա ղ ա ղ ց ո յ ց անելու մասին: Հոկտ. 6-ից քաղաքում, առանց բացատրութեան, փակուած էին բոլոր խանութներն ու արհեստանոցները. չէին աշխատում մշակները, կառապանները և այլն: Քաղաքի յայտնի փողոցներում ծածանուում էին բազմաթիւ սև դրօշակներ: Մի խոշոր դրօշ, նոյնպէս սև, ծածանուում էր ուղիղ ուստիկանատան կողմի վրայ ուսերէն մակապրութեամբ՝ «Ամօթ է կողոպտել»: մէկ ուրիշը՝ քաղաքային տան շինութեան վրայ՝ «Ամօթ և նախատինք կառավարութեան»: Միաժամանակ ահագին ժողովուրդ խռնուած էր փողոցներում, եկեղեցիների մօտ: Սակայն ցոյցի ընթացքում, ամբողջ 3 օր, ո՛չ մի առանձին դէպք տեղի չունեցաւ. ժողովուրդը ամէն կերպ աշխատում էր զսպել իր գրգռումը համաձայն տեղական Մասնաձիւղի հրահանգին: Կարելի է հաստատապէս ասել, որ սարսափելի, արիւնահեղ ընդհարում առաջ կը գար, եթէ ժողովուրդը Մասնաձիւղի կողմից ուէէ հրահանգ ստանար դիմադրելու: Բայց որոշած էր առայժմ պահել արիւններս:

Հոկտ. 6-ին Յանձնաժողովի նախագահը իր մօտ է հրահարում Ալեքսանդրօպօլի վիճակաւոր յաջորդին և շատ մեղմ լեզուով առաջարկում է հպատակել բարձրագոյն հրամանին — յանձնել Յանձնաժողովին Ալեքսանդրօպօլի յաջորդարանում եղած դօկումէնտները: Ալեքսանդրօպօլի յաջորդը, Սահակ վարդ. Բաղդասարեան, միևնոյն պատասխանն է տալիս, ինչ որ արդէն շաբթօն է դարձել ամենուրեք — «Առանց ամենայն հայոց կաթողիկոսի ինքը իրաւունք չունի ոչ մի բան անելու, իսկ կաթողիկոսից հրաման կայ եկեղեցական կալուածները չյանձնել»:

Նակաշիճէ. — Գոնէ ցոյց տւէք կալուածների տեղերը:

Յաջորդ. — Կալուածների տեղերը ցոյց տալ միևնոյն բանն է, ինչ յանձնել. ներեցէք, ես չեմ կարող:

— Գոնէ խրատեցէք և համողէք հայ ժողովուրդին, որ «անմիտ» ցոյցերով կոտորածի առիթ չտայ:

— Հայ ժողովուրդը երբէք տրամադիր չէ կոտորելու, եթէ առիթը ինքը ուստիկանութիւնը չտեսնէ իր անտակտութեամբ:

Յանձնաժողովի արածը հոկտեմբերի 6-ին սահմանափակեց դրանով միայն: Հոկտեմբերի 7-ին տեղական ուս պաշտօնեաների մասնաւոր կառքերով (քաղաքի կառապաններից և ոչ մէկը չէր լծել), Յանձնաժողովը շրջագայում էր քաղաքը և իր ձեռքի տակ եղած ցուցակով նշանակում էր եկեղեցապատկան խանութների համարները — ուրիշ ոչինչ: Կալուածների գրաւումը այդ ձևակալութեամբ էլ վերջացաւ:

Դոյն օրը, հոկտ. 7-ին, երեկոյեան, քաղաքում տեղի ունեցաւ հետևեալ միջադէպը: Ինչպէս վերը ասացի, քաղաքի բոլոր խանութները փակ էին. դրա հակառակ բաց էին կառավարութեան դպրոցները, թէև հայ աշակերտները չէին գնացել: Գպրոցներից մէկի ուսուցչի վատթար ընթացքը մի կողմից, նրա հայ լինելը միւս կողմից՝ առիթ տւին մի խումբ հայերի՝ այդ դպրոցը այրելու որոշումը ընդունել: Այդ նպատակով երեկոյեան մի քանի հոգի մտնում են դպրոցը, մաղուտ են շաղ տալիս նստարաններին, լուսամուտներին և դռան փեղկերին, դպրոցում կախ տւած կայսեր նկարը ամբողջապէս սևացնում են մաղուտով և երբ պատրաստուում են վառելու մաղուտը, դպրոցին կից սպորդ ուսուցիչը նկատում է ու ներս է գալիս. սպորդը ատրճանակ են արձակում թշուառականի վրայ,

բայց գնդակը վերաւորում է ուսուցչի ձեռքը միայն: Այդ դէպքը առիթ տւեց նախ՝ Երևանից նահանգապետի գալուստ և երկրորդ՝ մինչև այսօր էլ դպրոցը գիշեր-ցերեկ ուսուցիչներին հսկողութեան ենթարկելուն: Առհասարակ նկատելի է, որ կառավարութիւնը մի առանձին երկիւղով էր նայում Ալեքսանդրօպօլի վրայ: Կարծեմ, էլ զօրք չէր մնացել Ալեքսանդրօպօլի ամբողջ շրջանում — իսկ այդ շրջանը իբրև սահմանագլուխ նոյնիսկ խաղաղ ժամանակ զօրքերի կենտրոնատեղի է — բոլորն էլ թափել էր քաղաք, զինւորների զանազան տեսակներ ու խմբեր: Կարծէք պատերազմի դաշտ էին դուրս եկել բոլորովին կազմ և պատրաստ, բժիշկներով, դեղերով, վերակապերով և նոյնիսկ պատգարակներով...

XIX. Թ Ի Յ Լ Ի Ս

Տեղին հայ և ոչ-հայ հասարակութիւնը վաղուց է, չէր զգացել այն գոհունակութիւնը, որ նկատուում է այսօր: Չնայած, որ դեռ ևս յայտնի չէ, թէ ինչ էլք կըստանայ վերջիվերջոյ կալուածական հարցը, ինչ միջոցներով կ'ապահովւի հայ բարձր կղերի և թեմական դպրոցների ծախսերը, այնուամենայնիւ հասարակութեան գիտակից մասը չի վհատուում և որոշել է շարունակել կռիւը կատարած աւազակութեան դէմ: Օր չի անցնում, որ չխօսուի դժգոհութեան այս կամ այն նոր փաստի մասին. շաբաթ չէ անցնում, որ զանազան շրջաններում չքննեն այլևայլ ծրագիրներ ուսուցման դէմ կուելու համար: Պէտք է խոստովանել, սակայն, որ բողոքի այս տրամադրութեան հետ միասին՝ ամէն մի հայ, որոշ չափով փակւած իր մտքերի մէջ, զգում էր իրեն ճնշւած, եթէ չ'ասել ստորացած:

Այս զգացմունքը տիրում էր ամէն մէկին մանաւանդ այսօրւայ հալածանքների հեղինակ՝ կառավարչապետ Գալիցիին հանդիպելիս: Թեք ընկած իր լանդօի մէջ, վերջինս շարունակում էր կատարել իր սովորական զբօսանքները և՛ փողոցներում ժպտալից բարևներ ուղղելով աջ ու ձախ, յաղթական հայեացքներ ձգելով պատահողներին, նա կարծես պարծենում էր իր արածներով: Աւելի ևս սրտի մէջ հաւանական է, նա արհամարհում էր հային, որը իր ասելով՝ «գիտէ աշխատել, մանաւանդ կեղեքել հարևան ազգերին, բայց անընդունակ է հոգեկան թուխքի, ուժեղ բողոքի»:

Շարունակում է արդեօք Գալիցիինը ունենալ հայերի վերաբերմամբ նոյն գաղափարը այսօր ևս — ես չգիտեմ, բայց որ հոկտեմբերի 14-ի սպանութեան փորձը իջեցրեց հայերի կրօնից մի ծանր բար — դրան կասկած չկայ: Գէպքի լուրը կայծակի արագութեամբ տարածեց ազգաբնակչութեան բոլոր խաւերում: Հայերը հաղորդում էին լուրը միմեանց ինչպէս Ծննդեան աւետիս. վրացիներից և ուսաններից շատերը յայտնում էին իրենց գոհունակութիւնը, որ «խելագար ծերունուն» վերջապէս տրեց արժանի դաս:

Ահա երկու խօսքով եղելութիւնը:

Ժամը 4-ին դէպի բօսանիքական այգին կատարած դրօսանքից յետոյ՝ Գալիցիինը վերադառնում էր քաղաք կնոջ հետ, ունենալով կառապանի մօտ նստած մի կօղակ:

Չհասած դեռ Գօշորի խճուղիին, կառքին մօտենում են երեք անձնաւորութիւններ: Կառքը անմիջապէս կանգնեցնել տալուց յետոյ՝ նրանցից մէկը թուջում է աջ

կողմից դէպի կառքը և դաշոյնով մի քանի հարւածներ հասցնում կառավարչապետի գլխին, խոյս տալով վերա-
 ւորել իշխանուհուն, որը, փաթաթելով ամուսնուն, պաշա-
 պանում էր նրան: Յարձակողներից միւս երկուսը կառքի
 ձախ կողմից՝ աշխատում են դուրս քաշել կառավար-
 չապետին կառքից: Այդ ժամանակ սուրը ձեռին նրանց
 վրայ է գալիս պահապան կողակը և յարձակողները
 ստիպւում են նրա հետ կռիւ բռնել: Օգտուելով այս
 իրարանցումից՝ կառավարը մտրակում է ձիերին և փախ-
 ցնում կառքը դէպի քաղաք:

Վոզակին ատրճանակի հարւածներով մերձիմա հ վերա-
 ւորելուց յետոյ՝ յարձակողները ուղղւում են դէպի
 Վոլորի ու Շինդիսի ձորակները, բայց չեն կարողանում
 անխայտանալ: Սպանութեան փորձը տեսնողներից մի քա-
 նիսը հետևում են նրանց մինչև պալատական կոպակների
 մի պահակի՝ և բազմաթիւ ոստիկանների վրայ հասնելու:
 Սկսւում է կռիւ: Վոզակները արձակում են հրացաններ,
 տէնորիստները պաշտպանւում են ատրճանակներով:
 մինչև որ երեքն էլ ընկնում են մեռած կամ մերձիմա:

Ինչ վերաբերում է արհիւնթաթաթախ կառավարչապետին
 ու սարսափահար կնոջը, պալատը հասնելուն պէս, նրանք
 հրաւիրում են բժիշկներ վերքերը քննելու համար, իսկ
 յետոյ ընդունում են շնորհաւորութիւններ պաշտօնեա-
 ների ու յհասարակութեան ներկայացուցիչների՝ կողմից:
 Գալիցիին վերքերը թէև ծանր չեն, բայց բժիշկների ասե-
 լով, եթէ դաշոյնը թունաւորւած է եղել, շաբաթներից
 և նոյնիսկ ամիսներից յետոյ վերքը կարող է բորբոքել
 և մահ պատճառել:

Սպանութեան փորձին վերաբերեալ խօսակցութիւն-
 ներին վերջ չկայ: Պտտում են հազար ու մի հակասական
 լուրեր: Յամենայն դէպս փաստ է, որ եթէ առողջանայ
 էլ, Գալիցիինը այլևս Վովկասում չի մնալու: Ամենահա-
 ւանական թեկնածուն կառավարչապետի պաշտօնի հա-
 մար նկատւած է զինւորական մինիստր Վուրպպատկին:

Չնայած դէպքից յետոյ կատարւած բանտարկութիւն-
 ներին, առայժմ միայն սա է յայտնի, որ տէնորիստները
 հայեր են և որ նրանք անդամ են եղել հայ յտէնօ-
 րիստական խմբի: Գաշոյնի հարւածները ուղղւած են
 եղել իշխանի գլխին, որովհետև քաղաքում պտտող
 լուրերին նայելով՝ Գոլիցիինը կրում էր կրծքին զոհ:

Այստեղի և մանաւանդ այլ մանր քաղաքների պաշ-
 տօնեանների համար բացել է եկամուտի նոր աղբիւր:
 Պատահած մարդուն, եթէ ունենոր է, բանտարկում են
 և կաշառք առնելով՝ ազատում: Եղել են դէպքեր, որ
 կաշառքի պահանջը դրել է առաջուց և մերժման պա-
 րագային բանտարկել են մինչև ուզածները ստանալը:
 Ինչ վերաբերում է տաճկահայերին, նրանց դէմ սկսւել
 է կատարեալ հալածանք. Բաթումից ստիպում են հե-
 ոանալ նոյնիսկ կանոնաւոր անցագիր ունեցողներին:

Փորձի սպաւորութիւնը մեծ է: Ամէնքը գովում են
 տէնօրիստների յանդգնութիւնը, նրանց ցոյց տւած մտա-
 հոգութիւնը՝ չվերաւորել կառավարչապետի կնոջ, և նրանց
 հաստատուն որոշումը՝ թեկուզ ընկնել գնդակների հար-
 ւածի տակ, բայց անձնատուր չլինել արիւնարբու կօ-
 զակներին:

Բոլորը համամիտ են, որ իրենց դժւարին ձեռնար-
 կութեամբ տէնօրիստները որոշ չափով վճճիմդիր
 եղան հայի անարգւած պատւի համար և հանդէս
 բերին անձնազոհութեան այն օրինակը, որը սանձարձակ

բռնակարութեան ըէժիմի տակ, հանդիսանում է, որոշ
 պարագաներում, ոչ միայն բնական, այլև արդարացին:

XIII. Վ Ե Ր Ջ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ԷՄԻԼԻՆՆԻ. Կառավարչապետի դիւանը դիմել է
 կաթողիկոսին, առաջարկելով նրան «Արարատում» պաշ-
 տօնապէս տպագրել յունիս 12-ի հրամանը: Վեհա-
 փառը այդ պահանջը թողել է անհետեւանք:

Հոկտեմբերի սկիզբներին Էմիլիանում հարց է ծագում
 թէ՛ եթէ կառավարութիւնը, իբրև ապրուստի միջոց,
 ոռձիկ առաջարկի մեր հոգևորականութեան, պէտք է
 ընդունել թէ ոչ:

Այդ հարցի մասին Վեհարանում ժողով է գումար-
 ւում: Ներկայ են լինում բոլոր թեմական առաջնորդները,
 սինօդի անդամները և մի քանի յաջորդներ: Ժողովը որո-
 շում է՝ ընդունել: Այդ բանին հակառակում է
 սակայն Հայրիկը, որը զնում է իր վէտօն — ընդունել:

Տեղեկանալով այս մասին, Երևանի Կանոնադիւղը ան-
 միջպէս իր մարդու բերանով յայտնում է Էմիլիանին,
 որ ժողովուրդը պահանջում է ոչ մի դէպքում կա-
 ռավարութիւնից ոչ մի կօպէկ նպաստ չ'ընդունել: Երբ
 Առաջնորդները արդէն պատրաստւում էին ցրել իրենց
 թեմերը, Կանոնադիւղը նրանց ազդարարեց, որ տեղերիցը
 չչարժեն, մինչև ամբողջ Վովկասի հայաբնակ քաղաք-
 ների կարծիքները կը հաւաքեն հոգևորականների ոռձիկ
 մասին:

Անմիջպէս մարդիկ են ուղարկւում Երևանից Վովկասի
 ութ խոշոր քաղաքների կարծիքները իմանալու, և այսօր
 միաձայն հաւանութեամբ բոլոր քաղաքներից ընդունւած
 է հետևեալ որոշումը.

«Ոչ մի հոգևորական չհամարձակուի ուսու-
 վարութիւնից ունէ դրամական նպաստ ստանալ: Ինքը
 հայ հասարակութիւնը յանձն է առնում իր միջոցներով
 պահպանել իր սրբավայրերը, հոգևորականութիւնը
 և դպրոցները, եթէ այդ վերջինները մնան այժմեան
 պայմանների մէջ»:

Այդ կարծիքը ընդհանուր է թէ ժողովուրդի և թէ
 Վովկասիների մէջ:

Յաւօք սրտի պէտք է ասել, որ հոգևորականութիւնից
 այն մարդիկ, որոնց վրայ փոքրիշատէ յոյս կար, թէ
 բուն թափով կը դիմադրէին կառավարութեան, սկզբից
 մինչև հիմա դաւաճան դիրք են բռնել: Գրանք են՝ Գ. ա-
 լուստ Տէր-Մկրտչեան — միաբան, իր եղբայրը — Սինօդի
 անդամ Մ խ ի Թ ա ր վարդապետ, Մ ե ս ր օ վ բ վարդ-
 Տէր-Մովսէսեան և Արիստակէս եպիս. Ս ե դ ր ա կ ե ա ն,
 որոնք — բացի Սեդրակեանից — կողմնակից էին սկզբից
 կամովին յանձնել կալւածները, իսկ բոլորքեան հիմա
 ձայն են տւել կառավարութիւնից փող ընդունել ևլ:

ԲԱՎՊՈՒՄ սեպտեմբերի 28-ին, կաթողիկոսի անու-
 նակոչութեան օրը, կատարւել է մեծ հոգեհանդիստ
 սեպտեմբերի 2-ի ցոյցի ժամանակ նահատակածների
 յիշատակին: Արդապետը այդ առթիւ, քարոզ է խօսել:
 Եղել են եկեղեցու շուրջ բազմաթիւ ոստիկաններ, բայց
 չեն համարձակւել ունէ արգելք դնել:

Հոկտեմբերի 9-ին, Էմիլիանի 1600-ամեակը տօնելիս,
 Բագրի միջնակարգ դպրոցների բոլոր հայ աշակերտ և
 աշակերտուհիները դպրոց չեն գնացել: Գպրոցների կա-

տաղած վարչութիւնները այդ առթիւ բոլոր հայ աշակերտ և աշակերտուհիներին առաջարկել են գրաւոր կերպով պատասխանել հետեւեալ երեք հարցերին. «Ինչո՞ւ չէիք եկել, ո՞ւր էք եղել այդ օրը և ծնողներդ գիտէին արդեօք ձեր դպրոց չգալը թէ ոչ» Ամէնքը, նախնական համաձայնութեան գալով, պատասխանել են միևնոյնը. «Չէի եկել Էջմիածնի 1600-ամեակը տօնելու նպատակով: Այդ օրը եղել եմ եկեղեցում և յետոյ տանը կարգում էի Էջմիածնի պատմութեան վերաբերեալ գրքեր: Ծնողներս ոչ միայն գիտէին դպրոց չգալս, այլ և տեւել էին իրենց կատարեալ հաւանութիւնը»:

Նոյն քաղաքում բոլոր կօտ են սկսել ուսն խանութների դէմ, իսկ թիֆլիսում հայերը չեն յաճախում պետական օպերան, ուր միշտ լինում էր նաև Գալիցիա: Դա էլ բուրժուազիայի նախաձեռնութիւնն է: Պատմում են, որ մի պարոնի վրայ, որը չէ համակերպել այդ վճռին, թթու են անել, մի քանի տիկիներին վրայ — թանաք և այլն:

ԱՐԴԻԻՆՈՒՄ Յափշտակող Յանձնաժողովին դիմադրող ժողովուրդից բարտարկել են հինգ հոգի:

ՍԱԼԻԱՆՈՒՄ դիմադրութեան ժամանակ սպանել է տեղական պրիստաւը:

ԹԻՖԼԻՍՈՒՄ վանքի բակի մէջ փորձ եղաւ մի դաւաճան քահանայի — Ալեքսանդր Տէր-Յովհաննէսեանի վրայ, որ Գալիցիայի մօտիկ մարդը դառնալու ծարաւը ունէր և գիշերները երթեւեկում էր նրա մօտ: Փորձը անյաջող է եղել. ատրճանակի երկու հարւածներն էլ վրիպել են:

ԱՆԱԼԲԱՍՏՈՒՄ գրաւման օրը սև դրօշակներ են կայրել տներին և խանութները փակել:

ՇՈՒՇԻԱՅ գաւառում, նահանգապետ Ղուցաուի կարգադրութեամբ, թիւրքերին դէնք են բաժանում և գրւգրում են նրանց հայերի դէմ:

Նոյնը անում է Կովկասի ուսս գիւղերում — Պրիվոլնօէ, Գիլիջան, Նիկոլայեվսկայա, Գարգար, Չիբուխի, Գարսամէդ և այլն:

ԹԻՖԼԻՍԻ նահանգապետը, Գալիցիայի հրամանով, Էջմիածնից թիֆլիս կանչեց թիֆլիսի թեմական առաջնորդ Գեորգ Սուրէնեանին. «Ծառայութեան գործերով պահանջում են ձեզ» հեռագրով: Նկատելի է կառավարութեան մի յայտնի ընթացքը. նա աշխատում է ինքը անմիջապէս յարաբերութեան մէջ մտնել մեր հոգեւորականների հետ, առանց կաթողիկոսի գիտութեան, — ուրիշ խօսքով կաթողիկոսին բողոքովին ղրաղ են: Թողել: Ինքը կառավարութիւնը անմիջապէս դիմում է առաջնորդներին և իր քէֆն ուզած հրամաններն արձակում, առանց Հայրիկի գիտութեան:

Եւ մեր թուրքամորթ ու կաշից վախեցող հոգեւորականութիւնը կարծես տրամադիր է հլու հպատակութեամբ հնազանդւելու կառավարութեան ապօրինի կարգադրութիւններին:

Արական առաջին գիմնագիտի VII դասարանի աշակերտները գիմնագիտի շինութեան մէջ կախ տուած կառավարչապետի երկու լուսանկարները հրապարակով սևացրել, պատռել և անպատռել են: Այս առթիւ արտաքսել են դպրոցից 10 աշակերտ:

Կառավարութիւնը, բացի Պարզեան եպիսկոպոսից, վերջերս արտոյրել է. Թիֆլիսից՝ Մոզնի վանքի վահայր Ղուկաս վարդապետին, Վարդան քահանայ Տէր-

Վարդանեանին. Երևանից՝ Խաչատուր քահանայ Տէր-Ստեփանեանցին, որ մասնակցել էր. Երևանայ ցոյցին, և ուրիշ տեղերից կրկին երկու քահանայի. Բագրից արտոյրել է վաճառական Համբարձում Մելիքեան, որը եկեղեցական կալածների յափշտակման երեկոյին, իբր տեղական սկուսթի աւագ, նազաճութիւնը սկուսթի մէջ արգելել էր:

Հոկտեմբերի միջին թւերում արտոյրել է Կովկասից Աշտարակ գիւղացի Թորոս Բոյախչեան և հոկտեմբերի 30-ին՝ Ղամարու գիւղի բնակիչ Սենեքերիմ Տէր-Վարդանեանը: Արտոյրել են երեք ուրիշ հոգի նաև Էջմիածնայ Վաղարշապատ գիւղից: Նոյն բաղդին է արժանացել Շուշայ քաղաքապետի Ջաւար-բէկ Իշխանեանը՝ անորոշ ժամանակով:

ԵՐԵՎԱՆՈՒՄ սեպտեմբերի 11-ին գիշերը սպանել է, կողմնակի մարդկանց ձեռքով, մի ուսս զինուոր, որը փողոցում, պատահելով հայերի, իրեն թողել էր տեւել նրանց «արմեաշէ» անւանել:

Նոյեմբերի 13-ին, մի ինչ որ յիմար կասկածի առիթով, քաղաքում բանտարկւել են տաճկահայ գաղթականներից մօտ 150 հոգի, որոնց մի մասը սակայն շուտով արձակւել է: Հալածանքը գաղթականների դէմ շարունակում է և իւրաքանչիւր օր տեղի են ունենում նոր ձերբակալումներ: Բանտը լինէն է:

ԱՎԱՐՄԱՆԱՍՏՈՒՄ սկսել են մի շարք խուզարկութիւններ. խուզարկել են Բգնունի Ալեքսանին, Սարգիս Վարդիկեանին, Մաշեան Պօղոսին և շատ ուրիշների:

Ալեքսանդրօպօլի գաւառում ՂԸԶԸ-ՉԱԻՉԱՍ գիւղի քահանայի ժուրքը խուզել և իրեն էլ ծեծի են ենթարկել, որովհետև Յափշտակող Յանձնաժողովին յանձնել էր կաթողիկոսի հրամանը կալածները չտալու մասին:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ե Ն

20 յունիս, 1903

Ս Ա Ն Ա Կ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս

Քանի մը խօսք ալ կղերականի մը մասին, որ վանի առաջնորդութեան պաշտօնն ունի և որ կ'անւանւի Սահակ վարդապետ: Ասոր կարծիքով՝ յեղափոխութիւնը չափազանց փնասակար երևոյթ մ'է, յեղափոխականներն ալ բախտախնդիր ու անիրաւ, որոնք միայն իրենց փառքին և անունին համար ջարդել կուտան ժողովուրդը, սուլթանի հայրախնամ հովանաւորութեան ներքոյ այնքան երջանիկ և այնքան ապահով ապրող ժողովուրդը:

Սեահոգի մարդ. յեղափոխութիւնը չըմբռնելու ու չհասկնալու թերևս դուք ձեր «պատճառները» ունիք, սակայն ի՞նչ կ'ըսէք այն խեղճ ու կրակ ժողովուրդին, որուն հանդէպ դուք հրապարակաւ պարտականութիւններ կէ ստանձնած և որուն ծառայելու համար դուք հանէք ստանձնած և որուն եկեղեցու մէջ: Քանի քանի գիսաւորապէս երգւել էք եկեղեցու մէջ: Քանի քանի անգամներ խեղճ մարդեր, արցունքները աչքերնուն, ցնցոտիներու մէջ քաղցած ու ծարաւ՝ դիմել են ձեզ, ցնցոտիներու մէջ քաղցած ու ծարաւ՝ դիմել են ձեզ, որպէս զի դուք իբր առաջնորդ միջնորդէք կառավարութեան առաջ՝ գէթ մեղմացնել տալու համար իրենց

զաւակաց դառնագին տանջանքները, որ կը կրեն բանտերուն մէջ ամէն օր, ամէն ժամ՝ բողոքովին յանիրաւի միանգամայն անարդար կերպով: Ձեզ դիմող մայրը, որդեկորոյ հայրը, խեղճ որբուկը իրաւունք չունէին, որովհետեւ անոնք պարտաւոր էին գիտնալ թէ ո՞ր է թագնւած այս ինչ հայդուկը, անոնք յանցաւոր էին, որովհետեւ պարտ էին գիտնալ, թէ ո՞ր կը գտնուի տաճիկն սպանողը: Յանցաւոր չէին մեզ մորթող քրդերն ու թիւրքերը, իրաւունք ունէր միայն կառավարութիւնը, որ այնքան արին թափեց, հայու արին, անմեղ արին... Ու ձեր անարգ կաշին պաշտպանելու համար, դուք, դժոխքի արարած, որքան ոճիրներ գործեցիք, որքան խայտառակութիւններ պարփակեցիք ձեր լայն քղանցքներուն մէջ:

Մէկդի դնէք սա բոլորը. գուցէ առարկէք, թէ ասոնք կղերականի մը վերաբերելի գործեր չեն, հապա ի՞նչ կ'ընէք այն բոլոր ապօրինութիւններու հանդէպ, որոնք կը կատարուին հակառակ Հոյ եկեղեցու ոգուն և օրէնքներուն: Վանի շրջականները, Ալջավազ գաւառին մէջ, Մ. Գ. ի եղբայրը առաջին կնոջն զաւակ չունենալուն համար՝ թողնելով զանիկա, կարգւեցաւ ապօրինաբար ուրիշի մը հետ. որմէ ևս զաւակ չունենալով՝ անոր ալ թողուց: Երկու անպատիւ ըրած և երեսի վրայ ձգած կիները՝ ձեզի բողոքելու եկան, դուք ալանջ չդրիք, պատճառ որ օրէնքը անպատուող մարդը թիւրք պաշտօնի մը մը բարեկամութիւնը կը վայելէր: Նոյն գաւառի Խոռանց ըսած դիւղին մէջ Մ. Ա. ի տղան կամեցաւ երկու անգամ կարգուել Ամբող գիւղը անոր մտածուածին հակառակ կանգնեց, բայց անիկայ դիմեց հիւսէին փաշայի օգնու թեան և ուրիշ գիւղի մը մէջ Մեծ պահոց շաբթուն կարգւեցաւ ուղածին հետ: Դուք ասոր դէմ պայպանձեցիք: Խօշապ գաւառի Վասըր գիւղի զօճաբաշին, դատարանի անդամ, Պ. Մ., կը կամենար երկրորդ անգամ ամուսնանալ իր զոքանչին հետ, իրեն կինը քաղաք կուգայ և Ջ. անի միջոցով կը բողոքէ ձեզ երկանը դէմ: Դուք, ձեզմէ վախնալով՝ գործը փաթթեցիք քահանայի շլինքին: Քահանան ալ արգիլեց: Ան ատեն զօճաբաշին՝ անպատճառ ուղենալով պսակելի իր կնոջը մօր հետ՝ կը դիմէ տեղւոյն գայմագամին՝ շամուխեցի ցեղէն Սատիմ պէյին: Վերջինս իր եղբայր համդիէ զօրաց հազարապետ Հասան աղայի աջակցութեամբ, 7 ձիաւորով կուգայ քահանային տունը, կանոնի տէրտէրը գիշերով կը տանէ դիւղէն դուրս, և սպաննալով կը ստիպէ, որ պսակը կատարէ: Ու այսպէս բռնի կերպով պսակել կուտան: Դուք, թող ու վախկոտ հովու, ասոր հանդէպ ալ գերադասեցիք լուութիւնը: Գուցէ ազատամիտ մըն էք: Սակայն ինչո՞ւ ձեր ազատամտութիւնը կ'արտայայտուի միայն այն ատեն, երբ թիւրք կամ քրդեր մը պաշտպան կը հանդիսանայ ապօրինութեան: Այլ կասկած կը մնայ, թէ միւսիւրմանի մը կամքը ձեզ համար վեր է Աստուծոյ և եկեղեցիի օրէնքներէն...

Ն Ա Մ Ա Կ Մ Ո Ւ Շ Ե Ն

6 յունիս, 1903

ԽՈՍՐՈՎ ԱՍՐԴԱՊԵՏ ՊԵՆՆՈՎՍԱՆ

Օրմանեանի ձագուկներէն է Մշոյ առաջնորդ Խոսրով Պէհրեկեանը, կապիկի մը ճարպիկութեամբ իր վարպետի թրքամուրթիւնը ընդօրինակած:

Ժողովուրդը իր կոյր մոլեռանդութեամբը, դէպի կրօնի պետեր ունեցած իր աւանդական երկեղածութեամբը, երկար համբերեց, տարաւ Խոսրովի ազգատեաց և տմարդի ընթացքը. սակայն համբերութիւնն ալ իր չափը ունի: Երբ լրբութիւնը իր գագաթնակէտին հասնի, ամենաժողեռանդ ժողովուրդն ալ իր բողոքի ճիշտ կ'արձակէ: Այդ ճիշտ ոչ մի ատեն այնքան արդար եղած չէ, որքան Մշոյ դաշտի ժողովուրդն, որ այսօր կը բարձրացնէ իր ապիկար ու լրբացած առաջնորդին դէմ:

Ամէնուն յայտնի է, թէ թիւրք կառավարութեան ծանր հարկերը վճարելու համար հայ գիւղացին ամէն տեղէ պանդխտութեան կը դիմէ: Անյաջողութիւնը և կարգ մը ուրիշ պարագաներ հայ պանդուխտները շատ անգամ երկարօրէն կը պահեն օտարի դուռն ու փողանը: Վերջին քանի մը տարիներու մէջ, այս պարագաներուն վրայ աւելցած է նաև կառավարական արգելքը, որով պանդուխտ հայը իր ընտանիքին գիրկը դառնալէ բացարձակապէս կը զրկուի, թէև ամենայն սրտով բողոքայ: Նոյնպէս պանդուխտի ընտանիքին, ամուսնուն, զաւակներուն չթողատուի իրենց սիրելիին քով օտար աշխարհ երթալ:

Վերջերս Մշոյ դաշտի դժբախտ գեղջկուհիներէն շատերը, որոնց ամուսինները տասնեակ տարիներով օտարութեան մէջ են, առաջնորդին կը դիմեն, վիճակին կը յայտնեն. ելք մը, ճար մը կը խնդրեն, կամ ամուսնին վերադարձնելու և կամ իրենց համար արտօնութիւն մը ստանալու անոնց քով երթալու:

Խոսրով վարդապետը, Վ. Պօլսի թուրքմագիներէն աւելի ստոր, սրիկայի մը վայել ոճով կը պատասխանէ. «Ճը վերս ի վեր թէ ձեր էրկիները չեն վերադառնար, ինձի ինչո՞ւ դիմեր էք, գացէք թրքացէք, ամուսնացէք»:

Յետք սա հոգևոր առաջնորդը, լսեցի՞ր իր փողոցային հայհոյութիւնը. իմացա՞ք իր իմամական քարոզը, թրքանալու խրատը: Եւ երանի թէ ասի միակ դէպքը ըլլար իր իսլամական պրօպագանդին: 2հ:

Այս կողմերը առանց առաջնորդի հրամանագրին, քահանաները պսակ չեն կատարեր: Մէկ հրամանագիրը 20 զըշ պրժէ, գումար մը, որ ներկայ տնտեսական նեղ վիճակին մէջ հայ գիւղացիին բաւական նեղ կը թուի:

Վերջերս կարգ մը աղքատ հայեր իրենց զաւակներոյ ամուսնութեանը առթիւ, հրամանագրի համար առաջնորդին կը դիմեն և կը խնդրեն, որ իրենց վիճակին խնայելով՝ հրամանագիրը քիչ մը աժանկէկ ծախէ իրենց: Առաջնորդ էֆէնտին կը մերժէ: Հայուն մէկը նկատել կուտայ թէ, եթէ նիւթական բեռը ներկայիս նման ծանր ըլլայ, շատ հայեր չպիտի կրնան իրենց որդիները ամուսնացնել և չափահաս օրիորդները հօրերուն տուն մնալով յաճախ թիւրքերէն կ'առուանդուին և մերթ ալ իրենք թրքութեան գիրկը կը դիմեն: Օրմանեանի զաւակը կը պատասխանէ. «Կ'ուզէք դուք ալ ձեր աղջիկներուն հետ թրքացէք ու իմ կողմէս մէյմէկ ձեռք հագուատ ներկայ ձեզի, եթէ այդպիսի քայլ մը առնէք»:

Ե՛հ, պիտի ըլլան մարդիկ, որ տարակուսին, չհաւատան գրածներուս. կարելի՞ է, որ հայ եկեղեցիի վարդապետ մը, այդքան անպատկառ, լրբօրէն խօսի իր եկեղեցիին այնքան սիրով փակած ժողովուրդի մը: Սակայն ես ալ գուցէ չհաւատայի, եթէ անձամբ տեղեակ չ'ըլլայի իրողութեանց:

Ահա նմուշ մըն ալ իր քրդասիրութեան: Այս կողմերը Սայիտ անունով մի ոճրագործ քիւրդ կայ, որ անհամար հայ կոյսեր ու հարսեր առեւանգած է, հայ կիներ բռնաբարած է, հայ մարդոց արիւնը թափած է: Այս հրէշը, ամիսներ առաջ, կառավարութեան հետն ալ ընդհարում մը ունեցաւ քրդերու զինուորագրութեան առթիւ, անկէ ի վեր փախտական էր:

Անցեալ աշնան Խոսրով վարդապետը միւթէսէրիֆին կը գիւժէ և կ'առաջարկէ միջամտել Սայիտի և միւթէսէրիֆի միջև հաշտութեան մը համար: Դեկտեմբերի 16-ին Խոսրովը յաջողութեամբ ի գլուխ հանեց այդ գործը: Սէյիտից 150 սուկի իրեն և 200 սուկի ալ միւթէսէրիֆին համար կողոպտեց և անձամբ ինկաւ այդ ոճրագործ-աւազակին առջևը, տարաւ միւթէսէրիֆի տուն: Ասոր վկայ են ոչ միայն ակնատեսները, այլև առաջնորդարանի արձանագրութեան տոմարը, ուր նամակներու շարքին մէջ քանի մը տնոյով նշանակած է. «Հոկ... Սէյիտին, նոյ... Սէյիտին, դեկ... Սէյիտին» և շն:

Եւ այսպէս, որքան փութկոտութիւն ունի Խոսրովը քիւրդ աշիրէթները, հայուն արիւնը ծծող հրէշները, կառավարութեան հետ հաշտեցնելու, նոյնքան ալ թուլամորթ է իր ինամոցը յանձնած ժողովուրդին իրաւունքները կառավարութեան դուռը պաշտպանելու:

Այս ձեռն կառավարութիւնը Մշոյ դաշտի հայերը նիւթապէս տկարացնելու հաստատ որոշումովը՝ սաստկացուց հարկահաւաքութիւնը: Օր չկայ, որ հարկահաւաքներու խուճաբերը այս ու այն գիւղը չմանէին և ծեծի ու հայհոյանքի տակ դրամ չժողովէին: Երբէք ասոր նմանը տեսնած չէր: Ալ այնպէս եղաւ, որ դաշտի հայ գիւղերը մտադրեցան դարնան ձգել իրենց տունները և հեռանալ: Սակայն այդ մտադրութենէն առաջ ուզեցին խնդիրը կառավարութեան պարզել և իրենց վիճակը, օրւան դրութիւնը՝ միւթէսէրիֆին, կուսակալին ու եթէ հարկը պահանջէր՝ Բ. Գրան հասկցնել:

Գիւղերու ռէսնները հաւաքեցան Մուշ, պատրաստեցին Լահիա մը, դիմեցին առաջնորդին, որ իրենց առջևը ինչայ կառավարութեան դուռը երթալու: Խոսրով աղան ոչ միայն մերժեց քաղցիլ ռէսններուն, այլ հրապարակաւ յանդիմանեց զանոնք: Ա՛րսեն, առաջնորդարանի մէջ կը պօռար. — «Ի՛նչ հաւաքեք, Մուշ էք եկեր, դուք չէք գիտեր, որ կառավարութեան տուրքը պէտք է վճարուի, ձեր այդ բողբոջը ի՞նչ կ'ուղէք ըսել, միթէ միտք ունիք աստամբիլը հայդէ՛, հայդէ՛, խելացի եղէք, դարձէք աներնիդ գացէք»:

Խեղճ ռէսնները տւին իրենց Լահիան, սակայն քանի որ իրենց առաջնորդ, քաղաքական պետ համարուող անձնաւորութիւնը, իրենց հետ չ'ըլլալէն զատ, իրենց հակաակ էր, կառավարութիւնն ալ իր քէֆին համաձայն վարեցաւ: անոնց հետ: Բանտարկեց, սպառնալիքներ ըրաւ և յետոյ թողուց առանց ուէ՛ բարեփոխումի:

Այսպէս մէկ կողմէն ժողովուրդը կը ներէ քաղաքականապէս, միշտ անոր իրաւունքները թիրբ անիրաւ կառավարութեանը ոտնակոխ ընել տալով: Ժողովուրդի սրբութիւնները գազանօրէն բռնաբարող վայրենի քրդերը պաշտպանելով, իսկ միւս կողմէ ալ կրօնական տղրուկներով կը կեղեքէ դաշտի հայ բնակչութիւնը:

Առաքել վարդապետ անունով մի վիժած հայ, իժի ծնունդ մը, որ արբեցողութիւնը իր գագաթնակէտին հասուցած է, անբարոյականութեան մէջ իրմէ առաջդէմը

չգտնելու: Խոսրովի վերին պաշտպանութեանը տակ, այս լիտին դաշտի այս ու այն գիւղերը կը պտտի, ամէն կարգի լըբութիւններ կ'ընէ: Խոսրովը խուլ է եղած բոլոր բողբոջներուն: Նոյնիսկ կը կանչէ այդ փճացած արարածը, եկած բողբոջները կը կարգայ անոր և խնդալով մը կ'ըսէ. «Ձեռն ամէնար ասոնք այսպիսի բաներ կը գրեն, ի՛նչ կը մտածեն, միթէ ես իրե՞նց պիտի լսեմ»:

Եւ ինչո՞ւ լսէ ժողովուրդի արգար զայրութի ձայնին: Միթէ ինք պակաս կը մնայ Առաքել վարդապետէն:

Հասկանալի է, որ ժողովուրդի զայրոյթը կ'աճի Խոսրովի դէմ:

Մեծ պահոց վերջին ուրբաթ գիշեր, խաւարման պահուն, մշեցիները բեմին վրայ սիսեռով և հողի կողտերով կը քարկոծեն Խոսրովը, իր իրենց դժգոհութեանը արտայայտութիւն, սակայն կը յուսանք, թէ շուտով սիսեռէն կապարի պիտի անցնի, դժգոհութիւնը ճշգրտօրէն արտայայտելու համար:

Ն Ա Մ Ա Կ Ա Խ Լ Ա Թ Է Ն

26 սեպտեմբեր, 1903

Ճշմարտախօս քիւրդ մը. — Նախորդ նամակովս յիշած էի հասնանցի համիրիէներու հայածելը ու ձերբակալելը կառավարութեան կողմէ: Ի միջի այլոց ձերբակալեցաւ նաև համիրիէ հազարապետ Փատէն: Հարցաքննութեան պահուն կը պահանջէ բացատրել թէ ի՞նչ իրաւունքով և խղճմտանքով ժողովուրդը թալանած, կողոպտած է իր մարդոց ձեռքով:

— Ի՞՞՞՞՞նտըմ, կը պատասխանէ Փատէն, իրօք է, իմ հրամանով և իմ մարդոց ձեռքովը եղած են ձեր ըսած աւար աւերածները և աւելին ալ, սակայն այդ չարագործութեանց հեղինակը, արմատը ես չեմ, այլ եկող գացող կուսակալները: Եթէ անոնց հրամանովը և հաճութեամբը չ'ըլլար, ոչ ես, ոչ ալ իմ մարդիկը կը համարձակէիք ժողովուրդի մէկ շուղին դպիլ: Մեղաւորը անոնք են, որ թոյլատրեցին մեղ իրենց գիտութեամբը և հաճութեամբը գործել այս ամէն:

Հարցաքննիչ պաշտօնեան մի քիչ սրտմտած կ'ըսէ.

— Ինչո՞վ կրնաս ապացուցանել խօսածներուդ ճշդութիւնը:

— Ի՞՞՞՞նտըմ, կ'ըլլայ Փատէի պատասխանը, դուն ի՛նչէն գիտցար, թէ հասնանցի համիրիէներն են ժողովուրդին այսքան չարիք հասցնողները: Դուն որ դեռ երէկ եկար այս կողմերը, այդքան շուտով հասկցար չարագործներու ով ըլլալը, միթէ՞ մեզի հետ տարիներով ապրող կուսակալները չէին գիտեր այդ ճշմարտութիւնը: Աւ եթէ գիտէին, ինչո՞ւ օր մը օրանց մենէ մէկը չ'ընեցին, չ'արտարկեցին, չ'ապառքեցին: Ասի ապացոյց մը չէ՞, թէ անոնք մեզի հետ մեղսակից էին և չարիքին բուն հեղինակները:

Հայ յեղափոխականը չէ անի խօսողը, համիրիէ հազարապետ մըն է, կառավարական բարձր պաշտօնեայ մը: Մենք հայերս չենք, որ կը բանանք ճշմարտութիւնը, այլ սուլթանի որդեգիրն, անոր հաւատարիմ մարդը: Աւրեմ ալ կարելի՞ է կասկածիլ մեր յաճախ կրկնածին՝ թէ Հայաստանի մէջ գործուած բոլոր գողութիւնները, ոճրագործութիւնները, մարդասպանութիւնները, աւազակու-

Թիւնները կառավարութեան գիտութեամբը և մասնակցութեամբը տեղի կունենան:

Ահաներ չէ, որ կը պահին, ասի հաստատելու. արդար քննութիւն մը կը բաւէ երեւան բերելու, թէ ոչ միայն վերին հրամանի մը համաձայն կառավարական պաշտօնեաները կը թողարկեն այն բոլոր չարագործութիւնները, որ կը գործէին մեր երկրի մէջ, այլ չարագործներուն օգնութեան ձեռք կը կարկառուի շահու տեսակէտէ մը:

Արդարութեան պաշտօնեաները, դատաւորները, փաստաբանները, բոլորն ալ ընկերութիւններ հիմնած են գողերու և աւազակներու հետ, որոնք իրենց ձեռք ձգած աւարը կը կիսեն պաշտօնեաներու հետ, պայմանաւ որ բռնած միջոցին օրէնքին դէմ պաշտպանեն զիրենք: Ու չէ՞ որ այս երկրին մէջ օրէնքը քմահաճոյք մըն է արդարութեան պաշտօնեաներու ձեռքին մէջ, որոնք ուզածնուն համաձայն կը կարգադրեն ամէն ինչ:

Վը կարծեմ, եթէ Եւրոպայի մէջ ալ աւազակները այս կարգի զօրեղ պաշտպանութիւն մը կրէին, անոնց թիւը ներկայ եղածին տասնապատիկը պիտի ըլլար: Գէթ իբրև ապրուստի միջոց շատեր պիտի դիմէին, կառավարութեանէն քաջախելած, այդ արհեստին: Ալ ինչո՞ւ գարմանալ, որ մեր երկրի մէջ գողութիւնը և աւազակութիւնը շատ զարգացած են, քանի որ ատի կառավարական պաշտօնէից մ'են աշնորհն է և աւազակները հասարակ բանւորի դեր միայն կը կատարեն:

Կասկածներու իրականացումը. — Վը գրէի նախորդ թղթակցութեամբս, թէ քրդերուն վրայ եղած ճնշումները կեղծիք մըն է լոկ, Եւրոպայի աչքին թող փչել մը, աչքկապութիւն մը, հետեւաբար վաղանցուկ: Շատ ժամանակ չէ անցած այն օրէնէ ու գուշակութիւններս կ'իրականանան: Վոփի մէջ, ուր կը կատարէր համիդիէններու եղեռնագործութեանց քննութիւնը, մուսնտիկ կանչել կուտայ տեղւոյն կառավարութիւնը, թէ ներկայիս այլևս ինքը չկրնար ընդունիլ ժողովրդի կողմէ տրւած խնդրագրերը ու բողոքագրերը, ուրեմն պարտին դադրիլ մինչև յարմար ժամանակիս — թերևս այդ յարմար ժամանակը Թիւրքիոյ կայսրութեան կործանման օրը ըլլար: Իսկ կանխաւ եղած բողոքներուն և խնդրներուն ալ պատասխանած է՝ ամէն մարդ թող իր տունը դառնայ՝ երբ հարկ ըլլայ՝ կը կանչուի:

Թիւրքիոյ գործերէն քիչ շատ հասկցողը կիմանայ, թէ ասի ըսել է՝ «ալ կը բաւէ ինչ որ ըրինք»: Սակայն ի՞նչ էր եղածը, — միայն մէկ երկու մարդու աւարին վերագարձը, ուրիշ ոչինչ:

Յին մեթոստին վերսկսումը. — Ամիս մը չտեկեց առերևոյթ հանգստութիւնը, որ վայելեցինք, վերսկսան աւարաւերը, թալանը ու մարդասպանութիւնը:

Յունիսի 14-ին Խօթալու գիւղէն կը փախցնեն մի հայ աղջիկ, Հապրի կը տանին, բռնի կը թրքացնեն: Յունիս 29-ին կ'առևանգեն նոյն գիւղէն մի կին և բռնի կը թրքացնեն: Յունիս 22-ին Եօնիալու բնակող Բշար աղայի մշակները կըսպաննեն երկու հայ կիներ, որոնք գիւղերը մուրալու ելած էին: Գիւղները կը նետեն Մուրաւ գետ, ջուրը կը բերէ, կը հանէ Եօնիալայ առջև: Կառավարութիւնը Եօնիալեցի հայերէն 500 ղըշ կ'առնէ, ապա կը թողու, որ դիակները թաղեն: «Եթէ այդ գուժարը չվճարէք, կըսպաննան կառավարական քննիչները, տեղեկագրին մէջ կը նշանակենք՝ Եօնիալեցիները սպաննած են»: Սպանալիքը իր արդիւնքը կուտայ:

Ճիպրանցի Աւտին անուն քիւրդը կը բանեցնէ զարաղի մի հայ 5 օր որմէ ետք հալը կը խնդրէ՝ որ իրեն թողարկուի գնալ իր տուն, իր գործին: Աւտին կը բարկանայ, հայը հրացանի կը, բռնէ ու տեղն ի տեղ կըսպաննէ:

Առնչիկ գիւղի քրդերը իրենք իրենց մէջ կը կուլին յետոյ կը վառեն գիւղին մէջ գտնուած 5 հայ տունները, որոնք կուլին բնաւ խառնուած չէին:

Տուրքերու գանձումը արդէն անօրինակ կերպով ուխտութեամբ առաջ կը տարւի: Շարք չկայ, որ հարկահաւաքները գիւղը չմանն և ծեծ ու քաշի տակ դրամ չհաւաքեն:

Կոտորածի սարսափ. — Շուրկ մը կայ թիւրքերու մէջ հայերը կոտորելու: Լոկի մնչիկ կը փսփսան հոս ու հոն: Այդ փսփսուքը մեծ երկիւղ պատճառեց Բաղէշի մէջ յուլիս 11-ին և 12-ին, երբ հայերը տեսան, թէ փոխները խուճախուք կը շըջին շուկան և թաղերը, Ալեքի կոտորածներու ժամանակն ալ այդ նշանը տեսած էին հայերը ջարդի սկսելէն առաջ, ու այդ էր, որ զիրենք իրարանցումի մղեց: Աէս ժաման մէջ գոցեցան բոլոր հայ խանութները: Ամէն զք դէպի ապահով վայր մը կը փախչէր:

Թիւրքերը պատճառանք մը կը փնտռէին իրենց մտադրութիւնը ի գլուխ հանելու, հայերը ջարդելու: Եւ ինչո՞ւ չ'ընեն, քանի որ առաջին ջարդը մարտեցին, որը իրենց հարստանալուն ալ պատճառ եղաւ:

Բաղէշի հայը ստիպւած գաղթել սկսած է, շատեր կը թողուն իրենց բոլոր ունեցածը ու Ամերիկա կը փախչին:

Արդարադատութեան (՝) նմուշ մը. — Անցեալ տարի այս օրերը Փարիսանդ գիւղի մէջ մի քստմենի ոճիր կատարեցաւ: Աթմաքի Ֆէրման անուն քիւրդը իր քանի մը համախոհներով, որոնց մէջ կային մէկ քանի հայեր ալ, գիշերայն կը կոխէ գիւղին ուսեալ երիտասարդներէն Թովմասին տունը: Կըսպաննէ Թովմասը կը մորթէ նորա ծեր մայրը և մշակը, կը կողոպտէ տունը և կը հեռանայ: Վ'ազատին միայն Թովմասի կինը և մի բանւոր, որոնք ներսին սենեակներէն միոյն մէջ կը պահէին: Ազատողները ճանչցած էին Ֆէրմանը և անոր ընկերակից հայերը: Հետեւաբար բողոքեցին կառավարութեան, որ ձերբակալեց հայերը միայն: Հայերէն միոյն հագուստներու վրայ արեան հեղքեր գտնուեցան: Արիւնոտ մի սուր ալ գտաւ կառավարութիւնը: Երկու ականատես վկաներ ալ կային, որոնք վկայեցին՝ թէ տեսան ոճրագործները իրենց քստմենի արարքին մէջ: Ամէն զք կըսպասէր լսել ոճրագործներու դատավճիռը, սակայն երկու օր առաջ զարմանօք լսեցինք, թէ ան պարտարձակ եր են:

Փոքրիկ քննութիւն մը, նոյնիսկ ոճրագործներու բերանէն ստուգուած, պարզեց թէ 300 կլորիկ ոսկիները շահած էին յանցապարտներու արդարացումը:

Այսպէս ոսկիներու դէզին վրայ կը խաչեն արգարութիւնը մեր երկրի մէջ: Ո՞վ դրամունի և կրնայ կաշառել դատաւորն ու դատական անդամները, միշտ իրաւունքը անոր է: Վը պատմեն թէ Թիւրքիոյ մէջ, օրին մէկը, աղքատ մը կը գանգատի եղեր, թէ մկներ իր սպայնը կերեր են: Բոլոր ներկայ եղողները կը ծաղրեն մարդը՝ «Մուկը սպայն չուտեր», կ'ըսեն: Քիչ ետք հարուստ մը կը պատմէ, թէ իրենց տան մկները արօրի երկաթէ խովը կրծեր են, բոլորն ալ «աղայի խօսքն է», կ'ըսեն: Գացէք հասկցէք, թէ ինչ դեր կը խաղայ դրամը այս երկրին մէ

Ասոր հակառակը լսեցէք: Յուլիս 14-ի գիշերը կամախ գիւղէն 5 մարդ, ըստ սովորականին, պրակ կը գնան փայտ տանելու Բաղէշ ծախելու: Գիւղացիներու սովորութիւնն է միասին գնալ մինչև պրակը և հոն բաժնել իրարմէ, ամէն մէկը իր բաժնին մէջ փայտ կտրելու համար:

Երեկոյեան երբ տուն կը դառնան, կիմանան թէ իրենց մէկ ընկերը, խմբո անւամբ, վերադարձած չէ: Միւս օր խմբոյի ազգականները մարդը փնտռելու գացին: Երեք օր ետք գտան դիակը անտառի մէջ, քրդական նաչախ ըսած գործիքով գլուխը ձեղքւած: Անտառը մօտ է Բայրան քիւղ գիւղին և շատ հաւանականութիւն կայ, որ բայրանցի քրդերը սպաննած ըլլան մարդը: Բայց կառավարութիւնը բանտարկած է անոր հետ մինչև անտառ գացող չորս հայերը, թէ դուք ընկերացած էք անոր, հետեւաբար դուք սպաննած կ'ըլլաք զայն:

Ո՛ր ես, արդարութիւն:



Կ Ի Լ Ի Կ Ի Ա Յ Ի Կ Յ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

10/23 հոկտեմբեր, 1903

Մեր դժբախտ երկիրն ալ նախանձելի ոչինչ ունի: Մարդ տեսակ մը քամահարնք կըզգայ միշտ սև էջեր արտագրել՝ սև-սև լուրերով շղթայւած: Երբ կ'ուզես գրիչը ձեռք առնել, գրելիք ոչինչ կայ աչքի առջև, որը քիչ մը ոգևորիչ, խրախուսական բան մը պարունակէ իր մէջ:

Մեր կաթողիկոսը. — Տարիներ, եօթնեակ տարիներ, հեկտէ հետեւեցանք մեր կաթողիկոսի ընտրութեան գործին. կառավարութիւնը տարիներ ձգձգեց, ամէն տեսակ ինքրիկներ լարեց, ընտրութիւնները բեկանեց, վերընտրութիւններու վրայ հսկեց և վերջիվերջոյ յաջողեցաւ Երուսաղեմի կարմիր գիւնները ճնկելու միակ վարժք է շք է ք ճ ի ն իբր կաթողիկոս մեր գլուխը դնել: Ի՞նչ կ'ընէ մեր կաթողիկոսը, թերևս հետաքրքրի արտասահմանի հայութիւնը: Մեր կաթողիկոսը քեյփ կ'ընէ: Ցարդ միակ գործունէութիւնը կը կայանայ պարտէզներու մէջ իմամ-պայըլըր ուտելու և Ադանայի վալի Պահրին շողորթելու մէջ: Թուրքոսթան և պորտաբոյժ կղերի ծանօթ քաղաքականութիւնը: Լսած ենք, որ ժամանակէ մը ի վեր Ադանա կը մնար և ամսոյս 6-ին մեկնած է Մէրսին: Չենք գիտեր, թէ Պօլիս երթալու արտօնութիւն ստացաւ թէ ոչ: Կ'երևի Համիդը չար և անհնազանդ զաւակները կրթելու գործով զբաղած է: Խրատւած, խելօք հայ զաւակներուն զարապաշներու բարեմաղթութիւնները և աղօթքները ընդունելու սիրտ չունի: Չ'արժեք ասկէ աւելի զբաղել մեր կաթողիկոսով, որու վրայ կիլիկիացիներու դրած յոյսերուն պզտիկ մասն ալ կը վախնանք, որ չի պիտի իրականանան. իցի՛ւ թէ սխալած ըլլայինք:

Նոր տուրքեր. — Երկիրն՝ մէկ ծայրէն միւս ծայրը՝ անտեսական անյուր տազնապի և քաղաքական մեծ վտանգ մը կ'անցնէ: Մակեդոնական շարժման հետեւանօք Թիւրքիոյ բանակներուն շարժումն վիճակի մէջ դրելը և զօրքերու փոխադրութիւնը նոր տուրքերու դուռ բանալով հանդերձ թիւրք խուժանին քրիստոնեաներու և մասնաւորապէս հայերու հանդէպ նոր գրգռումի պատճառ դարձաւ: Իհարկէ, ցարդ իմացած է ան ձ ն ա կ ան տ ու ը ք անւան տակ հաստատուած նոր հարկը, 10

զուրուշէն մինչև 10 ոսկի: Այս նոր տուրքն ալ ամէն տեղ վայրագ կերպով կը հաւաքուի: Նւազագոյն 10 զօր գրելիք է անւանական է, աղքատներէն անգամ բունի 10 զօր. կը գանձեն: Չենք ուզեր ծանրանալ այս առթիւ ի գործ դրած անազնիւ և բիրտ միջոցներու վրայ, որոնց կը դիմեն թիւրք կառավարական պաշտօնեաները: Չունիս, կաշիգ կը քերթենք ու կ'առնենք, այս է թիւրք պաշտօնեաներու աղքատին դէմ շանթի պէս արձըրած բառերը: Ու իրօք ալ վայճ չունեցողին, որ կաշին քերթելու աստիճան կը նեղի ու կը չարչարի անխիղճ ու անգութ պաշտօնեաներու ձեռքը: Իսկ հարուստներուն ալ նպատակ չունի կառավարութիւնը մի քանի ոսկիներով օձիքը թող տալու: «Պետութիւնը հոգսեր, պէտքեր ունի, դուք պարտաւոր էք անոր օգնել» — և ահա 50-100-ական ոսկիներու պահանջն է, որ կը ներկայացուի: Տո՛ւր, տո՛ւր, անվերջ տուր. տուրմա վէր, սորմա վէր — ահա թիւրք կառավարութեան իր հպատակներուն վարժեցուցած տալու եղանակը: Անձնական նոր տուրքը կարծես բաւական չէր անտեսապէս քայքայած ժողովուրդին արիւնը քամելու. անգին հարկելի ուրիշ բաներ ալ կային, պէտք էր զանոնք ալ հարկի սրով զարնել և բարեխիղճ կառավարութիւնը նոր տուրքեր հաստատեց ընտանի կենդանիներու վրայ: Ազգի գլուխ 15, ձիւ և ջորիի 10, էջի 5 և հաւու գլուխ 1 զուրուշ:

Ընդհանուր տազնապ. — Ընդհանուր թշուառութիւնը անկարագրելի է և դժգոհութիւնը համատարած: Թիւրքերն ալ շատ դժգոհ են և այս դժգոհութիւնը իր գագաթնակէտին հասաւ, երբ բէտիֆները զէնքի տակ կանչուի սկսան: Իր կատաղութիւնը կ'ուզէ թափել հայերու վրայ: Երկիրն ամէն կողմը դրօշին տակ կանչուած շատ մը թիւրքեր դասալիք եղած և լեռներն ու սարերը քաշած են: Առնւած ստոյգ տեղեկութեանց նայելով՝ դասալիքներուն թիւը հետզհետէ կը շատնայ և երկրի արդէն նւազ անգորութիւնը բոլորովին խանգարւած է: Զինուորութենէ խուսափողներու կատարած վայրագութիւններն ալ անպակաս են: Կեսարիոյ մէջ 10 տարեկան պզտիկ տղայ մը առւանգեր և գազանական կիրք յագեցնելով՝ խեղճ տղուն չարաչար մահուան պատճառ դարձած են: Մարաշու մէջ թիւրք խուժանը, մզկիթներու և հիւճրէներու մէջ համախմբելով, խորհուրդներ կ'ունենան գեաւուրները չի ջարդած զինուոր չեթալու. հոն թիւրքերը իրենց խանութներու մէջ պատրաստի զէնք կը պահեն եղեր: Միւս կողմէն մակեդոնական ինդրի տակէն Մուկոֆը իրենց դէմ տեսնելու հեռապատկերէն թիւրք ամբողջ սոսկում կըզգայ: Ադանայի նահանգէն 16 վաշտ զէնքի տակ կանչուելով՝ անմիջապէս փոխադրուելու հրահանգ եկած է: Թիւրքերը Ադանայի և Մէրսինի մէջ սկսած են տրամաբանել՝ թէ պատերազմը պուլղարին հետ ըլլար, անոր ալ լաւ դաս մը կուտայինք, ինչպէս քանի մը տարիներ առաջ յոյնի տէինք, բայց պուլղարի ետեւէն ուսը պիտի ելէ: Այս միտքը շատերուն սարսափ կ'ազդէ եղեր և մօտ 30-40 թիւրք զինուորութենէ փախեր ու լեռները ելած են Մէրսինէն: Մէրսինի հայութիւնը, որ ամառանոցները կը գտնուի եղեր, զօրքերուն զէնքի տակ կանչուած ըլլալու և շատ մը թիւրքերուն դասալքած ըլլալուն լուրերը իմանալով, իրենց վախէն աւանանոցները կը ձգեն, Մէրսին կըսկսին փախչել և մեկ-երկու շաբաթէն բոլոր ամառանոցները կը պարպուին:

Պէյրուտ. — Պէյրութի դէպքերը արդէն իմացած

ըլլալու են: Մօտ 60-70,000 քրիստոնեաներ Լիբանան ապաստանած են. վերջերս կը լսւի՝ թէ հետզհետէ կը վերադառնան: Կուսակալը փոխւած է և նորը՝ Պրուսայի նախկին վալին Խալիլ փաշայ անւամբ՝ արդէն Պէյրուսի հասեր է: Վերջերս կը լսւի՝ թէ Լիբանան փախչողներ հետզհետէ կը վերադառնան, բայց ամերիկեան զրահա-
 ւորներ՝ Պէյրուսի առջև դեռ կը սպասեն եղեր: Կը լսւի թէ Պէյրուսի դէպքերու առթիւ քրիստոնեաները շատ թշուառութիւններու մասնւած են, բայց եգիպտաբնակ սիրիացիներ իրենց մէջ հանգանակութիւններ կատարելով՝ արդիւնքը օրը օրին հասցուցեր են իրենց հայրենակիցներուն:

Տեղեկութեանց տխուր շարքերը չփակած՝ կ'արտագրեմ հոս մասնաւորներու եկած մի քանի նամակներ, որոնք կը պատկերացնեն մեր երկրի ներկայ դրութիւնը:

Առանա.— Հոկտեմբեր 3 թւակիր Ադանայէն գրւած նամակէ մը կը քաղենք հետեւեալները.—

«Այստեղի կացութիւնը օրըսօրէ վատթարանալովոյ է. հոս ալ սկսան ընտրիքները հաւաքելու: Անցեալ օր հեռագիր մը եկաւ կառավարութեան, որուն պարունակութիւնը կառավարական շրջանակները բաւական տահուկոյ ըրաւ: Իէտիֆները 8 օրւան մէջ զէնքի տակ առնելու համար Ֆէրիզ փաշան հրահանգ ստացաւ, անանկ որ հիմա Ադանայի կուսակալութեան բոլոր ընտրիքները զէնքի տակ են: Թիւրք ժողովուրդը սաստիկ կերպով զայրացած է թէ կառավարութեան թէ քրիստոնեաներու դէմ և առիթ չի փախցնել իր դժգոհութիւնը արտայայտելու: Զէնքի տակ առնւած ընտրիքները շատ վայրագութիւններ կ'ընեն. գողութիւն, թալան, առևանգում, սպանութիւն և ըն անպակաս են միշտ: Տուրքերը շատ խստութեամբ կը հաւաքուին»:

Հոկտեմբեր 18-էն կը հաղորդեն. «Ցաճիկներու ընթացքը բոլորովին ծայրայեղութեան աստիճանին կը հասնի. այս օրեր գրեթէ կատաղած են: Այս շաբթուան մէջ երկու առևանգումներ պատահեցաւ:

«Կոյս աղջիկ մը, Ատէլ անունով, նախկին ուսուցչուհի, բամբակ քաղելու համար դաշտ գացած էր իր ընտանիքով: Հոգ քանի մը թիւրք երիտասարդներ կըսկսին աղջկան հետեւիլ. աղջիկը չեն կրնար համոզել իրենց հետ փախչելու, ան ատեն կը մտածեն դաշտէն բռնի փախցնելու միջոցը. բայց առիթը չեն երկայանար: Կը խորհին ուրեմն Ադանա վերադառնալուն՝ ճամբան առևանգել և իրօք ալ աղջիկը շատ մը ընտանիքներու մէջ սայլով Ադանա վերադառնալու պահուն՝ թիւրք երիտասարդներ բոլորովին զինւած կը յարձակին, սայլապանին կը հրամայեն, որ սայլը կեցնէ ու ինք մէկդի կենայ, և աղջկան թուէն բռնելով՝ սայլէն վար կ'առնեն, կը տանին՝ հակառակ աղջկան աղաղակներուն և հանդիսատես միւս ուղեկիցներու գոռում-գոչումին: Յայտնի չէ թէ աղջիկը ուր տարած են: Կառավարութիւնը ոճրագործները զըտնելու համար ուէ ձեռնարկ չէ ըրած տակաւին:

«Երկրորդ առևանգումը Ադանայէն չորս ժամ հեռու գտնուող Աբտողլու գիւղը կը պատահի հետեւեալ պայմաններու մէջ: Հաճի Պողոս անուն երկրագործութեամբ պարապող հայու մը Սրբուհի անւամբ որբեայրի աղջիկն է, որ թիւրք բռնութեան ու գազանութեան զոհ կերթայ: Աբտողլուցի Քիպար օղլու Իսմայիլ անւամբ թիւրք մը, յիշեալ հաճի Պողոսին 200 արտավար ընդարձակութեամբ արաբ բռնի կերպով քանի մը տարիներէ ի վեր կը մշակէ:

Պողոսը դատարաններու կը դիմէ, իսկ թիւրքը քէն պահելով՝ վրէժ լուծել կ'ուզէ և քանի մ'անգամ Պողոսը սպաննել կը փորձէ: Թւականէս 2 օր առաջ (հոկտ. 16) Իսմայիլը գիշերանց կերթայ Պողոսի տունը քանի մը ընկերներով և բռնութեամբ Սրբուհին կ'առնեն, դաշտը կը տանեն. կ'ուզեն խեղճ կինը անպատուել կինը երկար ժամանակ ինքզինք կը պաշտպանէ, կը պօռայ, կը կանչէ, օգնութիւն կը հայցէ, բայց ոչ զք օգնութեան կրնայ հասնիլ: Գիւղացիներ ահաբեկած՝ իրենց տունէն դուրս չեն ելլեր: Իսկ Իսմայիլ և ընկերները իրենց անասնական կիրքը յագեցնելու համար, տեսնելով թէ դիւրութեամբ չպիտի կրնան գլուխ ելլել կըսկսին հրէշային տրամբ: Նախ բռնի կը մերկացնեն ու կնկան սրունքները դաշոյնով կը խոցոտեն և յետոյ դժոխային դիտաւորութիւնը կը կատարեն անպաշտպան և արիւնլալ կնկան մը վրայ, որը արդէն մարած էր: Այս եղեռնական տրամին հանդէպ կառավարութիւնը անտարբեր կը մնայ: Հիւպատոսները իմանալով՝ դիմումներ ըրած են կառավարութեան: Հարկ չկայ ըսելու, որ այս ալ կերթայ խառնելու հայ բիւրաւոր ցաւերու ծովին»:

Կեսարիա, 9 հոկտ. — «Այստեղ 30-40 օրէ ի վեր ամբողջ գործառնութիւններ դադրած են. դրութիւնը տագնապալի է: Քաղաքի և շրջականերու բոլոր ընտրիքները զէնքի տակ կը կանչուին և զինուորական հագուստին կը հագցուին: Եւ միւս կողմէն իրենց որոշեալ վայրը փոխադրելու միջոցներուն պատրաստութիւնն ալ կատարեալ արագութեամբ առաջ կը տարւի. միայն 3-4 օրէ ի վեր փոխադրութեան պատրաստութեան մէջ թուրութիւն կը նշմարուի, թէպէտ վաշտերուն ամբողջացումը դարձեալ բռնու կերպով կը շարունակուի: Հայութեան վիճակը դառնացած է. վտանգներ անպակաս են»:

Մէրսին, 5 հոկտ. — «Այսօր նոր հեռագիր մ'եկած է Պոլսէն՝ հրամայելով, որ զէնքի տակ կանչուած բոլոր զօրքերը և ձիերու փոխադրութիւնը յետաձգեն. պատճառն անհասկանալի է. խփփութիւններ կը շարունակուին»:

Ահա Կիլիկիոյ վիճակը, և որչափ ալ մեր եղբրքը եւրօպական զրահաւորներուն մատչելի ըլլան, մեր կացութիւնը վարդագոյն ըլլալէ շատ հեռու է:

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

(ԸՍՏԱՆՆԻՆԳԵՐՈՐԿ ՆԱՄԱԿ)

Պետերբուրգ, 10 նոյեմբեր 1903

1901 թւի յունիս ամսին «Իրօշակ»-ին ուղարկած իմ տասնևվեցերորդ նամակը վերջացրել էի այս խօսքերով.

«Երևի մօտիկ սպառնալու՝ կովկասեան քաղաքներէլ հրապարակները կըսկսեն զարգարել այնպիսի դէպքերու և կ'առաջարկուին ինչն էր ի արձաններով որոնց միակ մեծութիւնը եղել է կամ արիւն թափել կամ ստրկացնել որոնց անունը կովկասեցիին կը ծածկէր, եթէ ազատ լինէր, միմիայն անարգանքով և ատելութեամբ...»

«Ար բարձրացնեն Գեւուրեանս գլխարկները և կոտորեն ժողովրդին գլուխ խոնարհեցնել...»

«Հելվեցիան Աիլհէլմ Տէլ ծնեց՝ այդ անարդ գլխարկ ոտի տակ տալու համար...»

«Չի՞ ծնուի արդեօք մի նոր Աիլհէլմ Տէլ այն վիթխարի լեռներէ ստորոտում, ուր ըմբոստ Պրոմէթէօսը երկնքէ կրակը խլեց...»

Այլհետք Տեղեց յետոյ ամբողջ եօթ դար է անցել և մարդկութիւնը, իհարկէ, առաջագիմել է: Առաջագիմել էր և կովկասեան Գեաւերը, որ գլխարկի փոխարէն իր լուսանկարն էր ցրել թիֆլիսի դպրոցական հաստատութիւնների մէջ, որպէս զի ոչ մի աշակերտ չհամարձակի գլուխ չհոնարհեցնել իրեն հանդիպելիս:

Որքան նման են բռնակալները իրենց հոգեբանութեամբ: Բայց որքան նման է և նրանց ճակատագիրը: Չեզ անշուշտ գրած կը լինեն Թիֆլիսից՝ թէ ինչպէս կովկասեան Գեաւերի պատկերը՝ պատուուած և անարգուած՝ այսօր նեւուած է իրեն արժանի տեղը, իսկ ինքը Գեաւերը՝ երեք տեղեց գաշոյնով վերաւոր՝ չի հաւատում, որ այլևս կենդանի կը հեռանայ Կովկասից:

Ընդամենը երկու և կէս տարի առաջ մեր ասած խօսքերը այսօր ուրեմն արդարացի են:

Կը խրատուի, սակայն, բռնութիւնը: Երբէք: Կոյր ու կամակոր՝ նա անընգունակ է յարգել ժողովուրդների կամքը և կանգ չէ առնում նոյնիսկ ամենամեծ ոճիրների առաջ: Հոկտեմբերի 27-ը նոր ասպոցոց բերեց դրան: Այդ «յիշատակելի» օրը թուլամիտ նիկոլայը խոնարհեց իր միապետ-մինիստր Պլեյկէի առաջ և ամենայն հայոց կաթողիկոսի իրեն ու մինիստրին ուղղած խնդրագիր-բողոքներին պատասխանեց միևնոյն գեայերեան ձևով:

Երևի խելագար ուժեղ մեզ չպիտի հանգիստ թողնի, մինչև կովկասեան Պրովետները գէպի Պետերբուրգ ևս չմեկնի իր կարող բազուկը:

Ահա Էջմիածնի և Պետերբուրգի մէջ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տեղի ունեցած գրաւոր բանակցութիւնները հանդերձ իրենց վերջաբանով:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՆԴԻՐՔԸ ԹԱԳԱՌՈՒՄ

Նորին Օգոստափառ Կայսերական Մեծութեան Հայոց Ընդհանուր Հայրապետի Խոնարհագոյն Աղերս

«Թող տուր, Ողորմած Տէր, որ կարենամ համարձակ սիրտս բանալ Ձեր Մեծութեան առաջ այս աղերսաբարոյս միջոցաւ, որ փոխանակ անձամբ յանդիման լինել փասաւոր դատարանի էս կենդանի բառբառով արտայայտի Հոգևոյս խորագոյն վիշտը:

«Ութուն և չորս ամեայ հասակիս ծերութեամբ, ես յանձն առի աշխատութիւն անձամբ դիմել առ Կայսերական Աւհագոյն Աթոռդ: Այլ աւանդ փակեցին այն ազատ ծանապարհ, որ բաց է ամէնքի առաջ: Թող այս ներքին պետական գործոց բարձրապատիւ նախարարը իւր պաշտօնական գրով յայտնում է ինձ, որ Ձերդ Կայսերական Մեծութիւն ուղարկութեան առած է հայոց Հայրապետի անհնազանդութիւն ընդդէմ Բարձրագոյն կայսերական հրամանին: Բաւ թէ այսպէս է զի սուրբ է ինձ համար կայսեր արդար դատաստան, այլ նման մեծ մեղք էն, որ զիս այսպէս ներկայացրեր են առաջի բարի և ողորմած Կայսեր: Գարձեալ ժխտեմ, թողլ տուր ինձ, Ողորմած Տէր, որ իրաց ճշմարտութիւն համարձակիմ անպատրակ պարզել և բացատրել Ձերդ արդարացատ Ատէնին առաջ: Հայոց Հայրապետի բարուց հեղութիւն և երկիւղածութիւն մի քանիսն ասին ս: Եկեղեցին, կրօնը և հաւատը՝ յայտնի է քրիստոսին: Նա կարգարով Ս. Գրոց աստուածային պատւերներ, ուսեալ է հնազանդել սրտի մտիք աշխարհի իշխանութեանց: Սոյն հնազանդութեան ուխտ և պատեր ես ամենայն երկիւղածութեամբ կատարած եմ: Այն հանդիսաւոր օր, երբ իմ օժման արարողութիւն պիտի կատարէր, նախապէս զիս հրաւիրեցին Ս. Էջմիածնի տաճարը, սուր Սբբութեան սեղանին, խաչին և Աւետարանին առջև, համայն միաբանից և ժողովուրդեան ներկայութեամբ, ուխտեցի նախ հաւատարմութիւն և հնազանդութիւն առ Նորին Կայսերական Մեծութեան: Նոյն օր և նոյն ժամանակ ուխտեցի նաև

հաւատարիմ աւանդապահ լինել առ ընդհանուր Եկեղեցին Հայոց, ոչ միայն ի նախնեաց անտի հաստատեալ առ հոգևոր և հովակական տեսութիւն, այլ և նորա և Մայր Աթոռոյս ընդհանուր իրաւանց պահպանութեան: Այս ներբողոք ուխտի զօրութեամբ, ես տիրապէս տեք չեմ Մայր Աթոռոյս ի վարդապետ անտի հաստատեալ իրաւանց, այլ միայն սուի աւանդապահ մի եմ, որոյ իսկական տեք Հայաստանեայց Եկեղեցին է իւր բովանդակ ամբողջութեամբ: Սորա համար ես չեմ կարող ո՛ր Տէր իմ, խաչին և Աւետարանին առաջ չոգած համբուրելով և մեծ երկիւղածութեամբ կըքած ներկայեալ և ահաւոր ուխտիս դէմ դրժել: Պատասխանատու մնալով առաջի Աստուծոյ, առաջի եկեղեցւոյ և առաջի ազգիս հայոց, որով մնայ ինձ այնուհետև յաւիտենական անէծք, ո՛հ, նորվելիք պիտի կնքի գերեզմանս և ընդ անարժան դասի անւանս յիշատակ զղկելով օրհնութեան եկեղեցւոյ և արդ հասեալ կամ ես խորին ծերութեան, մահն մտաւորաւ է և ես չեմ կարող մահուան գուան մօտ դրժել իմ ներկայան ուխտիս դէմ: Ուստի կրկին աղերս մատուցանեմ առաջի քո, քաղցր և բարեգուժ Տէր, յառաջ բերեմ աստ Գեթեմանի պարտեզին աղօթատեղ Յիսուսի բան. — Անցո այս բաժակ հայոց եկեղեցիէն: Պատմութիւն ցոյց կուտայ մեզ, որ հայկական եկեղեցին չբիտնեալութեան առաջին դարերէն սկսած՝ հարածանաց, շարժարանաց դառնագոյն բաժակներ շատ քամեր է, միմիայն իր ինքնուրոյնութիւն, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ազատութիւն անխախտ պահելու համար: Մեծագոր Տէր, Ձեր բարեյիշատակ նախնիք, իրենց արքայական մեծ բարձրութիւն և շնորհ միշտ ցոյց տուած են հայոց հաւատարիմ ազգին, և նորա Երախտագէտ զաւակներ իրենց կեանք չեն խնայեր անձուէր քաջութեամբ նահատակ հանդիսանալ Մեծին Ռուսիոյ քաջայաղթ բանակներուն մէջ, երբ հնչում էր պատերազմի փող: Հայաստանեայց Եկեղեցին ևս միշտ վայելել է քո վեհապանծ նախնեաց բարձր հովանաւորութիւն և իսկապէս ճանաչեր են Հայոց Առաքելական Եկեղեցւոյ դարաւոր իրաւանց անխախտութիւն: Արեւելեան այդ հնագոյն եկեղեցին այս տարի պիտի տօնէր Մայր Աթոռի Ս. Էջմիածնի տաճարի հիմնադրութեան հազար վեց հարիւրամեակը: Այլ աւանդ, չկատարուեցաւ այնպէս, ինչպէս մեր և ազգի փափաղն էր, վասնզի յանկարծ յունիս 12-ի նոր օրհնագրութիւն խախտեց մեր Եկեղեցւոյ դարաւոր հիմքը, և ես, որպէս զլուս նորին, պատասխանատու կամ առաջի Աստուծու և չորս միլիօն հայոց ազգին, որ պահպան դրեք է զիս, որ հոյիմ արթնութեամբ, որպէս զի չխախտի նորա հիմք, զոր եղին թաղէս Առաքելաւ և Գրիգոր լուսաւորիչ: Այստեղ չեմ կարող լուել և չ'ստել ո՛ր Աստուածասէր և Բարեպաշտ Թաղաւոր, այսպիսի օրհնագրութեան մասին, որ նախարարութիւն անկարեւոր համարեց նախապէս իբրև խորհուրդ զեկեղեցանել հայոց կաթողիկոսին, զի նոր օրհնք հայոց եկեղեցւոյ վերաբերում էր: Ահա պատճառ թէ ինչու ինքրեցի պարն նախարարին ներքին գործոց յետաձգել առայժմ նոր օրհնքի գործարարութիւն: Սորա համար դիմեցի և ամենախոնարհաբար աղաչանս մատուցի Ձերդ Մեծութեան լսել իմ ձայն, վասն զի անխախտի դրութեան մէջ պաշարեալ եմ այսօր. միմիայն իմ հովակապետական պարտքս ուղեցի կատարելու որպէս զի կարենամ Ձեր ուղարկել Մեծութեան հասցիել իմ կարծիքներ: Ցաւօք սրտի տեսնում եմ թէ ես և թէ համայն հոգևորական դասն, որ իմ ցանկութեան յայտնի կերպով բացատրած է, որ չի համապատասխանում ճշմարտութեան: Հաւատաւ, Տէր իմ, ս. տաճարի և սուրբ սեղանի սպասաւորս չեմ կարող կեղծել առաջի տերութեանդ, ես ապաւինելով ճշմարտութեան, որպէս Չօբաբաբէյ համարձակ յայտնում եմ, թէ ոչ ես և ոչ իմ հոգևորական դասն և հօսն ոչ երբէք մտաբերած ենք Աստուծոյ Օծեալիդ հակառակելու: Իսկ հայոց վերջին յուզումները, Օծեալիդ հակառակելու անշուշտ հասած է բարձրագոյն ատեաւորոնց ձայն և աղաղակ անշուշտ հասած է բարձրագոյն ատեաւորոնց կ'ապացուցանէ միայն, թէ որքան անախկալ էր նոր նիդ, կ'ապացուցանէ միայն, որ ծանրագոյն պատժի կերպարանք ունի, և որքան տարբեր և անհամահայն է Հայաստանեայց ի վաղնուց հաստատեալ կանոններէն և միանգամայն օտար հայ ժողովուրդի դարեւոր հայացքին ըստ իւր եկեղեցւոյ ողոյս: Աւհապանծ Տէր իմ, քո մեծ զօրմութեանդ կը դիմեմ աշխարհիս երեսին ցիրուցան եղած հօտիս հետ և նոյն բանք կրկնելով արտասուազին — Անցո այս բաժակը յինէն և իմ

Հօտէն, որով եկեղեցւոյ անսահման դժուրեանց ճառագայթները թող լին ուրախութեամբ և անհուն երախտագիտութեամբ լինցնեն Հայ ազգի սիրտն ու հոգին:

«Գիրս աւարտեցի... յոյս և հաւատ ղն քաջաբերեց, ելայ իջայ հանդերձ միաբանութեամբ Ս. Էջմիածնի տաճար, թողը՞ր դրի Ս. Սեղանի վրայ, լին ջերմեւանդ ոգւով արթթեցի Ձեր Վեհափառութեան թանկագին կենաց համար, աղօթեցի Աստուծային և Սօրծնի անսպառ շնորհ և օրհնութիւն տարածէ համայն Օգոստոսի անսպառ վերայ: «Մնամ միշտ աղօթարար Վեհափառութեանդ ամենաթանկագին կենաց»

Վշտակիր Կաթողիկոս Ամենայն Հայոց ՄԿՐՏԻՊ Առաջին

12 սեպտ. 1908 թ. Ս. Էջմիածին

Մ Ի Ն Ի Ս Տ Ր Ի Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ը

Նորին Սրբութեան

Ամենայն Հայոց Կաթողիկոսին

Նորին Կայսերական Մեծութիւնը Բարձրագոյն հրամայեց ինձ տեղեկացնել Ձերդ Սրբութեանը, որ սեպտ. 12-ի Ձեր ամենահպատակ խնդիրը թաղաւոր կայսրը ստացել է Գարմըշտատում սեպտեմբերի 27-ին:

Ներքին գործերի մինիստր ՊԼԵՎՆ

№ 336

Կ Ա Ռ Ղ Ի Կ Ո Ս Ի Ի Ն Գ Ի Բ Ը Մ Ի Ն Ի Ս Տ Ր Ի Ն

Ձեր Բարձր Գերազանցութիւն

Ողորմած Տէր Վեաչեսլաւ Կոնստանտինովիչ

Մանր է յոյժ, իրրեւ գմեղադրեալ հանդիսանալ՝ ոչ գտանելով մեզս ինչ անձին, ծանր է ի համարի կալ յանցաւորի եւ ոչ իսկ զսուէր յանցանալիս ի գործողութիւնս իւր տեսանալով: Այլ որպիսի կոյակագին զգացմանց էր կեղեքել ապաքնն զսիրտ սերունդս, ի տեսանելն զիս, սիրելիացս յիսուն ամաց ուսուցիչ էի քրիստոնէական սիրոյ եւ խոնարհութեան՝ ամբաստանեալ յանիրտ ի առաջի մեծի Հովանաւորի եկեղեցւոյ իմոյ, իրրեւ զանհնազանդ ոչ անսասող թագաւորին կամաց եւ իրրեւ զերգմնադանց:

«Մտորակելի ևս, սակայն, եւ առաք իմ առ յաղթանակ յաւիտեան ճշմարտութեան հաւատովն հաւատով ուղղեմ առ Ձերդ Բարձր Գերազանցութեան զայս գիր նամակիս՝ անտարակոյս յայնմ, զի ոչ անտես առնիցէք զուք զխնդիր ձերացեալ Պատին Հնազոյն Առաքելական Եկեղեցւոյ եւ թարգման լինիջիք անկեղծ զգացմանց իմոյ առաջի Ամենաողորմած Թագաւոր Կայսեր Գրութիւն Ձեր Բարձր Գերազանցութեան, որ ՚ի 13-էն օգոստոսի, խոյեաց ի խոր զսիրտ իմ եւ ոչ գտեալ իմ զայլ հնար բառնալոյ յինչն զմեղադրանս ծանրագոյն յանցանալ բարդելոյ ի վերայ իմ խնդրելի ի տէր կառավարչապետէ քաղաքական մասին Կովկասու հայցելով միանգամայն զատարութիւն Ձեր, զի տացի ինձ յանդիման գալ լուսաւոր երեսաց Նորին Մեծութեան եւ անձամբ անձին ցուցանել, եթէ չէ իմ երբէք իմաստորեւ ի պարտուց հաւատարիմ հպատակութեան կամաց Վեհապետին Քանգի կոնստանտինովսեան յիսնիս ի 12-ն օգոստոսի առ Մինսոյն Ս. Էջմիածնի զմի եւ եթ ունէր նպասակ՝ փութալ, յօգուտ եկեղեցւոյ եւ պետութեան, յառաջ քան զյայտարարութիւն կանոնադրութեան 12-ն յունիսի հասուցանել յունիս Նորին Մեծութեան զբացատրութիւնս իմ առ ամբ, եթէ սակաւ ծանօթութիւն եւ եթ գնորդքին կարգաւորութեան եկեղեցւոյ հայոց, սխալ տեղեկութիւնք զարդի վիճակէ նորին եւ անդադար ամբաստանութիւնք առաջի բարձրագոյն կառավարութեան, կուտեալք ի դուրս հայ հոգեւորականաց սկզբնապատճառ հիմն լեալ են հրատարակութեան օրինացն յիշատակելոց: Ես յուսայի, եթէ Ամենաողորմած Թագաւոր Կայսեր լսէր զհայցած իս Բաւ ինձ ապաքնն զանցանել ընդ երդումն, զոր երդուեցայ հան»

զիսապէս առաջի Աստուծային Սուրբ սեղանոյ, եւ գտանել անհնազանդ յարեինամ Արքային իմուս Հաւաստեալ ասեմ, եթէ պատկառ աստուծային պատւիրանին, որ վասն հնազանդութեան մարմնաւոր տէրանց, կամ եւ մնամ իրրեւ զհաւատարմարոյն ի հաւատարիմ հպատակաց Նորին Մեծութեան: Այս իսկ զգայոյ մն հարկեաց զիս՝ ջանալ եւ եթ ի բացաղարանց առաջի Թագաւոր Կայսեր զայս անադարն ուղղադրանաց, որ ընդմացս վերջինս տասնեակ ամաց կուտին մշ ի գլուխ հայ հոգեւորականութեան եւ ժողովուրդին միայն, այլեւ յանձն իսկ իմ, ի շնորհս անհիմն զեկեղեցւանց կովկասեան վարչութեան, որ իւրովք թիրեալ հազորգարութիւնս Թուսաստանի ընդ ազգ եւ հոգեւորականութիւն հայոց եւ զիսազալ, զհաւատարիմ ժողովուրդն ապստամբ եհան յաչս կառավարութեան ՚ի հաստատութիւն բաւնից, թողեց իստանբուլ գալ ինչ բազում, յուշ ածից միայն զիւրերն զպրոցակեան վարչութիւն Կովկասու առանց իրիք պատճառի գուն գործեաց անանարկել զբարոցսն առաջի կառավարութեան ցայն աստիճան, զի փակեցան ի վերջոյ գրունք նոցա: Ապա, ենթադրելով եթէ զպրոցքը պահէին յարեանց սեփական ստացւածոյ՝ յաջողեաց եւ յայնմ, զի անօրէնութիւն եղեւ գրաւելոյ զայնոսիկ: այլ ըստ Բարձրագոյն հրամանին որոշումն խնդրոյն, եթէ ո՞ր ստացւածք սեփականութիւն էին զպրոցաց պարտ էլ զատասաւանական կարգաւ լինել: Եւ իրրեւ եկեղեցին շահեցաւ ի շար մի ողջոյն դատավարութեանց առաջի ամենայն Առէնից եւ յայնի եղեւ, զի կովկասեան վարչութիւն սխալ էր ի կարծեմն, եթէ մեծամեծ գոյք էին զպրոցացը՝ ապա ուղղել կամելով զսխալ իւր՝ յաւել զնոր իմն գործել զանարկարութիւն—ընդ ամբաստանելն զհոգեւորականութիւն հայոց, եթէ զընդմեջութիւն ցուցեալ էր սորա՝ ի յանձնելն զորոյս ի պրոցաց ուսումնարան կառավարութիւն Հանրայն Բարձրագոյն հրամանին հակառակութիւն ի իշխանութեան եւ անհնազանդութիւն անանեաց:

«Եւս այսօրիկ հրատարակեցաւ տնօրինութիւն վասն գրաւման եկեղեցական գոյլից եւ դրամոց՝ ոչ ծանուցեալ նախապէս զայնանէ բանի իսկ միակ պետիս Եկեղեցւոյն Հայոց: Յանձնումն ստացածոյդ ի տեսչութիւն պետական հաստատութեանց գոյլով ըստ ինքեան կարի վշտադուրի՝ իրրեւ յայտարար անվաստութեան նաեւ հոգեւորականութեան հայոց, լինի հարեւո՞ առաւել զգալի այնու, զի կովկասեան վարչութիւնն յայնմ եւս թիւր լուսարանութեամբք ի հանդէս ելեր գրուն հանգամանս իրացնս Որպէս իրազեկ եղէ ես, կովկասեան վարչութիւն զեկեց, եթէ եկամտեւ կալուածոց, որք սեփականութիւնք եւս եկեղեցւոյ՝ ի կիրարկանն ո՞չ ըստ պատշաճին, այլ յաղագս ինչ ինչ եպերելի ձեռնարկութեանց: Սակայն եթէ ի վճռելն պետական խնդրոց կարեւոր համարէր նա զբազմակողմանի ուսումնասիրութիւն դոցին, ո՞չ գործեալ լինէր արդեօք այսպիսի ծանր սխալ, եւ բացայայտ իրաւ էր, եթէ ոչ միայն եւ ոչ կօպէկ մի յեկեղեցական եկամտաց չէ վատնեալ կողմնակի նպատակօք, այլեւ զի չեն բաւական նոքա առ ի հոգալ զհանապազորդ պէտս եկեղեցականաց, որք հանգերձ կարեւորօք կրթական հաստատութեանց հայոց՝ հոգացեալ լինին առաւել ի կամաւոր ներատուութեանց հայ ժողովուրդեանս Եւ ինչ ինչ հակապետական նպատակս կարէին կիրառեալ լինել եկամտք եկեղեցւոյ, մինչ գտանին նոքա ընդ որոշ հսկողութեամբ կառավարութեան յանձնելն պրոցարութիւն Մինսոյն Ս. Էջմիածնի վարչութեան կովկասու, եթէ առաւել ուղիղ լեալ էր կշիռն իւր վասն պետական շահոց, հնար էր արդեօք խոհեմագոյն եղանակօք հասանել յառաջի երեւալ նպատակն Փոխանակ իսկիւն զգալոցս հայոց եւ ի տեղի հարկւոյն զքանի մի տասնհազար բանալոյ պետական կրթարանաց՝ մարթ էր թողուլ զեկեղեցապատկան ծխական դպրոցս հայոց ի տեսչութիւն հոգեւորականութեան, որ զիտէր, սիրոյ հարեալ ժողովուրդեան զբարոցսն կարող ի վերայ նոցա ակադեմիական կրթութեան զորոշ ծրագիրս վասն նոցին եւ տալ ուսումնարանական վարչութեան իրաւունս հրաժարեցուցանելոյ զպաշտօնեայս, զորս

անհամապատասխան գտանելին պահանջից իւրեանցի ֆո-
 խանակ գրաւելոյ զեկեղեցական ստացւածս, առանց իրիք
 օգտի վասն պետութեան, մարթ էր կարգել զխտատոյն իմն
 վերահասութիւն մտից և ծախուց վանօրէից եկեղեցեաց և չն
 ի չորհոս նշանակեալ եղանակի գործառնութեան կողմ-
 կասեան վարչութեան, այնչափ սակաւ են այժմ դպրոցք
 յաշխարհիս, զի հազարաւոր մանկուք է ի փողոցս շրջին,
 բազմացուցանելով միայն զթիւ անձանց մեծապարագայ
 պետութեան եւ հասարակութեան Այլ մեծապար հետե-
 ւանք, վասն պետութեան ոչ ուսագ քան վասն եկեղեցւոյ,
 օրէնսդրութեան Աշխարհիս յունիսի ունին ի յայտ պալ ի մեր-
 ձաւորագոյն ապագայի կառավարութիւն ի մի կողմանէ
 եկեղեցի ի համոզումն, եթէ եկամուտք կալւածոց չեն բա-
 ւական ամենեւին ի պահպանութիւն հայ հոգեւորականութեան
 թեան եւ հոգեւոր հաստատութեանց, զի կարծեցին կա-
 մաւոր ներառութիւնք հայ ժողովրդեան, ի միւսոյ կողմ-
 մանէ հոգեւորականութիւնն ըստ անհրաժեշտ բերմանն
 հանգամանայ խորթացեալ լինի ի հօտէն եւ ոչ կարող է
 ըսուլ զաւանդական կողմն իւր եւ ոչ մասուցանել պե-
 տութեան ի պատնէ ժամու գծառայութիւնս, զորպիսիս մա-
 սուցեալ է նորա յաճախակի Որ ինչ զմեզ պարանայն ի թիւս
 այլոց, որ լեալ է հիմն օրէնսդրութեան Աշխարհիս յունիսի,
 իբրեւ հայ հոգեւորականութիւն ապիկար դասուէր ի կա-
 ռավարութեան կալւածոց իւրոց, մնաց ինձ միայն արտա-
 յայտել զճարտագոյն զարմանս, եթէ վասն է՞ր նախ քան
 զհրատարակութիւն նորոք օրէնսդրութեան չէ եղեալ ազ-
 դուսն ինչ զայդմանէ Հայրապետանոցին Ս. Էջմիածնի կամ
 Սիւնիքին Այլ եւս զանցառութիւնք մասնաւոր անձանց կամ
 առանձին իմն թերութիւնք կարլի՞ն միթէ պատճառ լինելոյ
 զրկելոյ զօրոյն հաստատութիւն ի դարաւոր իրաւանցի
 ընդպէս հաստատել ի ճշմարտութիւն ասացելոյս, ոչ կարէի
 ես լռել եւ չյանկալ հասուցանելոյ յունիսի թագաւոր կայսեր
 եւ բարձրագոյն կառավարութեան, որ ի Պետերբուրգ,
 գիտորդածութիւնս իմ վասն ներկայ հանգամանայն իրացն
 Ոչ կարէի ես լռել եւ չտողքել ընդդէմ անարդար վերա-
 բերման կողմանեան վարչութեան առ գործն յընթացս
 վերջին տասնեակ ամաց, որոյ ի նետեւանս եղեւ նոր այս
 ոչալ ծանրագոյն Ոչ կարեմ եւ այժմ չհրաւիրել զողորմած
 սխալածութիւն Չերք Բարձր Գերագոյնութեան առ շատ
 ձեռնարկութեանց, որ եղեւ ընդդէմ հայ ժողովրդեան
 ի գանազան սեղիս աշխարհիս, զորոց լսելք կարիվեր
 սրտիւ, որպէս եւ ընդդէմ եկեղեցական անձանց, զորոց
 զյանցանայն ոչ զեկեղեցանի ինձ ինչ, Ոչ կարեմ լռել եւ
 բռնութեանց, զորս ի կիր արկանէր վարչութիւնն ի գրա-
 ւելն գտնադրածս, մինչ զի առաջի աչաց իսկ իմն ի դաւթի
 Մեծապետին Սրբապետին համարն ազգի հայոց պատելով զօրօք
 զիմ սուսն ընակութեան, խորակեցին գերկաթեայ գրաւ-
 արկան եւ ի բաց տարան զոյք ընդ խղճուկ պոճարս զրամոց,
 այլեւ պատմական փաստութիւն զիմս, որք յընթացս դարուց
 պահեալ լինէին անձեռնմխելիք:

Չերք Բարձր Գերագոյնութիւն,

«Իմ յոյս մեծ է, զի դուք, իբրեւ լուսամիտ եւ իմեական
 անձն պետական, ոչ մերժիս ինչ զխոնարհ խնդիր իմ բա-
 ցայայտելոյ առաջի Նորին Մեծութեան թագաւոր կայսեր
 դուսն իմաստ ներկայ գրութիւնսն եւ հանդիսասլիկ միջնորդ
 յոսս Արքայական Գահոյից առ ի դարձուցանել յիս եւ
 ի ժողովուրդ իմ զվատահոլութիւն Ամենաողորմած թագա-
 ւորին, զոր վայելեալ էաք ի վազմուց հետէ: Հաւատացէ՛ք
 ի բանս ծերունի հարապետիս, եթէ ամենափոքր նշան
 Արքայական ողորմածութեան բաւական լիցի, զի ողջոյն
 ազգն հայոց եւ հոգեւորականութիւն ընդունել անպատմի
 ուրխութեանս եւ մնայցին երախտագէտ եւ հաւատարիմ
 ընդսիս, որպէս էին, շատուց մեծ Ռուսաստանի»

Վերապաճելով առ Ամենաարարիւն զՎերահայրն մազ-
 թանս վասն առողջութեան եւ արեւշատութեան Չերքում,
 մեամ Չերք Բարձր Գերագոյնութեան

Չերքնաւս աղօթարար Կաթողիկոս Ամենայն Հայոց ՄԳՐՏԻՉ Առաջին

18 հոկտ. 1903 թ. Դ Ս. ՇԼՄԻՈՅԻՆ

Մ Ի Ն Ի Ս Տ Ե Ի Գ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ը

Չերք Սըրբութիւն

Ողորմած Հովաքիմ,

«Թագաւոր կայսր ի պատասխան ամենահպատակօրէն
 ներկայացրած իմ զեկեղեցւոյն Չերք ամենահպատակ ինդիրքի
 մասին փոխելու ներկայ տարւայ յունիսի 12-ին Բարձրա-
 գոյն հաստատուած մինխարական կոմիտէի որոշուել, — ներ-
 կայ հոկտեմբերի 18-ին Բարձրագոյն հրամայել բարեհաճեց
 յայտնել Չերք Սրբութեան, որ Նորին Մեծութեան վճիռը
 նոր կարգ հաստատել հայ եկեղեցական կալւածները կա-
 ռավարութեան գործում ան դարձ է եւ Չերք ամենահպա-
 տակ ինդիրքը փոխել յիշեալ օրէնքը՝ Նորին Մեծութեան
 կողմից թողուած է անհետեւ ան ջր:

«Այդ Բարձրագոյն կամքի մասին պատիւ ունեւ հաղոր-
 դել Չերք Սրբութեան, խոնարհաբար խնայելով ընդունել իմ
 խորին յարգանայ եւ հաւատարմութեան հաւատարմքը, որով
 պատիւ ունեւ լինել Չերք Սրբութեան»

Խոնարհ ծառայ՝

Ներքին գործերի մինիստր Վ. ԳԼԵՎԸ

№ 898

27 հոկտեմբերի 1903 թ.

Գետեղորդ

Ն Ո Ր Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Սինդի Ս. ՇԼՄԻՈՅԻՆ

Առաջադրութիւն

«Թագաւոր կայսրն ըստ ամենահպատակօրէն զեկեղեցւոյն
 իմսմ ի 18-ն սուր այսր հոկտ. Բարձրագոյնս բարեհաճեց
 հրամայել, վասն կարգելոյ իբրեւ կանոն, զի այսուհետեւ
 մինչ յ՝վերաքննութիւն գործող կանոնաց վասն կառավա-
 րութեան հոգեւոր գործոց քրիստոնէից հայ լուսաւորչական
 դաւանութեան, ի նշանակելն յաշորդաց թեմոց, անդամոց
 կոմիտետօրէից: սեսչի եւ ռուսացայ հոգեւոր ճեմարանի
 եւ դպրոցայ, վանահարց վանուց, նոյնպէս եւ ի պաշտօնս
 ծխական աւագ քահանայից, սարգաւազաց եւ դպրոց
 ինդրիսցին գնամահարութիւն վասն յաշորդաց ի կառա-
 վարչապետէն քաղաքական մասին կողմանի, իսկ յաղագս
 մնացեալ պաշտօնեայ անձանց՝ ըստ սեղւոյ հաստատու-
 պատասխան պաշտօնեայ անձանց: Չայսմ Բարձրագոյն
 կամայ առաջադրեմ հայ լուսաւորչական Սինդիք հար-
 կաւորն ստորինութիւն ի կատարումն»:

Նախարար Ներքին Գործոց

Ստատո Սեկրետար ՎԵՂԵՂ

Օտար Դաւանութեանց Դեպարտամենտի

Դիրեկտոր ՄԱՍԱԼՈՎ

«Ըստ խորհրդածութիւններ են ներշնչում այս թըղ-
 թերքը, շատ մտքեր ու յիշողութիւններ են ծնեցնում
 նրանք, բայց այսպիսի օրերում գրիքը չի հրապուրում...»

Է. ԱՆՆՈՒՆԻ

«ՎՐԱՍԱՆ»-Ը ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒ ԿՈՎԱՍՈՒՄ

Մայիսի 1-ից վրացերէն և ֆրանսերէն լեզուներով
 Պարիզում սկսել է հրատարակել մի նոր քաղաքական
 թերթ՝ «Վրաստան» անունով:
 Թերթի նպատակն է՝ արթնացնել ազգային և քաղա-

քաջիական գիտակցութիւնը վրացի ժողովրդի մէջ ու այդպիսով պատրաստել Հող Արաստանի ինքնավարութեան համար. գտնել բարոյական արժանացում և արդիւնք մերձեցում՝ ազգային իրաւունքներին գիտակից վրացիների և Ռուսաստանի արդի բեթիմի դէմ կուռղ ուսու ազատամիտների ու սօցիալիստների միջև:

Ով փոքր ի շատէ ծանօթ է կովկասի կեանքին, ով ունի դիտողութիւնների գոնէ մի փոքրիկ պաշար, մանաւանդ Տայ-վրացական յարաբերութիւնների մասին կովկասում, նա չէ կարող չ'ողջունել այն ուղղութիւնը, որի արտայայտիչն է հանդիսանում այսօր «Արաստանը»: Գեռերէկ մեզից շատերը՝ շարած կենդանի փաստերի առաջ՝ դժուարանում էին հասկանալ թէ ուր և ինչն է ձգտում վրացի հասարակութիւնը կովկասում — գնում է նա արդեօք գիտակցօրէն դէպի կատարեալ ինքնասպանութիւն, թէ ճարպիկ սրիկաներից մոյրուած՝ նա կոյր գործիքի մի անպատասխանատու դեր է կատարում: «Կովկաս» շարժաթերթի փոքրիկ խմբակը, բանւորական սահմանափակ շրջաններում երբեմն լուրջ նոր ձայները և կամ «Ցնորիս-Պուրցելի» լրագրի չափաւոր ձեռնպահ հոլթիւնները կորչում էին այն ընդհանուր միջնորդի մէջ, ուր վրացի ժողովրդի համար չէր ծանաչւում ունէ ուրիշ կենսական խնդիր, քան նրա մէջ հայաստեցութիւն սերմանելու միակ հոգսը: Եւ ճալճափաձէներ. ու Ծէբէթէլիներ — վրացի մտաւորականութեան այդ «աստղերը», ազդի այդ «լաւազոյն զաւակները», հեանները առած մեծ ու փոքր, միրուքաւոր և անմօրուս յիմարների մի սոււար բանակ, զարմանալի անձնւիրութեամբ կեանքի էին վերածուել լրտես և երկնչկոնների և Գեպլեր-Գալիցիաների բոլոր իշները, — խեղդել, ջախջախել կովկասը՝ իբրև ուրոյն երկիր, իբրև ուրոյն ազգութիւնների որրան: Անարժան, անարգ մի դեր, որ միայն արատաւորում էր վրաց հասարակութիւնը...

«Արաստան» ի խումբը՝ հրապարակ գալով այսօր ազգերի համերաշխութեան, կովկասեան ընդհանուր շահերի ու վրացի ժողովրդի ինքնավարութեան պահանջներով կարող է վստահ լինել մեր ամենաջերմ համակրութեան վրայ: Ցանկանք միայն «Արաստանին» պատշաճ եռանդ ու տոկունութիւն, որպէս զի իր սթափեցնող և միանգամայն նպատակայարմար ուղղութեամբ առաջ գնալով, նա վերածելի լուրջ կազմակերպութեան — մի կազմակերպութեան, որ ընդունակ լինէր զգալի դեր խաղալ իր հարազատ ժողովրդի և կովկասի վերածնութեան գործում:

Արժէ մօտիկից ծանօթանալ «Արաստան»-ի աշխարհայեացքի հետ:

«Ամբողջ դարի ընթացքում — ասում է «Արաստանը» — մեր կրծքի մէջ հաւաքւած վիշտն ու տառապանքը, վայրագ ծնչուն ծանրութիւնը եւ ազգային պատուասիրութեան արթնացած զգացմունքը զուրկ եւ քարծիրացում այսօր եւ արտայայտում մեր հասարակական կարծիքի մէջ: Այո, ազգային առանձնայատկութեան զգացումը այնքան բարձրացւել է Արաստանում, որ դարաքաղական հասունութիւնը այնքան առաջ է գնացել վրաց ժողովրդի մէջ, որ ուրիշ ազգութիւնների հետ միասին մենք եւս ցանկանում ենք համարալիս ուսու դիմադրական կուսակցութեան հետ՝ նպաստել Ռուսաստանի քաղաքական վերածնութեան եւ սրա հետ միասին ձգտել «Արաստանի ինքնավարութեան իրականացման»:

Հետաքրքիր է, ինչպէս են հաշտեցնում վրացիները Արաստանի ազգային ինքնավարութիւնը ուսուական սահմանադրական շարժման հետ և ի՞նչպէս են ըմբռնում նրանք ինքնավարութեան խնդիրը:

«Ճիշտ է — յիշեցնում են նրանք ուսու ազատամիտներին ու

սօցիալիստներին ուղղած բաց նամակում — ուսու սօցիալիստների զբաղմունքի մէջ ազգային հարցը որոշակի չի շօշախւած: Մենք չենք գտնում նմանապէս այնպիսի ծրագրեր, որոնք պարունակէին Ռուսաստանի հեռուոր մասերի արկազայ կազմակերպութիւնը: Սակայն, այն ընդհանուր խարսխանքը, որոնք վրաց հիմնած է ուսու դիմադրական կուսակցութիւնը, մեզ որոշ երաշխաւորութիւն մն ներշնչում եւ նրանց յաղթանակի հետ թոյլ տալու յուսալու միապետական կառավարութեան ենթարկւած ազգութիւնների վիճակի բարելաւումը»:

Բացի այդ, «Արաստան»-ի կարծիքով, ազգային խնդրի առաջ մղելը ձեռնուր է հէնց ուսու դիմադրական կուսակցութիւնների համար, քանի որ դա մի նոր միջոց է սկսած կուրը յաջողութեամբ առաջ տանելու, և, վերջապէս, փոքր ազգութիւնների բաղձանքները համապատասխանում են Ռուսաստանի քաղաքական զարգացման, որ հակելու է դէպի կայսրութեան ապակենտրոնացումը:

Այդ ընդհանուր սկզբունքների վերաբերմամբ, «Արաստան»-ի կարծիքով, ուսուներն ու վրացիները պիտի գան համաձայնութեան և այդ համաձայնութիւնը կարող է հաստատուել հետեւեալ հիմքերի վրայ.

«Արաստանը» մերժում է անկախ Արաստանի գաղափարը, չնայած որ Հէրակլ Բ. և Եկատերինէ Բ.-ի միջև կայացած դաշնագրութեամբ (1783 թ-ի յուլիսի 24) նա ունենալու էր իր թագաւորները:

XIX դարու ընթացքում — ասում է «Արաստանը» — վրացիների քաղաքական հասունութիւնը այնքան առաջադիմել է, որ այդ ժողովրդը կարիք չունի այլեւս իր թագաւորների վերականգնման: Աւելի եւս. Արաստանի եւ Ռուսաստանի բաժանումը ոչ իրագործելի եւ ոչ էլ. ցանկալի է: Եւ այսպէս ինչու. կովկասում այսօր գտնուող ազգութիւնների տնտեսական Կոմիսը այնպէս սեղան կերպով շարժւում է եւ դրա հետ միասին ազգայնութեան սիրով գաղափարը ստացել է ամէն մէկի համար այնպիսի այրող քնաւորութիւն, որ անկախ մի պետութիւն ստեղծել իրարու թշնամի ազգութիւնների մէջ ինքնըստինքեան կը հանդիսանար մի շատ կոմոտ ու դժուար լուծելի խնդիր: Բացի այդ, Արաստանը կարող է ծեղք բերել անկախութիւն մեծիայն երբ կատարելապէս կովկասը բաժանել Ռուսաստանից, այսինքն երբ Ռուսաստանը հրաժարել կովկասից, իսկ եւրոպական պետութիւնները բռնեն այդ երկրի վերաբերմամբ չէզոք դիրք: Կարելի է արդեօք օրօրել այդ տեսակ յոյսերով: Մենք կարծում ենք ոչ»:

Մերժելով քաղաքական անկախութիւնը, «Արաստանը» աննպատակայարմար է գտնում նաև ոմանց կողմից առաջարկուող ծրագիրը՝ աշխատել Արաստանում մտցնել Ռուսաստանի ներքին նահանգների մէջ արդէն գոյութիւն ունեցող և ժողովրդից ընտրուող գաւառական ու նահանգական վարչութիւնները, երգեւեալ հաւատարմատարների դատարանները և ըն:

«Այդ հաստատութիւնների ներմուծումը — ասում են վրացիները — չի տալիս ոչ մի հրաշխաւորութիւն մեր ազգային գոյութեան պահպանութեան: Ռուսաստանի սահմանադրութիւնը — եթէ հիմնւած է լինելու կենտրոնացման սկզբունքների վրայ — չի ներշնչում մեզ հասուն, նա չի դիւրացնի մեր տարրական եւ անբնաբարելի իրաւունքների իրականացումը: Կենտրոնական սահմանադրական ըժմիմի օրոք միտքը միտքի թշնամի է առհասարակ մեծամասնութեան կողմից եւ մենք չենք կարծում, որ նոյն շարքը գոյութիւն չունենայ կենտրոնական սահմանադրական Ռուսաստանում, քանի որ սլավոնները եւ մասնաւորապէս ուսուները կազմում են այնտեղ մեծամասնութիւն»:

Միակ ծրագիրը, որ բաւարար է թւում «Արաստան»-ի խմբագիրներին, դա լայն ազգային ինքնավարութեան սկզբունքն է, Self government-ի իրականացումը:

«Դէպի ազգային ինքնավարութիւնն է ուղղւած — ասում են նրանք — բոլոր վրացիների հայեացքները, միմիայն ինքնավարութեան մէջ մենք կարող ենք գտնել ապահովութիւն մեր ժողովրդի բարեկեղանութեան եւ զարգացման համար, միմիայն նա թոյլ կը տայ մեզ իրագործել մեր երկրի հասունացած բարենորոգումները՝ որոշել եւ լուծել կաւաճատեղերի ու գիւղացիների յարաբերութիւնները, ստեղծել աշխատանքների վերաբերել հաստա-

տուութիւններ, սահմանել գործադուլի իրաւունք եւ այլ պայմաններ մեր երկրի սօցիալական կերպարանափոխութեան համար...

Միւս կողմից, Վրաստանի ինքնավարութիւնը միւս ազգութիւնների ինքնավարութեան հետ միասին կը լինի քննական հետեւանք ուսաց կայսրութեան քաղաքական զարգացման, որը մեր կարծիքով չի յայտնուէր կենտրոնական սահմանադրութեան...

Չնայած իր միութեան եւ սլավոնական ցեղի գերակշռութեան, Ռուսաստանը կազմած է բազմաթիւ ազգերից, որոնցից աւելի մէկը ունի իր առանձնայատուկութիւններն ու ձգտումները... Ի նկատի չառնել այդ հանգամանքը շատ սխալ կը լինէր: Եւ այսօր աւելի քան երբեք Ռուսաստանի առաջ դրած է այս խնդիրը՝ հաստատել մի սահմանադրութիւն, որը բաւարարութիւն տալով ուս ժողովրդի պահանջներին, ստեղծէր միասնական համերաշխութեան կապ Ռուսաստանի կենտրոնի եւ օտարազգի հետաւոր հատուածների միջեւ: Այդ սահմանադրութիւնը, մեր կարծիքով, հաստատուած պիտի լինի ապակենտրոնացման սկզբունքի վրայ, — ապակենտրոնացման, որը ժամանակի ընթացքում անխուսափելիօրէն յանգեալու է մի դաշնակցութեան:

Այդ սկզբունքների իրականացման մէջ տեսնելով վրաց ազգի առաջադիմութեան եւ վերածնութեան միակ միջոցը, այդ համարելով միակ ուղին գերիշխանութեան հողի վրայ հաստատուած՝ Ռուսաստանի քաղաքական զարգացման համար եւ միակը, որ համապատասխանում է արդարութեան պահանջներին, — Պրաստանի խմբագիրները դիմում են ուս գիմադրական կուսակցութիւններին՝ ազատամիտներին ու սօցիալիստներին, եւ նախ քան միասին գործելը՝ առաջարկում են գալ համաձայնութեան այդ հողի վրայ:

Ինչպէս կարելի էր եւ առաջուց նախատեսել, ուս գիմադրական կուսակցութիւնների կարծիքները այդ հարցի մասին բաժանեցին:

Գտնեցին այնպիսիները — ինչպէս ղադատամիտների Պոպոբոստիէնիէն, — որոնք համակրելով վրացիների մէջ ծագած շարժման, խոյս տւին անմիջական պատասխանից, յայտարարելով յազգային՝ հարցերի լուծումը ամենագիտարներէր մէկը:

Միւսները — որոնց բերան է հանդիսանում սօցիալ-դեմոկրատական յիսկրան եւ որոնք յետագէմ են համարում աձէն գոյնի հասարակական երեւոյթներ, բացի բանտրական դասակարգի շահերի պաշտպանութիւնից — վրացիների առաջարկը անցան լուծեամբ:

Ճիշդ է, վերջերս կայացած սօցիալ-դեմոկրատ կուսակցութեան 11 ընդհանուր ժողովում նրանք ազգային ինքնաորոշման մուտ խօսքերից մի փոքր առաջ դնացին՝ ընդունելով ուրոյն շրջանների ինքնավարութեան եւ լեղոնների հաւասարութեան սկզբունքը թէ դպրոցներում եւ թէ բոլոր տեղական, հասարակական ու պետական հիմնարկութիւններում, — սակայն, աչքի առաջ ունենալով նրանց յամառ մերժումը միանալ լեհ եւ հրէա սօցիալիստ կազմակերպութիւնների հետ դաշնակցական հողի վրայ — կասկածելի է թւում, թէ փոքրիկ ազգութիւնները կարողանային գործել նրանց հետ ձեռք ձեռքի տւած, իբրև ինքնուրոյն մարմիններ:

Բարեբախտաբար, ուս յեղափոխական շրջաններում խտնեցին եւ այնպիսիները, որոնք հասկացան ազգային գնդրի լրջութիւնը եւ զրեցին նրան ճիշդ հողի վրայ:

Սօցիալիստ-յեղափոխականների օրգան յԷկոլեւցիօն-նայա Բօսսիան, տոգորուած արդարութեան լայն գաղափարներով՝ ընդունում է փոքրիկ ազգութիւնների ինքնավարութիւնը եւ նոյնիսկ անջատումը Ռուսաստանից, գտնում է բնական ու օգտակար առանձին-առանձին ազգային կազմակերպութիւնների գոյութիւնը եւ համարում է անխուսափելի ու անհրաժեշտ նրանց դաշնակցութիւնը

Ռուսաստանի արդի միապետական ըէժիմը տապալելու համար:

Յուսանք, որ բոլոր ուս յեղափոխականները կը հակուեն դէպի այս ուղղութիւնը, ցանկանք մանաւանդ, որ այդ յայտարարութիւնները չմնան միայն թղթի վրայ գրւած եւ որ նրանց համեմատ ուս յեղափոխականները աշխատեն ու գործեն կեանքի մէջ, տարածեն այդ վրաքերը ուս հասարակութեան լայն խաւերում:

Դա կարելոր ու անհրաժեշտ է մանաւանդ այն անտարբերութիւնից յետոյ, որ ջոյց է տւել մինչև օրս ուս հասարակութիւնը դէպի ազգային այրող խընդիրները: Եւ իրաւ:

Ռուս օրինական եւ թէ ազատ գրականութիւնը, որ շատ հիմնականօրէն քննում է գրական, գիտական, փիլիսոփայական բարդ պրօբլէմներ, որ այնքան հարուստ է կուլտուրական եւ յեղափոխական շարժման այլեայլ ճիւղերի ուսուցիչութիւններով, որ մանրամասնօրէն հաշուէ է հողազուրկ ընտանիքների թիւը, աշխատաւորի օրավարձի արժէքը, կովերի, թռչունների քանակութիւնը Ռուսաստանի գիւղերում, — ուսաց այդ մեծ գրականութիւնը մինչև օրս շատ քիչ բան է տւել ուսական գերիշխանութեան տակ հեծող այլեայլ ազգութիւնների յատուկ վիճակի մասին: Տեսնելով ուս լաւագոյն տարրերի այդ ցաւալի անտարբերութիւնը, չպէտք է զարմանալ այն տգիտութեան աւթիւ, որ գոյութիւն ունի ուս կրթած դասակարգի մէջ՝ դրացի փոքր ազգութիւնների նկատմամբ:

Միջին յգաղափարական՝ ուսը աւելի լաւ ծանօթ է Անգլիայի հանքերում աշխատող բանտրների օրավարձի ելեէջներին, քան թէ նրան՝ թէ ինչպէս սոված հայ բանտրներին դուրս են անում երկաթուղային եւ այլ տնտեսական հիմնարկութիւններից, թէ ինչպէս ամէն տարի այլեայլ պատրւակներով գաղթեցնում են Կովկասից տանեակ մահմէդական գիւղեր: Ռուս ինտելիգենտը աւելի է հետաքրքրում Եպպօսիայի կուլտուրական զարգացումով կամ Պլատօնի փիլիսոփայական սիստեմով, քան թէ բարիզմի տարածումով Կովկասի թիւրքերի մէջ, քան թէ նրանով, որ ուս քաղաքականութեան շնորհիւ մօլդաւների, վրացիների, հայերի, թիւրքերի եւ այլ փոքր ազգերի մէջ տարրական դպրոցների թիւը 2, 3, 5 անգամ աւելի նւազ է, քան ուսների մէջ: Ո՞վ չգիտէ վերջապէս, որ ուս յառաջադիմականները՝ սրաներին աւելի մօտ են ընդունում, աւելի վիճում, տաքանում են Ֆրանսիայի ու Անգլիայի սահմանադրութեան տարբերութիւններով եւ 200 տարուց յետոյ գոյութիւն ունենալիք կարգերով՝ քան թէ նրանով, որ միւսնոյն օրէնքը որոշում է վայրենի սամօեղի եւ կրթած լեհացու կենցաղավարութիւնը, որ առանց Պետերբուրգի դեպարտամենտի համաձայնութեան ոչինչ չէ կատարում Մառուցեալ ովկիանոսից սկսած մինչև ծաղկազարդ Վրաստանը, Վիսլայի ափերից բռնած մինչև Մօնղոլիայի անապատները:

Տխուր իրողութիւն է այս, որ ուս գրականութեան հետ ծանօթը չէ կարող եւ իրաւունք չունի ուրանալու նոյն տխրութիւնն է գալիս ձեր վրայ, երբ հետեւում էք ուսների առօրեայ կեանքին: Բառատուն ու արուց աւելի է, ինչ բուն Ռուսաստանը վայելում է տեղական (նահանգական եւ գաւառական) ինքնավարութեան բարիքները՝ հաղորդակցութեան, առողջապահութեան, ժո-

զովորի լուսաւորութեան, անտեսական բարօրութեան և դատաստանական կարևոր խնդիրները վերաբերմամբ Գա մի տեսակ կիսասահմանադրութիւն էր, որ Ալէքսանդր Բ. կարծիքով պատրաստելու էր ժողովուրդը կատարեալ սահմանադրութեան, և դա կատարեալ սահմանադրութիւն էր տեղական խնդիրները համար: Եւ այս բառասուն տարւոյ ընթացքում, շնորհիւ ուսու հասարակութեան, երբեմն նոյնիսկ կրթութեան տարրերի անտարբերութեան, այդ բարեքննիչ զուրկ մնացին ոչ միայն «կուլտուրայէս դած» կովկասեցիք, այլև ուսանողից շատ աւելի բարձր լեհացիք...

Փոքր ազգութիւնների ինքնավարութեան իրաւասութիւնը լաւագոյն ուսանողի կողմից ընդունել է և շատ առաջ, բայց նա ընդունել է սոսկ վերացական կերպով՝ ծրագրիներ մի խուլ անկիւնում, իբրև պահանջ աննշան, հալածող փոքրամասնութեան, բայց իբրև խորթ գաղափար անհամեմատ աւելի ուժեղ հոսանքների համար:

Ահա թէ ինչու, երբ, ինչպէս դա պատահեց 60-ական թւականներին, հրապարակ են գալիս Հերցէնի նման լայն գաղափարի տէր անհատներ, որոնք իրենց համախոհների հետ անընդհատ քարոզում և պահանջում են Լեհաստանի անկախութիւնը, ու այս հոգով-սրտով մի քանի հազար «մարդկութեան քաղաքացիները» յետ են մղում և «հաւասարութիւն ընդունող» ուսու հասարակութիւնը պահանջում է լուրջութիւն, նոյնիսկ աջակցում է կառավարութեան, որպէս զի ուսուց գերիշխանութիւնը սրով ու հրով հաստատելի փոքր ազգութիւնների հոգեկան փլատակների վրայ:

Համոզմունքների, զգացմունքների, շահերի այն հաւասարակշռող ուժը, որ միապետական ընթացքի տակ պահանջում է այսօր ուսուց գերիշխանութիւնը, նոյն ուժը այս կամ այն ձևով, այս կամ այն չափով անշուշտ կ'արտայայտուի նաև վաղուայ սահմանադրական Ռուսաստանում:

Ազգութիւնների հաւասարութեան և Ռուսաստանի ինքնավար մասերի դաշնակցութեան գաղափարը իրականացնելու համար՝ անհրաժեշտ է, որ ուսու գրականութիւնը այդ հարցին վերաբերելի նոյն լընութեամբ և ուշադրութեամբ, որպիսին նա ցոյց է տւել դեպի տնտեսական ու դասակարգային աւելի բարդ և դժուար աւելի քիչ հասունացած խնդիրները: Անհրաժեշտ է, որ ուսու դիմադրական կուսակցութիւնները փոքրիկ ազգութիւնների ինքնավարութեան և Ռուսաստանի դաշնակցական կազմի սկզբունքը համարեն իրենց ծրագրի հիմնաքարերից մէկը: Անհրաժեշտ է, որ այդ գաղափարները միս ու արին դառնան ուսու ղեկավար մեծամասնութեան համար:

Սահմանադրական, եթէ չասենք «կիսասոցիալիստական» Գերմանիայի ազգակուլ ձգտումները դէպի լեհացիները թող խրատ լինին մեզ, թէ ինչքան քիչ յոյս պէտք է դնել մեծ ազգերի արդարութեան զգացմունքի վրայ, երբ խնդիրը վերաբերում է փոքր ազգերի իրաւունքների պաշտպանութեան: Առաջագէտ և դէմօկրատ Ֆրանսիայի ու Անգլիայի իշխանական ու արհամարհական դիրքը դէպի Նապոլեոն կոյնիսները թող օրինակ լինի մեզ, թէ ինչ դանդաղութեամբ են զարգանում ազգային հաւասարութեան ու ազգերի ինքնավարութեան գաղափարները:

Ահա թէ ինչու՝ վրացիները, ինչպէս և ինքնավարութեան ձգտող Ֆուս ազգերը Գովկասում, պէտք է ուրախանան ազգային ինքնավարութեան գաղափարը ընդունող ուսու

տարրի զարգանալուն, պէտք է ձեռք տան արդարութեան գաղափարի առ նոր առաքելներին՝ ընդհանուր ուժերով տապալելու համար Ռուսաստանի այսօրուայ բռնակալ և սպանիչ քաղաքական ընթացքը: Բայց միևնոյն ժամանակ նրանք չպէտք է մոռանան, որ ազգային ինքնավարութիւն ձեռք բերելը Ռուսաստանում կախած է գլխաւորապէս իրենց՝ փոքրիկ ազգութիւնների դիմացկանութիւնից, համերաշխութիւնից և ապագայ անխուսափելի կուրում նրանց ցոյց տալիք ուժից ու կորովից:

(Կը շարունակուի)

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՄԱԿԵԴՕՆԻԱ

(ՀՈԿՏՈՄԲԵՐԻ 25-Ի ՑՈՑԵԼ)

Ֆրանսիացի մեր բարեկամների եռանդը վեր է ամէն տեսակ ներբողներից: Հոկտեմբերի 25-ին նրանց նախաձեռնութեամբ և բուռն ջանքերով կազմակերպւած ցոյցը իր ծաւալով ու կարևորութեամբ գերազանցում է բոլոր նախորդներից և իրաւամբ կարող է համարուել ամենահոյակապ ցոյցը՝ յօգուտ ճնշւած ժողովուրդների՝ քաղաքակրթութեան տարեգրութեան մէջ:

«ՕՏԷԼ ԿՕՆՏԻՆԵՆՏՍԱԼ»-ՈՒՄ

Այդտեղ հաւաքւած էին 60-ի չափ պատգամաւորներ՝ Ֆրանսիացի, անգլիացի, իտալացի, բելգիացի, ուսումնացի, ուսու և այլն: Նիստը բացւեց տիեզերական խաղաղութեան պատկառելի առաքեալ՝ ծերունի Պասսիի նախագահութեամբ: Մին միւսի ետևից խօսեցին զանազան ազգերի ներկայացուցիչները՝ այն աշխատանքի մասին, որ կատարուում է իրենց երկրում՝ ի նպաստ Հայաստանի և Մակեդոնիայի:

Անգլիացի Մակեդոնիայի խօսելով իր հայրենիքի տրամադրութիւնների մասին՝ հայ-մակեդոնական խնդիրների նկատմամբ՝ յայտարարեց, որ հանրային կարծիքի ճնշման տակ՝ անգլիական կառավարութիւնը որոշած է միջամտել Արևելքի գործերում և սպասում է միայն Ֆրանսիայի և Իտալիայի աջակցութեան:

Մի ուրիշ անգլիացի պատգամաւոր՝ Բէօքստն նկարագրեց այն շարժումը, որ սկսւած է Անգլիայում յօգուտ Մակեդոնիայի և Հայաստանի վերջին մի քանի ամիսների ընթացքում 200-ից աւելի միթինգներ են կազմակերպւած, որոնցից մի քանիսը գումարել են մինչև 5,000 ունկնդիրներ: Կառավարչական օրգանները, ինչպէս «Թայմզ», «Սպեկտատոր», սատար են կանգնում այդ շարժման:

Խօսում է մեր բարեկամ Ֆրանսիա դը Պրէսանս է, որ յստակօրէն և հեղինակաւոր ձևով գծում է գործունէութեան նախագիծը՝ Արևելեան ճնշւած ազգերի բարեկամների համար: Թիւրքական կայսրութեան ամբողջութիւնը պահպանելու ասում է նա, անհրաժեշտ է կորովի քաղաքականութեամբ գործադրել տալ խոստացւած ուժօրմները:

Ռուս պատգամաւոր՝ Սեմիօնօվ խօսում է այն համակրութիւնների մասին, որ տածում են Ռուսաստանի ազատամիտները դէպի Հայաստանն ու Մակեդոնիան և որ յայտնապէս հրապարակ չէ գալիս, շնորհիւ հանրային կարծիքի բացակայութեան:

Խօսում են Վիկտոր Բերար, բելգիական պար-

լամէնտի անդամ՝ Լօրան, ուումանացի Բրանկօ-վան և շատ ուրիշներ: Բերար ներկայացնում է կօնֆէրանսի ծրագիրը, որի Տիմնական նպատակներն են՝ Թւրքիայի բարօրութիւնը, Եւրոպայի խաղաղութիւնը և մարդկութեան շահը: Յիշեցնում է այն մեծ, բազմամարդ միթինգի մասին, որ մի քանի որ առաջ տեղի էր ունեցել Վիճուկ, քաղաքապետ Օգանեօրի նախագահութեամբ:

Նախագահ Պասի քէի է ենթարկում մի օրակարգ, որ անհրաժեշտ պահանջ է դնում՝ նշանակել պատասխանատու կառավարիչներ Հայաստանի ու Մակեդոնիայի համար՝ սահմանելով իրական հսկողութիւն Եւրոպայի կողմից: Օրակարգը ընդունւում է միաձայն:

ՍԱՐԱ ԲԵՐՆԱՐԻ ԹԱՏՐՕՆՈՒՄ

Նոյն օրը կէսօրից յետոյ տեղի ունեցաւ միթինգ: Ահագին բազմութիւն լցրել էր Սարա Բերնարի թատրօնը, որ հռչակաւոր դերասանուհին ձրիաբար ղեկել էր մեր բարեկամներին:

Ճառախօսներն են՝ դ'Էտուրնէլ դը կօնստան, Ժօռէս, Պրէսանտէ, Մակ-Վօլ, Պիէռ Կիառ, Վիկտօր Բերար, Էտիէն, Մաձինի և ուրիշները: Բեմի վրայ բազմած են իմիջիպայրոց՝ Փրանսիական կառուցի անդամներ՝ Միշէլ Բրէալ և Պասի, սենատօր Գելպեշ, Բօլգարիայի ու Սերբիայի պատգամաւորներ, բազմութիւ խմբագրապետներ և օրագրողներ:

Նախագահում է Պրէսանտէ, մէկ կողմն ունենալով Պիէռ Կիառին, միւս կողմը՝ Վիկտօր Բերարին: Նա կարգում է նախ և առաջ շնորհակարարական հեռագիրները «Դրօշակի» խմբագրութեան և Մակեդոնիայի ներքին կազմակերպութեան կողմից, ապա և բազմութիւ նամակներ, ստացւած քաղաքական ազդեցիկ գործիչներից և ընկերութիւններից՝ Փրանսիայից, Անգլիայից, Գերմանիայից, Բելգիայից, Աւստրիայից և Իտալիայից:

Ապա Պրէսանտէն սկսում է խօսել միթինգի միջազգային բնուորութեան և նրա նպատակի մասին: Իր ուրախութիւնը յայտնելով երեք արեւմտեան դէմօկրատ պետութիւնների՝ Փրանսիայի, Անգլիայի և Իտալիայի մերձեցման առթիւ, նա ասում է, որ անհրաժեշտ է Արևելքի խնդիրներում առաջ բերել Եւրոպայի հաւաքական ու կորովի միջամտութիւն և չթողնել ասպարէզը միմիայն Աւստրօ-ուղտական համաձայնութեանը, որ ոչինչ չէ ձեռնարկում ձգնաժամի լուծման համար: Հանրային կարծիքը պիտի պահանջէ իրագործումը երկու էական կէտերի. 1⁰ Պէտք է նշանակել ընդհանուր կառավարիչ, որ ազատ լինի Եւրոպայի թեօզի ազդեցութիւններից. 2⁰ Պէտք է սահմանել Եւրոպայի իրական հսկողութիւն:

Պիէռ Կիառ երկար ու փաստալից ճառի մէջ ներկայացնում է Հայաստանի վիճակը, ամենօրեայ գաղափարութիւնները: Մի անկիւն չէ մնացել ասում է նա, օսմանեան կայսրութեան ամբողջ տարածութեան վրայ, ուր թախաճ չլինի մարդկային արիւն՝ Եւրոպայի բռնակալի հրահանգով բոլոր ժողովուրդները որոշ չափով զոհ են նրա կամայականութեան, բայց կան երկու ժողովուրդներ, որոնց նա հալածում է իր սրտի բոլոր թոյնով, որոնց նա դատապարտել է վերջնական բնաջնջման, — Հայերն են և Մակեդոնացիները: Վիառ խօսում է Հայոց հարցի լուծման եղանակների մասին և վերջա-

ցնում է մի տաք ու ազդու կոչով, ուղղւած հանրային կարծիքին:

Վիկտօր Բերար ծանրանում է Մակեդոնիայի կացութեան վրայ, նկարագրում է թիւրքական և համադական ռէժիմի այլանդակութիւնները: Լուսաբանում է մակեդոնական շարժման պատճառները և բողոքում է որոշ տեսակի մամուլի դէմ, որը Սալօնիկի գիւնամիտային փորձերից յետոյ՝ հռչակում էր մակեդոնացիներին որպէս աւազակներ ու սովորական ոճրագործներ: Նա ևս առաջարկում է լուծման նոյն եղանակը, որ ցոյց տւին նախորդ հռետորները:

Վիկտօր, հռչակաւոր անգլիացի հնախոյզը, որ Մակեդոնիայում արած իր ճանապարհորդութիւնների միջոցին անձամբ ականատես է եղել թիւրքական գաղափարութիւններին, շեշտում է, որ այդ գաղափարների հրահանգողը գտնւում է Վ. Պօլսում, և որ մակեդոնական ու հայկական սարսափներին վերջ դնելու համար անհրաժեշտ է ճնշում գործ դնել հէնց Վ. Պօլսում: Նոյն մտքով խօսում է և Բելգիացի Ժօրժ Լօրան:

Ապա բեմ է դուրս գալիս անգլիացի Մակ-Վօլ, «Սուլթանը և Պետութիւնները» յայտնի գրքի հեղինակը, որ արտասանում է ընդհանուր ուշադրութեան մէջ մի կատաղի ճառ: Նա խօսում է անգլիերէն:

Սուլթանի տիրապետութեան տակ, ասում է Մակ-Վօլ չեղւայ մարդ-քաղաքացի, այլ միայն ստրուկ: Թիւրքիան, թէև ներկայացնում է աստուածպետական մի ռէժիմ, ուր հրամայողը կրօնական օրէնքներն են, աւելի բարձր ու հզօր քան սուլթանի կամքը, այնուամենայնիւ եղել են շատ դէպքեր՝ երբ նա տեղի է տւել ուժեղ պետութիւնների պահանջների առաջ: Այդպէս եղաւ վերջին Փրանս-թիւրքական ընդհարումի ժամանակ: Մեր յոյսը, շարունակում է Մակ-Վօլ, երեք ազատամիտ պետութիւններն են, Փրանսիան, Անգլիան և Իտալիան, որոնք մղւած հանրային կարծիքից պիտի ջանան լուծել Արևելքի մէջ առկալս մնացած խնդիրները, հակառակ այն եսամոլ ու միանգամայն յետադէմ քաղաքականութեան, որ ունին Գերմանիան ու Թուսաստանը: Մենք պիտի ապստամբենք մի առանձին ցասումով միանգամայն գարշելի այն ընթացքի դէմ, որ բռնած է Արևելքի գործերում Գերմանիայի թագաւորը, Վիլհէլմ II (Բուռն ծափահարութիւններ): Այդ ընթացքը առաւել ևս պահտարակելի է այն պատճառով, որ Վիլհէլմ կայսր հսկում է Արդիւ Համիդի կեանքի վրայ, որպէս մի մարդակեր, որը պահպանում է իր կալանաւորին՝ նրան աւելի անորժակով լափելու համար, երբ բաւականաչափ կը գերանայ (քրքիլ):

Ապա ուրիշ խօսքեր էլ է ասում կանոնիկոս Մակ-Վօլ, որոնք կենդանի շահագրգռում են հանդիսականներին: Նա վճռականապէս յայտարարում է, որ անգլիական կառավարութիւնը տրամադիր ու պատրաստ է ազդու կերպով միջամտել Արևելքում, եթէ Փրանսիան աջակցէ նրան: Մեծ Բրիտանիայում, ասում է հռետորը, ստեղծւել է հանրային կարծիքի մի հսկայական հոսանք. 200-ից աւելի միթինգներ են տեղի ունեցել, որոնցից շատերն ինքն անձամբ մասնակից է եղել:

Եւրոպական կօնտրոլից դուրս Մակ-Վօլ չէ տեսնում ապահովութիւն տաճկահպատակ քրիստոնեայ ժողովուրդների համար:

Խօսում են այնուհետև մի շարք պատգամաւորներ՝

Էտկին, անգլո-Ֆայկական ընկերութեան քարտուղարը, Պետրո Մաձինի, Բեօքստն, Բօչարդօ: Հերթը հասնում է ժօռէսին:

Ժ ա ն ժ օ ռ է ս որջունում է Փրանսիական, անգլիական, իտալական և բելգիական պատգամաւորներին համաձայնութիւնը՝ հայ և մակեդոնական խնդիրների մէջ և այն միտքն է յայտնում, որ երեք դէմօկրատ ու ազատամիտ երկրների խմբակցութիւնը, այդ զուգաւորումը անգլո-սաքսօն և լատին ցեղերին կազմում է ներկայումս Եւրոպայի գործունէութեան հզօրագոյն ուժերից մինը: Մի նոր երբեակ նիդալակցութիւն: Այդ երեք երկրների — Ֆրանսիայի, իտալիայի ու Անգլիայի միջև — գրեթէ խապառ վերացած են հակառակութեան պատճառները և նրանք ձեռնհաս են ընդհանուր ուժով ու անշահախնդիր միջամտութեամբ լուծում տալու Հայաստանի ու Մակեդոնիայի խնդիրներին:

Ժօռէս նոյնպէս շօշափում է գերմանիայի քաղաքականութիւնը Արևելքում և աղբու ոճով նշաւակում է գերմանական կայսրին, սուլթանի բարոյական աջակցին: Ներկայ շարժումը, եղբայրակում է նա, պիտի շարունակի բոլոր ազատամիտ երկրների մէջ միթինգներում և պարլամենտներում: (Որոտնընդատ ծափահարութիւններ):

Դ է տ ու ը ն է Լ դ ը Կ օ ն ս տ ա ն, շնորհակարութիւն յայտնելով բոլոր երկրների պատգամաւորներին, շեշտելով միթինգի անսովոր աջողութիւնը՝ կարգում է հետևեալ օրակարգը, որ ընդունւում է միաձայն ու բուն ծափահարութիւններով:

- «Յանուն տեղեկարարութեան խղճի, որ նշաւակում է և պիտի շարունակէ նշաւակել սուլթան Արդիւլ Համիդի ոճիւնները,
- «Միջազգային միթինգը, գումարած Մարա Բերնարի թատրօնում, 25 ֆետրուարի 1903,
- «Թախանձում է պետութիւններին՝ վախճան ղնել վերջապէս, Հայաստանի և Մակեդոնիայի կտորածներին, նշանակելով պատասխանատու կառավարիչ և սահմանելով իրական հսկողութիւն»:



Հրապարակային այդ հանդիսաւոր ու փայլուն ցոյցերից յետոյ տեղի է ունենում նոյն օրը երեկոյեան մտերմական ճաշկերոյթ, որի միջոցին այլ և այլ երկրների մեր բարեկամները աւելի ևս մօտենում են իրար և կարծիքներ են փոխանակում — իրենց նպատակին հասնելու համար — գործնական ճանապարհների մասին:

Ահա այն հեռագրի պատճէնը, որ մեր խմբագրութիւնը ուղղել էր միթինգի նախագահին:

Խորին երանտագիտութեան զգացումով «Դրօշակ» խմբագրութիւնը ողջունում է, յանուն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, երկրորդ միջազգային համագործակցութեան, որ գումարած է պաշտպանելու համար երկու ժողովուրդների ամբարջան և ամենատարրական իրաւունքները: Կորցրած լինելով մեր հաւատը դէպի դիմադրութեան բարի կամեցողութիւնը, մենք մեր յոյսը դրել ենք միայն մեր ազգային դիմադրութեան ուժի և քաղաքակրթութեան ազնիւ ներկայացուցիչների աջակցութեան վրայ: Այդ աջակցութիւնը անհրաժեշտ է մեզ մանաւանդ այժմ, երբ մեծ մարդասպանի բնաջնջման գործին գալիս է միանալու մօկօկեան դահիճների դաժան քաղաքականութիւնը, երբ Անատոլիայի մէջ թափած հայկական արեան հոսանքին աւելանում է Անգլիոյ վիպական հայերի արիւնը:

Մենք յոյս ենք տածում, որ մեծանուն հայաստանի երկրորդ միջազգային խորհրդագործողը, ի տես տագնապակց մի վիճակի, պիտի որոշէ ձեռնարկել ընդարձակ ու սիստեմատիկ

պրօպագանդի, որը կարողանար մղել դիպլոմատիային դէպի միջամտութիւն և իսկ վերջապէս երկու հոգևաբք ժողովուրդները բունութեան ճիրաններից»:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՐՈՆ ստացած է՝

Ռուսմանիայի Փօքշան քաղաքի յոնոն ու Կրակ խմբին Ս. Պալքեանի միջոցաւ 27 Քրանք, որ նւիրած են՝ Ս. Պալքեան 5, Գ. Տիգրանանց 5, Օ. Վլաճեան 5, Վ. Մկրտչեան 5, Գ. Տօնապետեան 5, Կ. Բապուճեան 2 Քրանք:

Բալքեանի Կեդր. Կօմիտէի նաշին Փիլիպպէից՝ Պատանիներու «Սօսի-Այծեամ» խմբին 40 Քր. և Գետ քաղաքի «Փետար» խմբին 100 Քրանք, որ նւիրած են՝ Վոսաճ 12 Քր., Ս. ... 12, Մնուկ 22, Ուսումնասէր 5, Շահէն 39 և Աթանիկ 10 Քրանք:

Ռուսմանիայի «Դրամ» խմբին նրկու անգամից 3000 Քր., Մարտիրոսից՝ Ար-ից 6 Քրանք, Բերնից՝ Ս. Գալ 10 Քրանք, Աւ-եանից 10 Քր., Յիւրիկից՝ Ա. Մ-ից 7 Քր., Աւստրիայից՝ Դարվիչից՝ 16 Քր., Բրիւսէլից՝ Միքայից 2 Քր., Կիւվից՝ 122 Քրանք 50 սանտիմ:

Ընդամենը 3350 Քրանք 50 սանտիմ:

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ տեղական (քաղաքի) Կօմիտէն՝

Մաժ Խ. Տիւղի երեկոյցից 52. 77 ուրբի, նոր սերունդ խմբի վիճակախառնից 25, Բաբկէն Սիւնի երեկոյցից 30, Խոնամատար աշակերտ. ընկ. 150, Նուխուց Ս. Ե.-ի միջոցաւ 15, Խոնամատար աշակերտ. ընկ. 50, Յուլիոն Ս. Ե.-ի միջոցաւ 45, Կարմիր Զուրի ենթակօմիտ. (մայիս-յունիս-յուլիս) 55, № 144 անգամաւորութեան թերթից 53. 80: Հետեւեալ խմբերից՝ Յորդանան 11. 20, Թառնթար 10. 50, Խայթ և Երկունք (ապրիլ) 56. 83, Դերոյեան (փետր.-մարտ) 65. 45, Ապտաժ (մինչև մայիս) 18, Զախկալ-Դարա քաղաքի Եոննդ 15, Մէրէմճեան (մինչև ապրիլ) 7, նոր սերունդ 8, Մաժ (մինչև ապրիլ) 24, Պարտէզ 16, Դերոյեան (ապրիլ) 27. 50, Դերոյեան (մայիս-յունիս) 60, նոր սերունդ 12, Կայծ և Երկունք 14. 70, Յորդանան 7. 50, ժողով (օգոստոս) 9. 50, Մոճակ (օգոստոս) 27, Դերոյեան (յուլիս-օգոստ.) 50, Մոճակ (սեպտ.) 30, Հրատ (սեպտ.) 8. 70, Հայ (սեպտեմբեր-հոկտեմբեր) 17. 80: Նւէր Կարմիր Զուրից՝ 28. 85 ուրբի: Գումար 958 ուրբի. 25 կօպէկ:

ՌՈՒՄԱՆԻԱ՝

ՔՕՍՄԱՆԱՅԻ Ծնթակօմիտէն ստացնր է՝ խմբերէ՝ Դեւեան 82 Քրանք, Չոքս-գանձ 69, Աղուարդ 79, Դեւնդեան 70, Սերոբ 54, Ժաղիկ 43, Կարմիր խաշ 24: Համակողմներէ՝ Մ. Ս. Բ. 20, Տէպարակ 8, Պ. Խ. 8, Ե. Տ. 6. Ն. 8. 6: Գումար 489 Քրանք:

ՎԻՅԱՊՈՒՍ ստացած է՝

Հրմիր 20 դահեկան, Կամք 50, Կացին 5, Կայէն 7. 50, Հիտրա 20, Կամք 20, Հիտրա 10, Կացին 5, Կամք 40, Փարսատ 10 դահ.: Գումար 187 դահեկան 50 փարա:

Ա Ձ Դ

Հատով «Դրօշակ» ստացողներից խնդրում ենք առաջիկայ Յունարից վերանորոգել իրենց հասցէները:

Այն բոլոր անձանց, որոնք չեն կրկնիլ իրենց պահանջը «Դրօշակ» ստանալու մասին, Յունարից սկսած չպիտի ուղարկել թերթը:

ԽՄԲԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ «ԴՐՕՇԱԿ»

Խմբագրութեան գիմել հետևեալ հասցէով՝
Rédaction du «Droschak», Genève (Suisse)